

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Առյժ աշխատանքի արտոնագրված է «Ստեղծագործական համայնքերը  
ոչ առևտրային իրավասուրյան 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես:

պատճեններ և տպածել կյուր ցանկացած ձևաչափով կոմ կրիպոյ


ձևափոխել կոմ օրուազործել տոկոս կյուր տակեցնելու համար նոր

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material





1  
503

1878



Հ Ա Յ Ո Ւ Տ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՃԻՆ ԴԱՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

308.

ՏՕՐԵՎԱՅ

Մ ՄԱՍՄՈՒՐԵՎԱՆ  
~~ՀԱՅՈՒԹԻՒՆ~~

ՀԱՅՈՒ Բ.



ՀԱՅՈՒԹԻՒՆ





$g(v)$

U-22



30 MAY 2011

27 JUN 2005

## ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Digitized by srujanika@gmail.com

卷之三

Philosophy

10.  $\frac{1}{2} \times 10^3 = 500$   $\rightarrow$   $500 - 100 = 400$

ՀՅՈՒՄԵԼԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ . Խը ականք . —  
Խնչպէս արդին տեսանք՝ Հոռմ զբեթէ բոլոր  
հին աշխարհի տիրեր էր . Խը իշխանութեան  
առակն էին Եւրոպայի արքմանեան ու Հարաւային  
երկիրները , Խոյնարձ Ասիս արքմանեան և Ափ-  
րիկի Տիւսխային կողմերը : Թէ և այնարձ կ'ե-  
րեւէր թէ Հոռմ հին քաղաքակրթութեան առ-  
ևն քաղաք կատարը Համեր էր , թէ և ուստինք  
և արուեստներ ծագեկը էին , թէ և Հոռմ ական  
լեզուն ու օրենքն շատ մեծաշէն քաղաքներու

մէջ մասեր էին, յակայն այս ուժնեն արտաքին  
մայլ էին, այս շքեզ պետով թեան հիմն սե-  
կադան էր և սկսո՞ւ անկանոն նշանները քիչ ու-  
ստանէն երեսներ ե բան : Արդէն Հաստրակապետու-  
թեան ժամանակ՝ Հռոմի ժողովրդեան վարքն ու-  
ստարդ սովորութիւնները կ'խանդարին, իր ա-  
րիական բնաւորութիւնը կ'կորու ի և ամեն տեղ  
պերճութիւն ու մաշտաժիւն կ'առարածուին : Պար-  
զասիրութիւնն ու անկեղծութիւնն կ'յաջարդեն  
Հռոմութիւն ու նեհցանաւութիւն : Գիշ քիչ զօ-  
րոց մէջ այ այս շարիքը կ'մանեն, և ամեն ուղ-  
անկարգութիւնը կ'երեխ : Կայսերական թագոր  
դինութիւններու ձեռքը խաղալիկ մ'էր, և ամենէն  
շատ վճարող զօրապեար զայն կ'զնէր : Հետե-  
ւազէն անազական էին արինիաներ կութաներ :  
Անիշխանութիւնն այն աստիճանի հասեր էր որ  
մի և նոյն ժամանակ երեսուն զօրապեաներ կայ-  
սերական աթոռն ելնելու կ'յանային : Այս ներ-  
քին կութաներն ժողովրդոց վրայ ծանր ծանր  
հարկեր դնելու առիթ կ'լինէին : Աւոտի մէկ  
կողմէ անիշխանութիւնը, միւս կորյուն բոհակա-  
լութիւնն առսկալի աղէ տից դուռ մը բանալով  
ան բութիւնն յետին թշուառութեան մէջ ձգեր  
էին : Գիւղեր ու աղարակներ անրեակ կ'մնային,  
և երկերը զրեթէ մշակող չկար : Կայտած առ-  
տեր մարդիկ արօց տակ կ'հղմուէին, իսկ խո-

\* Գիշե պատմութեան նախարար երկու մասերու մէջ շա-  
գերանու մը բախի մը պատմութերու համար գրաբառ ներ-  
փորեածեցի, ուսկզու ուղարկութիւնը ուղարկեր բաներին այս ձեռք-  
չփառ կորոշ վարդեցի անձնութիւնը պատճեցի սովորական աշխար-  
հին հոլովա գույնը :

1-30342

1994-21  
ՅԱՍՏԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՐԱՔ

ամեն ամեն աշխատանք մէկդի կ'թողուր և կը պահանջէր որ տիրող կայսրն իրեն ձրի հաց բաշխէ : Բայց այս խառնակ զինակը չէր կրնար երկար տեսել : Երբոր զիւղացին արօրը թողտ ց, բանորն աշխատութիւնն , կայսրներն ալ ստակ չդտան որ իրենց հաճոյքը հոգան ու ժողովուրզը կերակրեն , այնպէս որ չքաւորութիւնն և թշտառութիւնն ընդհանուր զարձան բոլոր պետութեան մէջ :

Այս անկարգութեան ուրիշ պատճառներ ալ կային : Այս է , իւսուլուսունիւնն որ ամեն բարդական և կրծնական զդացումները խանգարեր էր , և գերունիւնն , որ մարզիկն անրանի կարգը դասեր էր : Հիները՝ ձեռքի աշխատանքն անդունիւնք ամեն կարեռ զբաղմունք սարու կներու յանձներ էին : Սորու կներն էին հողադործ , զամառական , արուեստանոր : Բայց անոնց ձեռոց արուեստ , առուտոր , հարստարութիւնն երբեք չեն կրնար զարգանալ . հետեասպէս Հռոմեական մէջ ալ բոլոր այս բաները ետ մնացեր էին : Իր մօտալուս կործանման այս պատճառներէն զամանակաւոր թշնամիներ ալ ուներ . մին ներքին որ իր կրօնին կ'սպառնար , այս էր՝ +ըստանիւնիւնիւնը , միւսն արտաքին որ իր երկիրներուն ուշք ուներ , այսինքն բարբարաները :

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ . Եր յաշնանէը . — Հռոմեական պետութիւնն իր ամենէ փայլուն զինակին մէջն էր՝ երբոր քրիստոնէութիւնը կ'երեսի . Ե միզրան ակար և անզօր էր և իր հիմնադրին պէտ մար-

զիկներէ անարդանք կ'ընդունէր : Մարգիօրէն մասձելով՝ այնպէս կ'երեւէր թէ ապագայ շունէր, մանաւանդ երբոր բազդատուէր հռոմէական պետութեան հետ որ մշտատե կ'կարծուէր : Սակայն շատ շանցնիք՝ ամեն երկիր կ'մանէ քրիստոնէութիւնն և ընկերութեան ամեն դասի մարդերու մէջ : Կուապտչու աշխարհը կ'վիրաւորի այս նոր կրօնն իմանալով՝ որ իր սուտ առոտածները կործանել և մարդկութեան նոր կեանք տայլու նշաններով կ'երեւէր : Աւսահ հալածանքը կ'սկսի : Քրիստոնէութիւնն ոչ միայն կ'դիմանայ այլ առելի ոյժ կ'ստանայ այս նոր առաջակութենէ, և մինչդեռ հեթանոսութիւնն շուտ շուտ իր կործանման կ'զիմէր, ընդ հակառակն քրիստոնէութիւնն օրէ օր կ'տարածուէր ու կ'զօրանար : Աւերջապէս՝ երեք զար անգագար ոգորչելն եաւ : Աւելարմոր յաղթանակեց : Կոստնութեան կայսրը տեսնելով որ կուապաշտութեան օրն անցած է, քրիստոնէութիւնն ընդունեց : Այս նոր կրօնն պետութեան կրօնն եղաւ :

Եթէ զե՞տէ : — Չորրորդ գարուն վերջերը քրիստոնէական եկեղեցին արդէն փախուեր էր : Իր առաքելական ժամանակներուն ոչ պարզ կազմութիւնն անելը և ոչ բարյական զարուցք կեանքը : Առաքելց առեն կենդանի էր հաւատոցն ի քրիստոս, որ ամեն անհատական և ընկերութիւն կենաց կեդրան ու աշբերն էր : Այս ազգուզացմանը է որ բոլոր քրիստոնէուց կենդանի մարմին մը, կենդանի հոգի մը կ'կազմին : Եշեղեցին քրիստոնէից ըրութիւնն էր, որ մզրութեան և եղբայրական սիրոյ մզրոյ հիմուան էր : Ամեն մարդ Աստուծոյ ընորհան պարզեներով եկեղեցւոյն կամ միարանութեան կ'ծառա-

մէր։ Եշիցաւնու որ նաև եղիստուսաւն+ կ'կոչուենքն, բայց Հաւասացելոց կոզմէ կ'ընօրուենքն։ Իրենց պաշտօնին եր բարոյականութեան և եկեղեցւոյն հոգեոր զործերու ժամանել։ Այսին նաև ուշիւսիւն+ որ զոյից տնօնաւութեան հոգ կ'առնենքն։ Առաջ յասուկ յահանաւերը շերոյին, առենքը զործոն անդաներ են Եկեղեցւոյ ժողովներուն մէջ, որ փոփոխակի ազօմք, շարական, ուսոր միք, կ'կարգույին, որոնք տերուական ընթիրուած և ուրմասիրական մազերավ (ազակ) կ'ընթային։ Անկոյն երրորդ քրիստոնեութեան օրէ որ տարածուեցաւ Եղբայրական հաւասարութեան ալ խանգարեցաւ և Եկեղեցին թէ որ պատմանկիր և թէ կազմութեան կողմէ փոփոխութեանուր կը եց։ Երրիցունիր քիչ քիչ մասնաւոր զառ մը կազմացին իշլու անուանքն և իրենց հօտեն վեր դիբք մը բանեն թին։ Ավանդութեանը որ երկոր տանեն Եղիստուսաներու։ Հաւասարը և թիւ, ոյս մերջիններուն հպատակեցան։ Գաւառի կամ պիճուակի մ'եւզբակարուն ու+Եղիստուսի կամ Տերուուլութիւնու անուն առաւ։ Առանցք վեր դասուեցան Երրուանդէնի, Անապարփրաց, Ա. Պալայ և Համբեայինապատենին՝ որ պատշէածին անուն առնեն։ Այսպէս քահանաւերուն՝ որ առնեն մը ժողովուրդին կ'ընտրուենք և առհմանագրական կանոններու։ Համեմատ կ'զարուենքն՝ ազնուազետական զառ մը կազմացին և յասուկ նույնացնուածութիւնն մ'ունեցան։ — Արտասնդիմնոսի ուշերէն ակնեալ կղերն հոգեոր արտօնութեանց հետ աշխարհոյինն արտօնուածիններ ալ միացուց, «որ միջին զարու մէջ իր աշխարհական իշխանութեան հիմք եղան։

Բարբարոսանեւ . — Բարբարոսաներն երեք տարբեր ցեղել են։

—) Եւշառացի Բարբարոսաներ, որոց մէջ են Գերմանացի, Գերմանիոյ և Սկանավինավիայի մէջ, Ալենեւն այժմեան Մուսաստանի մէջ։ — Գերմանացիք մէջ զեր կ'խաղան հոգուական պետութեան կարծանական և նոր ազգերու կազմաւա-

թեան մէջ : Իրենց զլիսուոր ժողովուրդներն էին . արևելեան կողմը , Կոբացի + որ Կարպատ՝ լեռներու և Սև ծովուն երկայնքը կ'ընակ ! ին . Հյուսիսային դին՝ Բաւրչինեանք , Վահանաներն . Լոմբարդացի + և Սամանները որ Պալմիրկ ծովուն երկայնքը կ'գտնու էին . Հարստ ային դին՝ Ալարաններն և Սուեն + վերին Հռենոսի և Դանու րի կողմերը . արևմտեան դին՝ Ֆրանչիներն ստորին Հռենոսի կողմը :

Բ) Ասէացէ Բարբարոսներ , որ Ասիոյ հիւսիսային կողմէն կ'զային և թէ Մանկուներուն թէ Թաթարներուն ցեղակից էին : Ասոց մէջ զլիսուոր ժողովուրդներն էին Հանք , Մաճառք , Թարբարները , Թարբառները և այլն :

Դ) Աէրէիցէ Բարբարոսներ , որոց մէջ կ'զբանու էին Մուրէիսենցի + և Աբոբացի + : Այս վերջիններն՝ թէ ընաւորութեամբ և թէ երկրին հանգամանքով իրօք Ափրիկէի կ'պատկանին քան թէ Ասիոյ :

Բարբարոս ժողովրդոց բարեւ . — Այս ժողովրդոց զատ զատ խումբն իր որոշ քննուորութիւնն ունէր : Ասէացէ Բարբարոսներն վրանարնակ էին և իրենց առարին բերքով կ'ասպեկին . միշտ ձիու վրայ կ'ու տնտեկին , և իրենց կիններն ու զաւակները սայրերով անոնց կ'հետեւին : Քաղաքակրթութեան անհաշտ թշնամի լինելով՝ իրենց ճամբառն վրայ ինչ որ զանելին կ'առերէին : — Աէրէիցէ Բարբարոսներն շատ բաներու մէջ արևելյի բարբարոսներու . կ'նմանէին , սակայն անոնք առելի տրամադիր էին քաղաքակրթութե-

լու քան թէ միւսները : — Ալւաշը բնառու-  
րո թիւնը կէս մը Ասիոյ և կէս մը Գերմանիոյ  
ժաղովրդոցը կ'նմաներ : — Գերմանացիք բարբա-  
րուս թեան թէ լաւ հանգամանքն ունէին և թէ  
մոլո թիւնները . իրաւ պարզատեր , հիւրատեր ,  
արխասիրաւ էին և ազատատեր , բայց միանցա-  
մայն անգութ , անժումկալ և կոչու ու բուռն  
կրից ենթակայ : Աակայն Գերմանացիք Ասիոյ  
բարբարուներէն կ'զանազանեին : Արանարնակ  
չէին : Քիչ շատ հաստատուն բնակարաններ  
ունեին և երկիրն անզամ կ'մշակեին : Երբեմն  
միայն իրենց բնիկ հողէն կ'ելնէին և շատ կը  
սիրեին արշաւաններ բնել : Ուստի կէս մը միա-  
նարնակ և կէս մը մնայուն կեանք կ'վարեին :  
Որովհետեւ հաստատ բնակութիւններն և երկ-  
րացործութիւններ քաղաքակրթութեան մէջ ա-  
ռաջին քայլերը կ'սեպոյին՝ Գերմաններն ալ այն-  
քան բարբարոս չէին երեեր սրբան Ասիացիք  
և թէ պէտ աերիչ յատկութիւններ ունեին  
բայց բարձր զգացումներէ ոլ զորկ չէին :  
Աերջապէտ Գերմաններն կերոյ մը քաղաքական  
կազմութիւնն ալ ունեին : Կորագանչիւր ցեղ իր  
ազգային ժաղովն ունէր և իր պետը կամ նա-  
խառուք : Թաղառորն ալ իրեն յատկ բնկեր-  
ներն ուներ որ երգում կ'ընէին հաւատարիմ  
մնայ , և ասոնք իր հաստարչէները կ'կոշուեին :  
Հաստարչէներն իրենց պետին սեղանը կ'նսու-  
ին : անոր պատուառ Ծիկնասպահներն էին և  
հետք պատերազմի կ'երթային : Այեան ալ իր  
կողմէ հաւատարիմները կ'սպաշտակեր և անոր  
չէնք ու ձիեր կ'պարզեեր :

Հոռովածիան պետական գեմբարսուաց յարչաւ  
չուհերը . — Երբ Հռոմի զօրութիւնն սկսաւ  
տկարանալ , այլ և այլ վայրագ հրոսակեներ ,  
որ հաղիւ թէ զադոեր էին մինչև այն առեն ,  
միասին կ'շարժին , ամեն կողմէ սահմանադ լուխ-  
ները կ'արշաւեն և երկրորդ գարե ՚ի վեր՝ ոչ  
հանգիստ և ոչ շունչ կ'տան կայսրներուն :  
Հռոմի իր քաջավարժ բանակներու շնորհիւ՝ ան-  
մարդ բարբարոսները՝ մամանակ մը՝ վանեց .  
բայց որովհետեւ իր զօրութիւնն հեազհետէ կը  
տկարանար բարբարոսներու արշաւանքն ալ կը  
մօտենար : Երբոր Հռոմայեցի զինուորները վա-  
տօրէն անօպաշտպան ձգեցին սահմանադ լուխե-  
րը , ամեն թումբ ինքնին փլաւ : Կայսրները  
տեսնելով որ կարելի չէ այն սուկալի վիրազ-  
ներն վատացած Հռոմայեցոց ձեռօք վանել՝  
կ'ստիպուին նոյն իսկ բարբարոսներու օգնու-  
թեան գիմել : Ուստի անոնցմէ զինուոր կ'գրեն  
իրեւ ռազմուից , այսինքն իրեւ օգնուկան զօրք +  
և այսպէս սուեն մը կ'յաջողին արշաւանքն ար-  
դիլել բարբարոս բարբարոսի գէմ հանելով :  
Երբ մի անգամ ասոնք բանակները մտան , որ  
պետութեան սյաշտոպան վահանեները դարձան ,  
շուտով կայսերական դահին ալ տիրացան : Եր-  
բորդ գարեն սկսեալ շատ անդամ բարբարոս-  
ներ ամսուր կ'ելնեն , բոլոր պաշտօնները կ'զրա-  
ւեն և քիչ ատենէն պետութիւնն ալ իրենց մէ չ  
կ'բաժնեն :

Ա ակնան նին պատմութեան . — Հիմ պատմու-  
թիւնը Հռոմէ ական սկստութեան հետ կ'ըննայ :

Անոր կործանումը բոլոր հին աշխարհի աղ կործանումն է : Արգեն տեսանք թե այս կործանման պատճառներն հին քաղաքակրթութեան յարակից մոլութիւններն էին : Աստի հեթանոս աշխարհի անկումն անխուսելի էր : Սակայն քրիստոնեութիւնն ու բարբարոսներն այս անկումը փոխացուցին : Հին քաղաքակրթութեան կործանմամբ պահ մը վախ ծագեցաւ որ մարդկութիւնը դեպ ՚ի բարբարոսութիւն չդիմէ . բայց քրիստոնեութեան և բարբարոսց պաշտօնը միայն աւերել ու կործանել չէր : Իրաւ է ՚ի սկզբան այնպէս երեցաւ որ այս բարբարոսները միայն աւերակ կ'թողոն չորս դին : Բայց ինչ որ կ'պատահի երբ վայրենի ժողովուրդ մը քաղաքակրթիթ ժողովուրդ մը կ'նուածէ , նոյնը պատահեցաւ . յաղթուողներն իրենց քաղաքակրթութեամբ նուանեցին յաղթականները : Մի նոր ընկերութիւն երևան եկաւ երբ բարբարոսները քրիստոնեութեան և հռոմեան պետութեան հետ յարակեցան . և մինչդեռ հին կամ կուազաշտ աշխարհն անհետ կը լինէր , նոր կամ քրիստոնեայ աշխարհը կ'կառմուէր :

Նոր աշխարհի ստեղծիչ մասոնքը կը նան համարուիլ հին +ազ+արթուրունիւնը , +ըլուտունիւնը և բարբարոսները : Ասոնք պետութեան ստրկամիտ ժողովրդոց աւելի ոյժ ու անկախութեան ոգի տուին : Քրիստոնեութիւնն ընկերութեան բարոյական զգացումները պիտի նուրոգէր : Աերջապէս հին քաղաքակրթութիւնը մոնելու առեն իրեն յաջորդող նոր աշխար-

Հին պիտի կտակէր ամբողջ զանձ մը , որ առաւեստի և գրականութեան հրաշակերտներ , բարոյական և իմաստասիրական ընտիր զործեր , և մանաւանդ քարտքական կազմակերպութեան օրինակներ էին :

Միջին դարու պատմութիւնը կրնայ երեք շրջանի բաժնուիլ . Բաբելոնաց Աթան , Դ գարեն մինչև Թ դարը , այսինքն արշաւանքէն մինչև Մեծն Կարոլոսի (Կարլմայն) պետութեան բաժանումը . — Ասովոչան շրջան , Թ գարեն մինչև ԺԴ դարը , այսինքն Խաչակիրներու վերջը . — Ասովոչան իշխանութեան շրջանին լըսումը , որ ԺԴ և ԺԵ դարերը կ'պարունակէ :

### ԱՐԴԱՐԱԿԱՑ ԾՐՁԱՆ

(376—888)

Բաբելոնաց շրջանն մեծ արշաւանքէն մինչև Մեծն Կարոլոսի պետութեան բաժանումը կը հասնի , այսինքն Դ դարու վերջէն մինչև 888 . Այս շրջանին գլխաւոր դեպքերն են բարբարոսաց արշաւանքը , այս պատճառաւ արշանաց Աթան կամ Բաբելոնաց շրջան կ'կոչուի անխափիք : Այս շրջանը կ'պարտնակէ նոր ժողովուրդներու ծագման և առաջին զարգացման պարագաները : — Աւասիկ գլխաւոր դեպքերը .

—) Հասովտական պետութիւնը վերջապէս բռլուզովին կ'քայքայի և հռոմէական ընկերութիւնը գերմանականութեան և քրիստոնէութեան ներդորժութեամբ կ'այլափոխի :

Բ) Բարբարոսսէրը պետութիւնն երիբները ի՞նը չառնեն, կ'բաժնեն և անոնց մէջ կ'հաստատուին : Երկու նշանառոր յարձակումներ կ'ընեն . գերմանական արշակունի, զլիառորապէս Գերմանացի ժողովրդոց զործը, որ հիս սիսէն զալով բռլոր եւրոպան կ'ծածկեն . արաբուն արշակուն, որ հարաւէն զալով՝ Ասիոյ արևմտեան և Աֆրիկէի հիս սիսացին կալմերը կ'աշբածուի : Գերմանական արշակունն Պ և Ե գարուն տեղի կ'ունենայ, արաբական արշակունն Լ և Ը զարոն : Այս երկու առաջատակող ժողովուրդներն, որ Միջերկրական ծավալի իրարմէ զատած էին, Արևելքն զեպ Արևմտա կ'աշբածուին : Ճիպրալիմարի նեղուցին մօս իրարու հանդիսելով կ'զարնուին : Արաբացիք Սպանիոյ վրայ կ'յարձակին, կ'վանեն Գերմանները մինչև պիրենեան լեռներու ստորատը և թերակզբայն կ'ամբանան մինչև անդամ Պիրենեան լեռներէն անդին անցնելու փորձ կ'փորձեն՝ բայց ետ կ'մզուին : — Այս կրկին արշակունքն ետք՝ ժաղովուրդները կ'գաղարին և աէրութիւններ կ'կազմուին : Գերմանական արշակունքը բազմաթիւ տէրութիւններ կ'հաստառէ, որ հետզետէ կ'փոխուին կամ իրարու հետ կ'խառնուին . այսպէս Ֆրանկներուն պետութիւնը քիչ քիչ կ'ընդարձակի գերմանական ժողովրդոց մէջ և Մեծն Կարուսի օրով դրեթէ բռլորն ալ իր իշխանութեան

տակ կ'ամփոփի : Բայց այս մեծ մարդուն իշխառնութենէ ետեւ՝ իր տէրութիւնը կ'խորտակի և նոր թուական մը կ'սկսի : — Արարական արշաւանքն աղ նախ մէկ հատ ընդարձակ տէրութիւն կ'հաստատէ , բայց վերջէն կ'քայլայի :

Դ) Քը բարու ելիշեցն իր իշխանութիւնը բարբարոս ժողովրդոց վրայ կ'տարածէ : Իր եկեղեցական կազմութիւնը կ'զարդանայ պարագաներուն յարմարելով : Բայց նոր կրօն մը՝ Մահմետականութեանը՝ Արարացոց մէջ կ'ծագի և քրիստոնէութեան կ'սպառնայ , այնպէս որ Գերմանացիք և Արարացիք , որ արդէն այնքան հայուակ էին բնաւորութեամբ , երկու ներհակ կրօնից պաշտպան կ'զառնան :

Ե) Այս նախորդ գէպքերէն երկու նոր աշխարհներ կ'հիմնուին , հին աշխարհի բեկորներու վրայ . մին՝ +րիստոնեայ աշխարհնը , որ գեռզերմանական կամ չոռմէական կ'անուանուի , զերմանական կամ չոռմէական ժողովրդոց գերիշխանութեան համեմատ . — միւսը՝ Հանմէուկան կամ արաբական աշխարհն : Այս երկու աշխարհներն , որ զիրքով , բարուք և կրօնքով իրարուներհակ էին , բնապէս թշնամի պիտի դառնային . և իրենց պայքարը միջին դարու նշանաւոր գէպքերէն մին է :

ՆԵՐԱԿԱՆ Բ.

Պատմագուշ = բարեկան ։ Գուշը Արևութեան յայրածնի առաջնորդ ։

(376—476)

ԴԵՐԱՎՈՐԱԿԱՆ ԱՐԾԸՆՈՒԹ ։ Ա. վ. վ. վ. ։ —  
Չորրորդ զարուն վեր օերը՝ Հոնք՝ որ Ասիոյ  
Հիւսիսային կողմերը (Սկիւթիս) կ'ընալէին,  
Եւ բազա արշաւեցին։ Այն ատեհները գ. թ. աշխ.  
Ռուսատանի հարաւակողմը մեծ աէրութիւն մը  
տնէին։ Ասմք զերմանական ցեղէ էին, Սկան-  
ամինավիայէն ի ֆաժ, ուր մինչեւ այսօր իրենց ա-  
նունը կ'պահուի գ. թ. լ. ա. զատանին մ. ջ.։ Գու-  
թացիք այս թերակողին ելնելով բարեկանէն (Տներեր) զետին եզերը հաստատեցան և եր-  
կու մաս բաժնուեցան։ Գետին արևելիան կող-  
մը բնակողները Աստրութ-Շ. կոչուեցան, իսկ ա-  
րևմտեան կողմը բնակողները՝ Ա. վ. վ. վ. ։

Հոնք Գոյացոց աէրութեան գէմ ենին լով  
զայն կործ անեցին։ Աստրոզովք անոնց հնազան-  
գեցան։ Ա. իսկ զովք Դանութի կողմը փախան և  
իրենց Ա. վ. վ. լ. եպիսկոպոսին ձեռօք Ա. ա. վ.  
կայսրէն բնակելու հող խնդրեցին։ Ա. ա. վ. ս  
նոնց խնդրը կատարեց, պայման դնելով որ  
արքայուն աղանդն ընդունին։ Բայց քիչ ատե-  
նէն Ա. իսիզովք՝ հռուցեցի զօրականներուն  
իրաւա վարժութէն գեղուշելով՝ ապառամբեցան


Վալեսի դէմ, որ պատերազմին մէջ մեռաւ, և  
Ախիգոթք մինչև Ադրիանուպօլիս հասան։  
Մեծն թէոգոս անոնց դէմ ելաւ, յաղթեց և  
իր կենդանութեան ժամանակ ըարբարոսներն  
հանդարս կեցան։

Կայսրութեան բաժանումը. — (395) Երբ Մեծն  
թէոգոս մեռաւ, կայսրութիւնն իր երկու որ-  
դւոց մէջ բաժնուեցաւ։ Արէաքէնս Արեւելքն ա-  
ռաւ և իր աթոռը կ. Պօլիս հաստատեց։ Ա-  
նոքէնս Արեմուտիքը ստացաւ և իր աթոռը Մէ-  
լն քաղաքը դրաւ։ Այս երկու կայսրներն ալ  
անկարող և արկարդիկ էին։ Կառավարելու  
արուեստը չդիտէին։ ուստի իշխանութիւնն ի-  
րենց պաշտօնելից ձեռքը թողոցին։ որոց մէջ  
ամենէ նշանաւորն էր Հանդաւ Սուլէնն, Անա-  
րիսի գաստիաբակը։ Սահլիկոն՝ բարբարոսները  
զսուեց, երբեմն զինու զօրութեամբ՝ երբեմն նեն-  
գութեամբ։ Հոռմէական հին քաղաքականու-  
թեան հետեւով բարբարոսներու մէջ երկուս-  
ուակութիւն կ'ձգէր և իրարու դէմ կ'հանէր։  
Այսպէս կ'յաւսար որ երկու կայսրութիւններն  
ալ սիստի կարենայ սյաշտագնել, Մեծն թէո-  
գոսին պէս։ Դժբաղդաբար՝ Միլանի ու կ. Պօլ-  
ոսի արքունիքն անոր չէին օգներ և իրենց զօրու-  
պեաներուն յաղթութեանց վրայ կ'նախանձէին։

Աւրէիսէ աշշանան յիշուլու. — Ախիգոթք  
վերստին զլու իս քաշեցին և իտալիա արշուե-  
ցին՝ իրենց Աւոքէնս թագու որին առաջնարդու-  
թեամբը։ Վասն Անոլիսս Միլանէն խոյս տա-

լով Արմենիա զնաց և իր աթոռն այն տեղ հաս-  
տառեց : Քիչ առենքնէն Սահլիկոն՝ որ բարբա-  
րոսներու գէմ նշանաւոր յաղթութիւններ տա-  
րեր էր, պալատականաց նախանձն այնքան դրո-  
գուց որ զինք ամրաստանեցին որպէս թէ թա-  
զադորութեան աշք ունէր : Ոնորիոս սպաննել  
տուաւ այս քաջ զօրավարն որ քանի քանի ան-  
դամ իր տէրութիւնն ազատեր էր : Այն ատեն  
Հռոմայեցիք Ոնորիոսի մարձկան դոթացի զի-  
նուորները, կիներն ու աղաքը Պարտեցին : Այս  
կոսորածէն փախչող Գոմացիք Ալարիկոսին քո-  
վու զացին և վրէժ խնդրեցին : Ալարիկոս Հռոմի  
վրայ քալեց և զայն առաւ : Բոլոր զօրքը մեց  
օր շարունակ թալլեց կողոպակեց : Հռոմին, որ  
աշխարհի բոլոր զանձերը դրաւեր դիզեր էր,  
աւարի տուաւ : Ալարիկոս այնուհետեւ Խալիֆոյ  
հարաւային կողմերը քաշուեցաւ իր զօրքերով :  
Ափրիկէ անցնելու միաբ ունէր : Երբ մեռաւ,  
Վիսիդոնք զետի մ'ընթացքը զարձոցին և փոս  
մի փորելով Ալարիկոսի մարմինն անոր մէջ  
թաղելէն ետեւ, զետը նորէն իր առջի տեղէն  
վազցոցին, այս զործին աշխատող բանուորներն  
ալ սպաննեցին, որպէս զի կազմնի մնայ զե-  
րեկանին տեղը և Հռոմայեցիք զայն բանալով  
Ալարիկոսի մարմինը չնախատեն :

Վեհաբիւ+ Գալլիոյ Հաբուակովը վ'հասպառութիւն .  
— Գոմացիք՝ Ալարիկոսի յաջորդ կորդեցին Ա-  
ռա-լի եղբայրը : Այս իշխանը Հռոմէական կայ-  
սրութիւնը կարծ անել և անոր առերակաց վրայ  
դոթական նոր առ բանաւ. մի հաստատել կ'ու-



զէր թէպէտ , բայց այս դործին դժուարութիւնը տեսնելով՝ միտքը փոխեց և Հռոմը պաշտպանելու ու Ռուբրոսի նեցուկ լինելու փառքը բաւական սեպեց : Ուստի զնաց կայսրէն Գալլիոյ Հարաւային կողմբէն քանի մը դաւառ խնդրեց և խնդիրն ընդունուելուն՝ զօրաւոր թագաւորութիւնն մը հիմնեց :

Այս Վիսիդոթաց թագաւորութիւնն երեք զար տեսց : Իրենց իշխանութիւնն Լուսո գետէն մինչև Պիրէնեան լեռները կ'համեր : Մայրագագրը Տէլովա (Թուլող) էր : Սուեւին ու Սպանիոյ մէկ մասը նուածեցին , բայց չկրցան Ֆրանկներուն ալ յաղթել : Առնց թագաւորը Գլուխ և յաջորդները մինչև Պիրէնեան լեռներու ետեր քշեցին Վիսիդոթները : Այսուհետեւ Գոթացիք իրենց իշխանութիւնը Սպանիա փոխադրեցին և Տուերա քաղաքը զրին իրենց ամուր : Վիսիդոթը արիստեանը էին . բայց Զգարուն վեր ֆերրը կաթոլիկութեան զարձան , որու ամենէ չերմ պաշտպաններն եղան : Աինչեւ անգամ հոռէտական օրէնքն ու կարգագրութիւններն ընդունեցան և բոլորովին հոռմատելու ժամանակ ժաղովուրդ մը զարձան :

Բնորդութանց աշխ և այլ լուծիւնները . — Այս միջացին որ Վիսիդոթք Գալլիոյ մէջ կ'հատակառուէին , ինիւր կիրակար , Առեւոր և Ամերալք Հռոմու գետեն կ'անցնէին : Բէրտիւնեանք քիչ մասեն Արիդիւն—Հռոմուսի վրայ կեցան : Առեւոր և Ամերալք՝ Գալլիան առաջական կելեն ետեւ : Սպանիան զային հատակառուեցան : Առեւոր՝ Գալլիանցի մէջ , Ամերալք այն քառական որ վերջէն իրենց անունով Ամերալուսով կամ Անդրւուսի կոշտու-

Հյու : ԿԵՐՆ ԹՔՆՈՅԻՆ ԱՐԺԵՐԻ իր անկախութեանը կ'ստու-  
ծար . Արևմտահանք թէ Հաւըլվէտիա կ'մասնէին , Ֆրանկիներն  
Պալլիոյ հիւսիս—արևելքան կողմէրը , Հռենոսի ձախ  
դին կ'հաստատուեն : Աւերջապէս՝ հռոմեական զօքքը  
Բրիտանիւ էւչէն թազլով՝ կ'բաշտուեին : Այսպէս Արե-  
մտահանք կայսրութեան տակ կ'մասնոյն միայն Պալլիոյ կեզ-  
րանեական գաւառաները , Ափրիկէ և Խառնիա :

Վանդալաց արշաւանց . ԳԵՆԵՐԵՐԻ . — (429)  
Արդէն Արեմտեան կայսրութիւնն ներքին խոռ-  
վոթիւններով մեծ վտանգի մէջ էր , երբ ար-  
տարին յարձակութերն աշ հասան և անոր կոր-  
ծանումը փոթացուցին : Այեւիս՝ Պալլիոյ հռո-  
մայիցի կուսակալը կ'նախանձէր Վանիւէին՝ որ  
Ափրիկէի կուսակալ էր : Ուստի ամեն Ճիզը  
թափեց որ զանի պաշտօնէն ձգել տայ կայսեր :  
Այս բանո իմանալով Վանիփակ դլուխ քաշեց  
ու Վանդալներն իրեն օդնութեան կոշեց : Այս  
ատեն վանգալ բարբարոսաց թագաւորն էր  
ԳԵՆԵՐԵՐԻ , որ իր զօրքն առնլով Ափրիկէ ան-  
ցաւ , ուր սոսկալի աւերտութեր զործեցին : Կար-  
քեզոն իրենց նոր թագաւորութեան մայրաքա-  
ղաքն եղաւ : Այս ատեն կ'ապրէր Ա . ՕՇԱԿԻ-  
ՆԱ , Հիպատիա քաղքին դիտուն ու Ճարտասան  
եպիսկոպոսը :

ԳԵՆԵՐԵՐԻ Կարքեզոնի հին ծովային զօրու-  
թիւնը հաստատեց , նուերը շատցուց , Միջեր-  
կրական ծովուն կղզիները , Սիկիլիա , Գորի-  
քա , Սարտենիա , նուաճեց և բոլոր ծովեղքեաց  
քաղաքներն առ ու աւարի և կրակի առաւ :  
Այսպէս Արեմտեան կայսրութիւնը ծովէն ու  
շամաքէն պաշտեր էին թշնամիներն , և անոր

Երկիրներն հետզհետէ զբաւելով միայն Խոսական ձգեր էին :

Հանաց արշաւանը . Առաջեւա . — Բայց Հռոմի վրայ աւելի ահարկու թշնամիներ կ'վազէին հիւսիսէն : Հռոմք , որոց երեսէն Դոթևացիք խոյս տուեր էին , Առմբայ կ'ելնեն Արևմտապն տապատակելու : Նոյն ժամանակի ողատմիշները կը զրեն որ — Հռոմք չեն եփեր իրենց կերածը . Վայրիք արամատներ կամ կենդանեաց միոր կ'ուտեն ցրեթէ հում : Ոչ տան տնին ոչ բնակարան : Վնասաներու և լեռներու մէջ կ'ապրին , և վարժած են անօթութեան , ծարաւի ու ցուրսի : Գիշեր ցերեկ ձիու վրայ կ'մնան , ձիու վրայ կ'ուտեն , կ'խմեն , առուտուր կ'լինեն և շարունակ կ'թափանին — : Կէս դար կար որ Եւրոպա մասեր էին Հռոմք և Դանութեն անդին կ'կենացին : Հինգերորդ գարուն վերջերը ահ ու սարսափ տուին բոլոր Եւրոպայի , Երբ Աստիլաս , իրենց զլուին՝ բոլոր Հռոմաց ցեղերն իր իշխանութեան տակին առաւ : Այս բարբարոս թագաւորին ահարկու կերպարան մ'ունէր : Իր հասակը կարճ , զլուին ահազին էր , երեսին զոյնը թուխ , քիթը տափակ , պղպիկ աշքերը կլոր , խոր և հրացայտ : Այս ահսելի մարզն բնքօֆինք Առաջայ պատուանուը կ'անուանէր , և կ'ըսէր թէ իւ իւնա իւնա ունաշ ունաշ իւնա ալիւէ բառնէ : Իր իշխանութիւնը Կասովոյ ծովին մինչեւ Հռենոս տարածեր էր բոլոր բարբարոս ցեղերու վրայ և Հռոմացարիոյ դաշտերուն մէջ հաստատեր էր իր բանակատեղին :

Առաջիւս՝ կ զուլլաւ . — Կախ Առաջիւս Ա-  
րեւեան կայսրութիւնն առաջատակեց և զանի  
հարկատու ընել ողեց : Բայց երբ կայսրն ա-  
նոր պատասխանեց գոռոզաբար . և Ոսկի ունիմ  
բարեկամերուս համար , այլ երկաթ թշնամի-  
ներուս համար Հոնաց թագառորդ վախցաւ և  
իր զենքը պէս ՚ի Արեմուտք դարձուց : Հռե-  
նուէն անցաւ և Գալլիոյ հիւսիսային դաւառ-  
ներն ՚ի սուր և ՚ի հոր մասնեց : Սոսկալի ու-  
ժեծ եղան կոտորածն ու աւերմունքը : Հռոմա-  
յեցի զօրքերն , բնչով և նաև Ֆրանկներն , Բիւր-  
կինեանք և Գալլիոյ հիւսիսակողմը բնակող բո-  
լոր բարբարոսները խոյս տուին խառն ՚ի խուռն  
և դացին Լուսու զետին քովերը քաշուեցան :  
Առաջիւս Դրէլ , Մեց և ուրիշ քանի քաղաք  
կ'կործանի : Բարիզի (Հին Լուաէլ) վրայ չքա-  
լեր , (թէ և կ'ըստի թէ հովուուհի մը , Ս. Ժէ-  
նէլլէլ զայն ազատեր է) և շիտակ Օրլէանի  
կողմը կ'զիմէ և զայն կ'պաշարէ : Բնակիչներն  
էնյան եպիսկոպոսին յարդորանօք՝ քաղաքն ա-  
րիաբար կ'պաշտպանեն : մինչև որ Այետիոս  
հռոմայեցի զօրսավեար ժամանակ կ'ունենայ իր  
զօրքը զաւմարելու : Ախտիզով , Ֆրանկ , Բիւր-  
կինեան շոտով կ'հանին և այս քաջ զօրս-  
վարին գրօշակին տակ կ'մանեն : Արդէն Օր-  
լէանի բնակիչներն անձնատուր եղեր էին , ա-  
ւարառութիւնն սկսեր էր , երբոր յանկարծ լուր  
կ'հանի թէ Այետիոս քաղքին գտուն եկեր է :  
Այն ատեն Օրլէանցիք սիրու կ'առնոն , և փո-  
ղոցներուն մէջ կատաղօրէն կ'կուին Հոնաց  
դէմ , որոց զլխուն մըսայ քարեր կ'աեղան տու-

ներուն առանիքներէն : Հոնք կ'առիպուին քաղքեն  
ելնելու :

Ատափլաս կ'կատղի , իր որսն ակամայ կ'թու-  
ղան ու կ'քաշուի դեպ ՚ի Ըանրանյի գաշտերը՝  
Այետիս անոր եռեւէն կ'վազէ : Հոնք Դբոյ քաղ-  
քին շրջակայքը կ'կենան : Ա. Լու , այս քաղքին  
եղիսկոպոսը՝ պատգամաւորներ կ'զրկէ աղաշե-  
լով որ քաղքին խնայէ Ատափլաս : Երբ պատ-  
գամաւորները ձերմակ պատման հաններ հազած ,  
խաչ ու Աւետարան ՚ի ձեռին՝ երդելով Ատ-  
ափլասի առջնն ելան , իր ձին խրաշեցաւ և  
ձիառորը վար ձգեց : Ատափլաս կարծելով թէ  
հմայիք վար ընկառ . պատգամաւորները սպան-  
նել առուաւ . բայց քաղքին չվիասեց :

Սակայն Հոնաց թագաւորը կ'պատրաստուէր  
մեծ Հակատամարտի մը : Անհանդիսաւ էր . կը  
սեսնէր որ իր բանակն արդէն կ'ջարդուէր  
սովէն , հիւանդութիւններէ և զիւղացոյ լա-  
րած որոգայլմներէն : Աերջապէս պատերազմը  
կ'սկսի Շուշի մօս . կամ բաստ ամանց , Մերէի  
գաշտին վրայ : Սոսկալի և արիւնահեղ եղաւ  
կոհու : Ճակատ առ ճակատ կ'մաքառէին բար-  
բարուները : Կ'ըսեն թէ 300,000 մեռած կամ  
միքաւոր զինուորներ պատերազմի գաշտին վրայ  
ընկան : Հոնք յաղթաւեր էին , բայց բոլորովին  
շէին ցնջուած : Իրենց կառքերը պատուարի  
պէս շարելով անոնց ետին քաշուեցան և ցմահ  
պատերազմելու պատրաստուեցան : Չիերու թամ-  
բերով կոյտ մը կանգնեցին , և Ատափլաս ա-  
նոր կատարն ելաւ . նստաւ այն մաքով որ եթէ  
ոպատուարը թշնամին կործանէ , անոր կրակ տայ

և ինքն իր զանձերով այրի : Սակայն Այետիսու իր գաշնակից զօրաց հետ, խռհեմութիւն չեւպես նորէն յարձակիլ Հանաց գէմ, այլ թողոց որ Հռենոս դետէն անցնին և բաւական համարեց հեռութէն անոնց ետեւն երթալ, որպէս զի շթողու որ քաղաքներն աւարեն :

Ասորիլու յիդուլու : — Սակայն Աստիլաս միսորը գրաւ Խոսինա արշաւել և Հետեւալ առրին Ալպեան լեռներէն անցաւ՝ իր անթիւ հրասակներով որ վրէժ լուծելու կ'փափարէ ին : Այետիս զինու որ չունի ո որ այս արշաւանն արդիլէ : Մինչդեռ Ռապէնայի մէջ կայսրը կը խարհրդածէր, Աստիլաս յառաջ կ'խաղար : Ըստ քաղաքներ կործանեց և աւարեց, ինչպէս Ակուիինա, Միլան : Բոլոր մողովուրդները կը մասնչէին : Այն առենն էր որ Աենեափոց բնակիչներն առան էն մինստեցին այն կղզիներուն մէջ՝ որ վերջէն ճախ և հոյաշէն Աենեափիկ պիտի կանցնէր : Հանաց թագաւորն Հռոմեա վրայ քալելու կ'պատրաստուէր՝ երբ Աւլինատիանոս կայսրը գեսպաններ զրկեց, ինչպէս նաև Աւոն Ա սրացն՝ որպէս զի հաշտութիւն ընեն : Աստիլաս՝ Պապին աղաջանաց զի յանելով՝ զօրքի Խոսիայէն հանեց և Դանու թի կողմը քաշուեցաւ : Քիչ մ'ետք մեռաւ նաև իրեն հետ կործանեցաւ Հանաց զօրութիւնը :

ԳԼՈՒԽ գ.

ԱՌԵՐԴՔԵՐՆ ԽԵՂԵՐՆԵՐՆ ԽԵՂԵՐՆ ԽԵՂԵՐՆ ԽԵՂԵՐՆ ԽԵՂԵՐՆ ԽԵՂԵՐՆ ԽԵՂԵՐՆ ԽԵՂԵՐՆ

(196—597)

Հոռովածք առաջը . — ԳԵՂԵՆԱԵՐԲԻԼԻ և Առանձ լաւի  
յարձակութեարեն Հռոմ կործանման դուռը հա-  
սեր էր : Այետիոս զօրավարն ի զոր կ' ջանար  
վառնղին առաջնորդ : Ալեխետիանոս վաս  
կայսրն՝ փոխանակ վարձատրելու ակրութեան  
այս ազատարարը , պարատականաց ամրատա-  
նութեան հաւաց և իր ձեռօքը զանի սպան-  
նեց : Բայց ինքն ալ քիչ առենեն մեռաւ . վասն  
զի ծերակոյտի անդամ , Պիտրոնիոս Մատովուի  
կինն անպատճելուն՝ այս առենակալը զանի  
սպաննեց և անոր աթուր զրաւելով ստիպեց  
որքեայրի կայսրուհին որ իրեն հետ կարդուի :  
Առկայն կայսրուհին Եպոնիուս՝ այս բոնուորեն  
ազատելու համար՝ ԳԵՂԵՆԱԵՐԲԻԼԻ իրեն օգնութեան  
կոչեց : Ամոր ալաց այս սոսկալի թագառորն  
իր նուտառմիջով Հռոմ հանու : ԱՌԵՐ կողմը  
դարձրնել պէտք է զեկը — կ' հարցըներ դեկա-  
վարն օր մ'որ նաւահանդիսաւէն կ'ելնէր : —  
Առազատդ հավին բայց , կ' պատասխանէ այս  
ծովահեն թագառորն , և այն՝ Առտածոյ բարկու-  
թիւնը դրդուող ժողովրդեան զէմ պիտի առնի  
մեղ :

Ա.անդալք (433) Ոտքիա քաղաքը կ'իշեն :

Մարսիմոս կ'սպաննուի ժողովրդեան ձեռօք և  
Հռոմ սպաշտապահով չգանձուիր : Աեսն սպասն  
ընդունայն կ'ջանայ Գենուերիկը խաղաղութեան  
յորդորել : Հռոմ իր գոները բացաւ . Ամս-  
դալք տասն հինգ օր շարունակ քաղաքը թալ-  
լեցին , անբաւ կողոպտաւ առին և անթիւ դե-  
րի , ինչպէս նաև կայսրուհին և Կարլետոն վե-  
րադարձան : Այս եղան հռոմէական պետու-  
թեան գլում վերջին մահարեր հարուածը : Խ-  
տալիա միայն մնաց և այս երկիրն ալ դաշտ-  
ութ զօրապեաներու (եր. 10) ձեռքն էր : Այս  
բարբարոսներէն մին՝ (Ռիմինի) ուղածին պէս  
քանի մը տարուան մէջ շատ մը կայսրներ դա-  
հը հանեց և վար տռաւ : Աերջապէս Օքուսիւ,  
դաշնակից մը , թերակղզոյն երրորդ մասն իր  
զօրաց համար սպահանցեց . և երբոր այս ինդի-  
րը մերժեցին , Հաստուլս Օքուսաւուլս (վեց տա-  
րեկան տղայ մը) զահէն վար ձգեց և ինք Խ-  
տալիոյ թագաւոր եղան : Այս գլուպը Արևմտեան  
կայսրութեան վերջ տռաւ :

Գուլիս այլ և այլ իշխանութեւ : — Հինգերորդ  
զօրաւն մէջ անդը Գուլիս այլ և այլ բարբարու ժողո-  
վրդոց մէջ բաժնուած էր : Քիչ ոտենեն սկսան իրարու-  
գէմ ելնել այս երկրն ըսլորովին տիրանալու . Համար :  
Ամենէ զօրաւոր ժողովուրդը Ախիսիգոմիք էին որոց իշ-  
խանութիւնը մինչեւ Ապանիոյ վրայ կ'առարած էր : ուս-  
կայն կար անոնցն աւելի առողիք և քաջ ժողովուրդ մը :  
Ծրանեկներն , որոց պիտի մնար Գուլիսին նուանելու փառքը :

Գուլիս բնակող բարբարու ժողովուրդն էին , Հա-  
րաւոյին կողմը Ախիսիգոմիք , որ Առաս գետին և Ալի-  
քնեան լեռներուն մէջ անդ կ'զանուին . արևելեան կող-  
մը , Բաւրջինեանց : Հանենայ աւաղանին մէջ , և Ալա-

մասն Հռենոսի և Մեծի մէջ . Հիւսիսային պին՝ Գրանիշ-  
ներն առաջին Հռենոսի և Խորօսի մէջ : Միայն Հիւսիս—  
արքանեան կողմէրը բարբարաներն ազատ թացեր էին  
և Հռամական թշնամութեան վերջին բեկորներն էին .  
Ասդի և Սենի մէջ : Գրանիներն այլ և այլ ցեղեր էին  
և Հռենոսի գետաքրանն յառաւել գաղտնակցութիւն մը  
կ'կաղաքին : Անեղանեաց մորթեր կ'հագնեին , առելի բա-  
զանիրա և մանուգանցին առելի կոչու և անգութե էին բան  
թէ միւս բարբարաները : և կռապաշտ ու կեռ—վայրե-  
նի : Ամեն մէկ ցեղ իր պետը կոմ թագաւորն անձը ,  
Ասդի թագաւորն ընտրելէն եռն : վահանի վրայ դնելով  
բանակին բռլուսիրը կ'պարացընէին ուրախութեան ազա-  
գակներ արձակելով : Թագաւորական ցեղին նշանն էր եր-  
կար զիսակ մ'որ ուսերուն վրայ կ'ենածաներ , մինչդեռ  
միւս Գրանիներն իրենց մազերը դժիս վրայ կ'ամփոփէնին ,  
Արդեն շատ առենք : Ի վեր ազմեր էին Դաւիթից ներսին  
առապատակել : Աւերջապես մինչև Հռենոսի ձախ եզերը  
տարածուեր էին : Այն առեն Գրանիներն երկու Շիւզի  
կ'բաժնաւելին : Գրեր-ինչոյտ , վասն զի գետաքրան-  
նութեան հոգ կ'առանին և Առվանդ , վասն զի Առալ  
զետին եզերը կ'բնակեին : Քիչ առենէն Հռամայեցոց  
Հետ գաղնակցեցնեն : և խոսացան առհմանազլու խը պարա-  
պանէն բարբարաց արշաւանցին զէմ : Ասկայն երբոր  
Գրանիները առանձ որ կոյսրութիւնը կործանելու վրայ  
է , ազեցին իրենց ալ անկից մաս մ'առնուի :

Գրանիներուն աբշաւանէլ . Ալլու . — Գրանիսոյ  
պատերազմանէր ցեղի մը պարագլուխն էր Ալ-  
վե : Թիւե հաղին թէ քանի մը հաղար հաղի  
անէր , միտքը դրաւ Գալլիա արշաւէլ և ա-  
նոր տիրել : Այս զործը դիւրին էր , վասն զի  
Գալլիա նոյն միջնոցին իրարու դէմ կուռող  
բարբարաներու մէջ բաժնուած էր : Ուստի հա-  
սաւ իր զորքով մինչև Սոսոսն քաղաքն ու

Հառմայեցի Սէաշրես կոմսը կ'իշխուր դեռ՝ Աքե-  
լեան կայսերաց կողմէ, և անոր յաղթելով՝  
այն կողմի գաւառները մինչև Սէն նուաճեց :  
Սակայն Ալովիս իր տիրապետոթիւնն առելի  
յառաջ քշել ուզեց՝ մինչև Գալլիոյ հարաւա-  
յին երկիրները : Բուրգինեանց մէկ թաղաւոր  
ըին Կըտէլու աղջկան հետ, որ քրիստոնեայ  
էր, կարգուեցաւ : Այս թաղաւորն իր եղբօրը  
Գանդբէյի ձեռաք սպաննուեր էր : Յետոյ Ալովիս  
Ալամանաց զէմ զնաց, որ Գալլիա պիտի ար-  
շաւեին, և Գունդայի մօտ անոնց յաղթեց : Ա՛ը-  
սեն թէ երբոր իր զինուորներն սկսան ետ քա-  
շուիլ Ալոտիլդէի Աստոծոյ օգնութիւնը խնդրեց  
և ուխտ ըրաւ քրիստոնեայ լինիլ եթէ յաղթա-  
կան կանգնի : Ալովիս իր խօսքը բռնեց, յաղ-  
թոթիւնը տանելով, և շատ մը զինակիցնե-  
րան հետ մկրտուեցաւ Ուենի Ա. Ուենի եպիս-  
կոպոսին ձեռաք, որ անոր այս նշանաւոր խօսքն  
ողղեց : Շուտ Քըտէնդ, զէ՞ յաշնուին, ողղուէ  
այրանդ և ոյրէ ողալուանդ :

Քիչ առևնէ ետք՝ Ալովիս՝ Ալոտիլդէի զրոդ-  
մամբ Բուրգինեանց թաղաւոր Գոնդրօի զէմ  
զնաց, իր աներին մահուան վրէմբ լուծելու  
համար : Գոնդրօ յաղթաւելով՝ Թրանկներու  
հարկատու եղաւ : Ի վերջէ Ալովիս Ալիսիզո-  
մաց վրայ ալ յարձակեցաւ, վասն զի ատոնք  
արփունեան էին : Նուաճեց զանոնք և Գալլիոյ  
հարաւային գաւառներն աւերեց : Այս ժողո-  
վուրդը բոլորովին պիտի չնջուէր՝ եթէ Ռո-  
տորոգոթաց թաղաւորը՝ Թէոդորէի զօրք վրկելով  
Թրանկները Բրօվանս գաւառէն չվանէր : Ալո-

իիս շատ մը կողոպտով դարձաւ. Գալլիոյ հիւսիսային երկիքները . բայց այս արշաւանքն Ալովիս բան մը շշահեցաւ : Մանուանդ հարաւային բնակիչներուն առելութիւնը զրգուց իր առաւու թեամբին և այս առելութիւնը շատ ժամանակ տևեց :

Ուսրուելոց արշաւանց . — Աստրոզոթք՝ որ առեն մը Հոնաց լուծը կրեցին , Աստիլասին մահուանէ եան ազատելով պահանձոյ (Հոնդարիս) մէջ հաստատուեցան : Երենց թէպորի թագաւորին Խոսալիս արշաւեց , Օգոակոր կայսրը դահէն վար ձգեց և իր աթառը Ռազեննաս քառարը հաստատեց : Եր իշխանութիւնը բոլոր Խոտալիս , Սիկիլիա , Բրովանս և մինչեւ Դանուբ կտարածուէր : Բարբարոս թագաւորներու հետ գաշն գրու , մանաւանդ Վիսիգոթաց թագաւորին հետ , որու տէրութիւնը պաշտպանեց Ալովիսի դէմ :

Թէպորի կամավարութեանը . — Մեծ ակուն հանեց թէ ողորիկ իր իմաստուն կառավարութեան համար : Եր մանկութեան ժամանակ՝ այս իշխանն իրեւ պատանդ տարեր էին Կ. Պօլիս՝ ուր կրթուեր էր : Աստի երբ Խոտալիոյ տիրեց ուզեց որ հումէական տէրութիւնն առաջուան ովէս ծաղկեցրնէ : Բոլոր հին օրէնքը , ծերակայուր , հին սպավորութիւններն ու կարգերը մերահաստատեց և շենքեր ու յիշտակարաններ կանգնեց : Բայց թէ ոգորիկ շիրցաւ Խոտալայոց ուրը գրուել , մասն զի արիուսեան էր : Ինչ

կրօնի ազատութիւն տուած էր ամենուն, բայց  
քեզունայն : Կատալացիք միշտ Արևելքի կայսեր  
կապուեր էին, վասն զի իրենց կրօնակիցն էր :

Արևելքուն կայսրութեան վեհակը և դարձած : —  
Ըստ անդամ Արևելքան կայսրութիւնը Պէ-  
ղանդուն կայսրութեան կ'կոչուի, Պէղանդունի  
հին Կոստանդնուպոլսոյ անուամբ, բայց սովոր-  
աբար Յանաց կայսրութեանը կ'անուանի, վասն  
զի ժաղովորոցը մեծ մասամբ Յոյն էին և յո-  
նական լեզուն ու ողին կ'ափրէր : Բայց դար-  
ձեալ բնակիչները շարունակ ինքովնքնին հռո-  
մայեցի կ'համարէին, վասն զի հին հռոմէա-  
կան պետութեան քաղաքակրթութեան փայլը  
ուսչեր էին, որու ներքե շատ մայութիւններ  
ծածկուած կային :

Սակայն Կոստանդնուպոլսոյ կառավարութիւնն  
միշտ շփոթ ու անկանոն վիճակի մէջ էր. ան-  
պակաս էին արքունի գաւեր, զինու որական խոռո-  
վութիւններ կամ աստուածաբանին կոխուներ:  
Կայսրներն յաջորդաբար չեին ափրեր, և շատ  
անդամ զօրականներն իրենց ուզած մարդը կայ-  
սերական աթոռուը կ'հանէին : Թէև այսպիսի  
ստորին վիճակի մը մէջ ընկած էր այս աւ-  
րութիւնը, սակայն բարբարուներուն իշխանու-  
թենէ ազատ մեացեր էր : Բարբարուներն կա-  
զուածելով անցեր էին Արևելքան կայսրութեան  
Երկիրներէն և Արևմատքը նուածելու զայցեր  
էին : Յունաց կայսրութեան Երկիրներն էին Ե-  
ղարտն մէջ Յունաստան, Փոքր Ասիա և Ա-  
սորիք մինչև Եփրատ ու Խզիառու : Աշխարհին

ամենէ՝ աղոք ու բարերեր աշխարհներն էին, և եթէ հանձնարեղ մարդ մ'այս զիրքէն օգուտ քաղելու ջանար, կարելի է Արեւելան կայսրունը վերականցնէր : Այս պատահեցած Յոստինիանս կայսեր օրովու :

---

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՅՈՍՏԻՆԻԱՆՍ — ԺՆԱԼ ԱՐԵՎՈՅՆ ՎՐԱՄԱԿԱԾ :

(522—600)

ՅՈՍՏԻՆԻԱՆՍ . — Արեւլքի կայսերաց մէջ Յոստինիանս ամենէ հռչակաւորն է : Այս համբաւը ստացաւ իր պատերազմներուն և կառավարութեանը համար : Թէ և ինք պատերազմի մարդ չէր, բայց իր օրովու ԲԵԼՔԱՐԴԻ անուանի զօրապեար կ'ապրէր, որ իր արիւութեամբ ու պատերազմական տարածութիւն ստորին կարգէ մեծ պատիւներու հասեր էր :

Յուստինիանս ոչ միայն իր տէրութիւնը պաշտպանել կ'ուզէր ամեն թշնամիներու զէմ, այլ կորուսած երկիրները ձեռք ձգել : Կախ ԲԵԼՔԱՐԴԻ երկու ահարկու թշնամի ազգերու յազթեց, որ շարունակ կայսրութեան զէմ կը յարձակէին, ուստի Արեւլքէն և Պատահաներն Հիւսիսէն : Յետոյ Ամենդավներուն և

Ասարողոթաց դեմ քալեց : Այս հիւսիսային ժողովուրդներն իրենց առաջին վայրագ ընտելինը կորուսեր էին Ափրիկէն և Խոալիոյ մէջ թոյլ և չեղդ կեանք մը վարելով : Աւստի յոյն զօրապետն մեծ նաև առողջմուլով մը Կաբքեդոն հասաւ և առանց զմուտրութեան քաղքին տիրեց : Ամենդար թագառորդ ԳԵՂԱՔ բարձր լեռ մը քաշտելով ժամանակ մը դիմադրեց, բայց սովէ բահագատուելով անձնատոր եղաւ : Այսպէս վերջոցաւ Ամենդարաց թագառորդ թիւնն զար մը տեսելուն ետեւ, և Ափրիկէն Արևելքի կայսրութեան տակն ընկաւ :

Այսպէս Ափրիկէն նուաճելն ետեւ Յուատինիանոս ուզեց նաև Խոալիոյ առնուլ Աստրոդ ոթաց Ճեռքէն : Աւստի Բելիսարիոս արի զօրապետն յանձնեց այս դործը : Բելիսարիոս նախ Սիկիլիան նուաճեց, ապա "Ասպոլիի ու Հռոմի արքեց", երկար ու արիւնահեղ պատերազմէ եար : Ասկայն Ա. Հ. Պ. Պատրոպութաց թագառորդ՝ շատ զօրբով եկաւ Հռոմի մէջ պաշտեց Յունաց զօրապետն և այս երկարատես պաշտերման ժամանակ՝ իր զօրաց մեծ մասը սովէ ու հիւսնդութիւններէ մեռան : Կոյն մի ջային Թրանկներն Ա. Բախիկէսի օգնութեան հասան, բայց տեղի շարիք հասուցին քանի թէ օդու ու վասն զի անխափիք կ' ջարող ին թշնամի ու պաշնակից և բոլոր երկիրը կ' տերէ ին : Ա. Ե. Պ. Պատրոպութաց Հռոմէն դորս երևելով՝ Գոթացիքը հայածեց, Ա. Բախիկէ որ Օտավէնուա քաղքին մէջ պաշտեց, զանի սահմանեց որ անձնատոր լինի և Ա. Պալիս ուղարկեց :

Բայց Բելիսարիոս թշնամիներ ուներ արքունիքն , որոց զրակարտութեան հաւալով Յառատինիսիսնոս զինք պաշտօնեն ձգեց : Այն առեն Գոռթացիք ոսք ելան նորէն և իրենց Տառելու թաղառին հրամանաւարութեամբ Հռոմեան առին : Կայսըր , Բելիսարիոսի տեղ՝ Ներսէս հայ պատրիարքն , որ մեծ ազգեցութիւն ստացնր եր արքունիքը , Խոտլիս ուղարկեց շատ զօրքով : Ներսէս փառառոր յաղթութիւն մը տարած Գոռթացոց դէմ և Տառիլոս սպաննուեցաւ : Գրանիները նորէն օդնութեան հասան Գոռթացոց բայց ի զուր : Ներսէս Գոռթացոց շատը չնշեց , մէկ մասն ալ Եւպետն իեռներէն անդին քշեց , այնովէս որ զային զերմանաւիսն միւս ցեղերուն մէջ կորան : Այսուհետեւ Խոտլիս զերսարին Արեւելեան կայսրութեան մէկ զտառը զարձաւ (354) :

Ա-յո-ր-ս-թե-ն զի-ն-ո-ր-ս-ի-ն զի-ն-ո-լ-ը . — Այս աշխարհ հակալութիւնները՝ թեև փառառոր հաստատուե չեն : Յառատինիսիսնոս իր ժողովրդոց և բանակներուն պատերազմական եռանձնը վառելու համար բան մը չեր բրած : Ուստի Ա անգաղց և Գոռթացոց յաղթոգները Յայները չեն : այլ որիշ բարբարուններ , մանուռնոց Համբ , զոր թելիսարիոս զինուար զբած եր : Անկայի այս այնպիսի զօրյուննեն ալ չաղիան զօրէին Արեւելեան կայսրութիւնն ազատել , ինչպէս որ ուշ-իշ բարբարուններն Արեւելուն ան կայսրութիւնը չեն ազատած : Յանձնական պետութիւնն ընդարձակ առաջնադպութիւնները՝ թէ Արեւելուն և թէ Արեւելարէն բաց էին Ալարիկ , Ալուլզորոց և Ավարաց անդուլ յարձակութերուն : Հետեւոյէս կ'ուրբաջուորէր իր զօրքը բաժնեւէ և չեր կարող իր արքամենած ու հարաւոյին չեռաւար : Եթէի բնիքը սրբազնէ լ :

Յառաքնիանուի խռովմարութիւնը : — Հինգերորդ զարուն մէջ՝ Արկագետու կայսեր յաջորդող կայսրներն մեծ մասամբ նշանաւոր մարդիկ չեղան , այլ թուլամորթ ու կնամարդի է յն : Կայսերութեան ամենէ աւելի հոչակ տուովն եղաւ Յուստինիանոս , որու զործերն աւ անզեցին մեզի Պետառիս և Ավանիս պատմիչները : Յուստինիանոս աղւոր կերպարան , վայելու չ կերպեր տնէր և զիտէր տաղանդաւոր մարդիկ ընարել ու զործածել աւերութեան զործոց մէջ , թշուպէս Թելիսարփոս և Ներոն : որ իր իշխանութեան ամենէ աւելի փայլ տուին : Եր զլիաւոր հոգն եղաւ վաճառականութիւնն ու Տարտարութիւնը պաշտպանել և Հնդկաստանի հետ առեարական յարաբերութիւններ հաստատել : Եր օրով Զինուատանէն թերին շերամն եւրոպա : և թթենի մշակութիւնն ական :

Յուստինիանոս աերութեան բալոր սահմանագլուխներն ամրացոց , այլ և այլ քաղաքներու մէջ հոյսերազ շենքեր կանգնեց և քանի շափ եկեղեցիներ շինեց ու նորողեց , որոց մէջ ամենէ նշանաւորն է Ս. Սովիտյ տաճարը , արզի Այս - Սովիտյ մզկիթը :

Սակայն Յուստինիանոսի կառավարութեան փառքն իր աշխարհակալութեանց պէս խարս-սիկ էր : Տէրութիւնն ներքին վէրքերով կ'աւասպէր , ժողովութներն ծանր հարկերու տակ միշտ կ'հեծէ ին և կոտակալներու ձեռօր կ'հարստահարուէին : Նոյն իսկ արքունական պա-շատն անկարգութեան և ապահանութիւնն արինակ կ'տար : Յուստինիանոս և Թելիսարփոս ան-

պարկեցաւ զերասանուհիներու հետ կարդուելու էին և անոնց ազգեցոթեան տակն էին : Քրիստոնեութիւնը՝ վաս ու ապականեալ բարոյ դարինան բերելու տեղ՝ աստուածաբանական մնաւի վէճերով մասցուեր էր : Մէկ կողմէ կրօնական կռիւներ, միւս կողմէ Կրկէսի խաղեր ուշ լութիւնը պառակտեր էին : Եր իշխանութեան առջի ստարիներն արիւնահեղ կռիւ մը ծագեցաւ այս խաղերուն առթիւ : Կրկէսի կառապատճերն այն ատեն երկու կոստակցութիւններին, և իրենց հաղուսախն զոյնին նայելով մէկը կառայութիւնը կանու կ'կոչուեր : Կայսրը կապատճերուն կռկմէր բռնելուն, սուհայի քաղաքային պատերազմներ ծագեցան : Անգամ մը Յուսուսինանոս տեսնելով որ իր զահն արժանացի մէջ է, կ'պատրաստուեր որ նաևս փախչի . բայց Յուսուսին կայսրուհին չըսզուր որ մեխի ու ոյս խօսքը կ'ըսէ . զՊահէն ամենէ փառուր գերեզմանն է : Ե Բելիսարիոս ապաստերները զուգեց, քանի հաղորի չափ կոստրելին էաւ : Յուսուսինինոս ցավերախառ զանուեցաւ այս մասանի զօրապետին գէմ քանի մ'անդամ պաշտօնն ձգելով : Եւ անդութեամբ կ'ըստի թէ յանիբառի, իրքեւ գառահան ամքաստանուելով Բելիսարիոսը բանտ զրին կայսր հրամանաւ և ոչ քերը փորեցին, և թէ վերջէն անձնզութիւններեան զալով՝ բանտն հանեցին Բելիսարիոսն և թէ յեսին ձայր խեղճութեան մէջ զանուելուն՝ իր հայրը կ'մուրայ եղեր : Սակայն ոյս անզութիւնը ունաւը ուստի կ'հանեն :

Քայլ Յուստինիանոսի վառքն աւելցը նոցն իր հաւաքել տուած որենող բական զարծերն են, որ մինչև Հիմայի իր անուամբ կ'յիշուին: Տէ՛ Ե՞նիս իրաւագետն յանձնուած այս որբենագիրը պատրաստել ուստի հոռոմեական որենազրութեան վերաբերեալ ամեն օրենքն հաւաքեց և այս հաւաքածուցը շորո զերբի կ'բաժեռի, այսինքն ոյ Օչնադեր: բ) Աւհման: դ) Այնանադեր: բ) Աւելութեան:

Լուսաբար աշխատաց արշաւածը: — (568). Աերու սպատրիկը զրեթէ բոլոր Խոտլիան Գերմանիաց ճեռքեն ազատելէն եակ: Աւայիննա քաղաքն իրեւ փոխարքայ կ'իշխնէր, երբ Յուստինոս թ բանապարկու մարդոց զրպարտութեան մրցայ Աերու սր կ: Պօլիս կանչեց: Ասյնով ս Աստիա թաղուհին զանի նախատեց և անոր ըստ իլիկ զրկեց նամակով մ'որ այս բնասան ուներ: Փոխարքայութիւնդ արժանաւորներու ձգել ե եկուր ներքինութեան պաշտօնդ կատարել: Այս նախատինքը շկրցաւ տանիլ Աերու ս և սուրհանդակին ըստ: «Գնաւ ըսէ տիկնոջդ, որ այն սփափի բան մը պիտի մանեմ ես որ ինքն ալ պիտի շկրնայ քակել:» Եւ անմիջապէս Լոմզարտացի բարբարուներն, որ Գերմանիոյ Օտեր զետին եղերքէն իջած էին, կանչեց սր Խոտլիան արշաւեն: Եւ իրօք Լոմզարտացիք, իրենց Ալբուն թագաւորին առաջնորդութեամբ՝ Խոտլիոյ մեծ մասին տէր եզան Զ գարուն վերջերը և իրենց մայրաքաղաքն ըրին Բաքեան, մինչդեռ Յունաց ձեռքը միայն ծավելքեայ քաղաքները մնացին, և կուսակալն (Կառարի) Աւայիննա կը բնակեր: Սակայն ծովափնեայ քաղաքներն ու

Եւսորդին և Ա. Պօլսոյ իշխանութենէ հեռի  
զանու ելով՝ անպաշտպան էին ։ ուստի ինքզինք-  
նին պաշտպանելու համար սկսան մի առ մի ի-  
րենց անկախութիւնը ձեռք ձեր այնպէս որ Ա.  
Պօլսոյն զրկուած դքսերն անոնց վրայ միայն ա-  
նուական իշխանութիւն մ' ունէին ։ Ժամանակը  
անցնելով Խառալիոյ առաջին անգամ հասարակուա-  
ողեասունեները հաստատեցն ։ (Ա. Ենեաբիկ,  
Դատինի, Ամալֆի) ։

Սակայն Լոմիզարտացիք կ'յտապին բոլոր Խ-  
տալից տիրել, բայց որովհետեւ արիուեան էին ։  
Խառալացիք անոնց զեմ' կ'կենային ։ Թեև Ա.  
Գրիգոր պատրի յաջազեցաւ անոնց մէջ կաթո-  
լիկութիւնը տարբածել, բայց դարձեալ Լոմիզա-  
րտաց ոչ և Յունաց մէջ կոիւն երկար ժամանակ  
տևեց ։

Խառալիոյ Յանաց կայսրութենէ Ըստըովն կ'ըստու-  
— Մահմէտականները ստէ այ կ'յանդիմանէին  
քրիստոնեացին որ պատկեր կ'պաշտէին (ուսու-  
ներապալը) ։ Յայն կույսը մը, Աւան Խառալացի այս  
յանդիմանութեանց վրայ ուղեց պատկերները  
վերցնել տալ իր տէ բութեան մէջէն ։ Ուստի  
այս մաօք ամեն տեղ հրովարտակներ զրկեց ։  
Շատոցն այս հրովարտակներ չուզեց հնագանգիլ և  
բոլոր Խառալիան անոր միացաւ ։ Այն ատեն ծով-  
եղրեւայ քաղաքներն ու Լոմիզարտացիք Յունաց  
զեմ' զինեցան իրենց կրօնը պաշտպանելու և  
պատրաստաբաները հալածելու համար ։ Լոմիզա-  
րտացի թագուորը յոյն Եփուրիլ Ռամիննայէն  
զնանեց, միւս քաղաքներն ալ իրենց գուցները

վանուցին և անկախ զիրք մը բանեցին : Այս  
տակն Հռոմի ժողովությու Պապը ճանչեց իրքե-  
առաջին իշխան : Երրոր Լոմզարտացիք Յու-  
նաց իշխանութենէ տղաստլով՝ ուղեցին անկախ  
քաղաքները, մահաւանդ Հռոմի իրենց լծին տակ  
տանուլ : Սուկայն իտալական քաղաքներն ալ  
Լոմզարտացւոց իշխանութենէ առելի վախնու-  
լով քան մէ կայսեր, աւելի առոր մօսկեցան և  
բարբարոսաց գէմ ելան : Ուստի Լոմզարտա-  
ցիք Ռամինա քաղքէն հեռացան և Եւստիք  
նորէն իր իշխանութիւնը ձեռք ձգեց :

Լոմզարտացիք Հռոմ քաղաքը կ'ուզէին առնուլ, վասն  
զի կարծեին թէ Հռոմի տիրելով բոլոր Խոսակից տիրած  
պիտի լինին : Այս Նշանաւոր յաղքին կառավարիչն Եր  
գուցու մ'որ Էքսարքին կողմէ կ'ողուեր : Ուստին, կամ  
Հռոմի եռաբարուպունին իշխանութիւնը բոլորովին աննշան  
էր ուարտաւոր Եր իր բնարութիւնն անդամ Ա. Պոլաց  
կայսեր կողմէ վասերացընել առլ : Սակայն Պապը Հռո-  
մի շահերը կ'արաշագանէր կայսերական բանութեան և  
Լոմզարտացւոց յարձակութերու գէմ : Այսպէս Ը զա-  
րուն սկիզբներն Լոմզարտացիք : Յոդելըն և Ֆունդուկույ  
ազգաւ քաղաքներն իրարու հակառակ են և քիչ առե-  
նէն իրենց մէջ մէ կայտ մը պիտի ծաղեր :

## ԲԱՐԲԱՐՈՍԱ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Երբ Գերմանացիք կայսերական Երկիրները հաստա-  
տուեցան իրենց բարըն և հին կառավարութիւնը ըստ  
մասին ուղարկեցին : Հանուանդ իրենց անկախութեան և

պատմերազմբ սէրն անցիւար թաց. Առկայն հոռոմեական քաղաքակրթութեան և քրիստոնեութեան ազգեցութիւնն ալ կընցին, և այսպէս բարբարոս թնկերութիւնն երեք տարրեր տարրենքու արդինքն եղաւ. Հոռոմեական տարրը, քրիստոնեական տարրը և գերմանական տարրը:

Արշաւարդեն եռոք՝ Գերմանացիք իրենց նուածած երկիրներուն մէջ քիչ քիչ ցրուեցան: Հին բնակչոց հողերուն մէկ մասն առին և մասն մասը թողած մասը թողուցին այս սրբագութեան որ հարկ մը զ'հարկն: Երբ բարբարոս մը հողի մաս մ'սրբագութեան առաջ, այս հոգը կ'կուլուեր ուղարկու (Ալլես), կամ չէ հայունող, այսինքն պիհական ընկած էող, որու սրբացիք կատարեալ կալուածաւեր էր:

Այս բաժանման ժամանակ թագաւորներն ահազին հողի կոտրներ առին, բայց իրենց բաժնեներէն մէկ մասն իրենց զինակիցներուն մէջ բաժնեցին, առներ ալ նոյնակա բաժնեներ հանեցին իրենց մարդերուն: Այս պարզեներն ուղարկուեին, բայց ընդունազներն առաջարկուու, որ պարտաւոր էին պարզեւուուին հաւատարիմ մաս և անոր հետ պատերազմի երթալ: Այս սրբագութեան իրենց աւատական հօգերը կ'վայելին իրենց կենզանութեան ժամանակ: Եթէ իրենց խառաւուները չպահէին, առանձանու իրաւունք ուներ իր տուածն եւս առնել: Ըստ անզամ կ'պատահէր, որ բարբարոս ժամանակի անիշխաւ նութեան մէջ՝ առանձանուն բռնի և առանց պատճառի առանձ առանձներն եւս կ'առնեուր, միւս կողմէ առանձանուներն ալ կ'քանազին իրենց աւատներուն բացարձակ տէր զանալ:

Արշաւարդեն եռոք՝ գերմանացի թագաւորներն իրենց իշխանութիւնն ընդարձակելու ջանացին: Արդէն հին բնակիչներն անմեց կուրօրէն կ'հնազանդէին՝ կարեւելով թէ կայսերներուն ժամանդորդներն են. բայց բարբարոսներն այնքան հլու չէին և թագաւորներու յափշտական թեանց դէմ կ'կենացին:

Տեղական վարչութիւնն թագաւորին կողմէ գրուած իշխանուն ձեռքն էր, որ նոյնպէս իրենց իշխանութիւնը տարածելու ժայթ ունեին: Ասկէ զայ՝ որովհետեւ ի-

ընեց պայմանն ալ անհակ մ'աւաստ էր՝ կոմներն, առն աւատառութերուն պէս՝ իրենց պաշտօնը վաճիխ իրացընելու և թագաւորեն զլույթ քաշելու կ'աշխատէին, բայց թագաւորն ալ անոնց յափշակութեածց դէմ կը կենաց :

Այս և այլ իրազութեաններն այս կ'հետեւ որ բարբարան ընկերութիւննեն յարանե կախներու. մէջ կ'զբանէր. կախներ աւատառուի և աւատառուի մէջ, կախներ թագաւորներու. և կոմներու մէջ, կախներ կոմներու և իրենց հարուսելներուն մէջ :

Եթու ողբուժութիւն. Եղիսիոնութիւն. — Արքանեաւքի մէջ կղերին նուիրաւուառական թշխանութիւնը քիչ քիչ կ'կազմենի և Հառու եղիսակայութ բոլոր Արքը կը թափէ որ ամեն կամ ուղիկ կղերին վրայ գերիշխանութիւնը առանայ. ասկայն 'ի միզրան չ յախողեր, և հոգեոր իշխանութիւննեն առ հասարակ եպիսկոպոսներու մեռքը կը մնայ, այնպէս որ Արքանեաւք եկեղեցին անուակ մ'ազնուազնուական հասարակութեաւութիւննեան կ'պահանջ եպիսկոպոսական իշխանութիւննեան ներըն. Եղեղեցւոյն համբաւ շահներն ընդունեան եւ ազնուազնութիւննեան իշխանութիւննեան քաւառական եպիսկոպոսներ ալ կ'ընենին պիտակացին եպիսկոպոսի նախազահնութիւննեամբ :

Եպիսկոպոսները կղերին ու ժողովրդեան կազմ կ'կարգուենի, իսկ եպիսկոպոսներն ալ անորին կղերը կ'ընտրուին. Շահոյ այս ընտրութիւննեց մէջ աշխարհական իշխանութիւնը քիչ շահները. Ըստ անզամ թագաւորներին ուղղակի կ'հասանաւին և պիտակացները. Արքէ եւ առ եկեղեցին որը որ կ'հարստանեար մասնաւոր նու երեսըն, մեծ երես եպիսկոպոսական պիտակներու. ու արքայարաւուերու վրայ աշ ու կ'անձինին. Ըստ անզամ յարբարուու և պատրազմաներ մարդ մը՝ որ եկեղեցական բաներու մասնագետն էր, եպիսկոպոսի աթոռը կ'առաջ. Առաջ կղերին մէջ ապիսութիւննեան, մայութիւններ եպիսկոպոսներ, որով կարգեան թէ ընդերութիւննեան միւս զանց ողիւ եկեղեցին ալ բարբարուու դարձեր էր. Առջային պա-

Նի մ'եկեղեցական և ազգային ույս շարքաց առաջին առեւ-  
լու և եպիսկոպոսական թագավորութեան և կղերին կողմէ  
ընարեւ տալու փորձեց ուրիշ:

Արևելքի մէջ՝ կզերէն զռու ասք  
առաջ կրօնաւորներ ելեր են որ Երեզգեցայն պայտ մէ ձ  
ներզործութիւն պիտի աւնենային։ Եղան մարդիկ որ Աս-  
տածոյ տեղի համելի լինելու և աշխարհային փորձադր  
ներէ հետանալու համար, մեռաւ որ տեղէր, պինդ ու  
հասպատները բարչւեցան։ Ըստ անզամ ու ձանապահու-  
թեամբ և առաջանքով իրենց մարմանկան կիրքը կ'զարքին,  
Աստիք հերոսը ։ Գումարու կամ Հանիւն կոչուեցան, և  
մասսին ասզրեցան։ Անկից առաջ եկան մենաստաններին  
որ քիչ առենէն Արևելացի մէջ ու տարածուեցան։ Աս-  
հասարակ ասպաշխարելով պարագա կ'անցընենին Շվեյցար  
ներին իրենց կենացին և հազիր թէ քանի մը անգեր ուս-  
ունեցաց ու մշակութեամբ կ'ապարագի ին։

Ուղը . — Հասմի պատրի պարտապայից ովնա թեամբ՝  
քիչ քիչ իր հոգեւոր իշխանութիւնը միւս եպիսկոպոս-  
ներուն իշխանութենէ վեր զատեց : Վրիսունդութիւնը  
Հասմի պատրի բառն ձեռաց բարբարաբաներուն միջ մասու ;  
Անձն Գրիգոր պատր Անդրեաս Սպահաները դարձուց :  
Խրլանասացի կողման և իր կազ աշխարհուր և զիւտիսացի  
և Գալիցիա արքեպիսկոպ կողմը գրիսունդութիւնը տարա-  
ծեցին : Դար մ'եաբ Վրիգոր իւ և Գր պատրի բառից  
Գերանիանի մասաւ Անդրեաս անձլք սպահանեն եռանդուց :  
Անդրեաս առաստեց իր ազգեցութիւնը Արագոն . արքեւն  
առանց թէ բնակեաւ Ար Արքույթ կողմարութիւնն զըսի քա-  
շեց : Արքանի առանձնելու վերընէն թէ Ֆրանցիւներուն հետ զայ-  
նալու իւ ապաւ իր իշխանութիւնն առերան :

ԳՐԱՎԱՐԱՐԱԿԱՆ

ՈՐԵԴՐՈՎ — ՔԱՂԱՔ ԱՐՄԵՆԻԱՆ ՎԵՐԱԿՐՈՆԻ ՎԵՐԱՎՈՐՈՒՄ :

(571—969)

պէս երկու զօրաւոր ու բութեամբ հիմները  
դրտեցան , այսինքն Բրուսիոյ և Աւստրիոյ : Այս  
փոխադարձ զիջումներով Գերմանիոյ մէջ խա-  
ղաղութիւնը հաստատուեցաւ և ամեն մարդ կը  
յուսար որ Ֆրէտէրիկ իր հանձարով ու զար-  
ծունեւութեամբ կայսերական իշխանութիւնը պի-  
տի ամրացընէ և փառաց նոր թուական մը պի-  
տի բանաց : Եւ իրօք , Ֆրէտէրիկ արիստիրոտ ,  
զէս , աղդու իշխան մ'էր և յետին ծայր փա-  
ռառակէր : Գերմանիոյ ամենէ մեծ կայսրներէն մին  
եղան : վասն զի ինքընք թագաւորներէն բարձր  
կ'զատէր , և ասոնք դաստիարակուն նախառաջներ կ'ա-  
նուաննէր , որպէս թէ զաւաններու կուսակալներ  
լինէին : Ամենէ առաջ Ֆրէտէրիկ Տանիքարուչի ,  
Բալշէից և Մահամարանի թագաւորներուն իր իշ-  
խանութիւնը հանցուց , վասն զի միշտ զերմա-  
նական տիրապետութեան դէմ էին . և սահ-  
պեց զանոնք որ իրեն հառաւարիմ մնալու եր-  
դում ընեն . յետոյ իր բոլոր ու շագրութիւնն  
Խոտալիոյ զբայ զարձոց և այսպէս սկսու Լա-  
ռաշարապէտն հասարակութեաններու և զերմանական իշ-  
խանութեան մէջ պայքարը :

Խոտալիոյ այլ և այլ քաղաքներու մէջ կորին սկսեց էր : Առբինոն Դ պատին Առնոլաի ազգեց ցոթեամբ Հռոմէն խոյս տուեր և այս քաղքին մէջ Հասարակապետութիւնը կազմուեր էր երբ Ֆրէտէ բիկ՝ Խոտալիա անցաւ Խաղաղութիւն հաստատելու : Ազրիանու խօսք տուեր էր Ֆրէտէ բիկին կայսերական պատկր զլուխը զնելու : Եթե ապատամբները զավէ և զինքն իր աթոռին վրայ վերահաստատէ : Ֆրէտէ բիկ Ալպեան լեռներէն անցաւ 415 հին և տէրութեան բոլոր առաստա սկաները Ռանտալի առաջաժողովին Տրավիրեց յայտնելով որ ամենքն ալ իրենց կալուածքէն պիտի դրէլ : Եթէ զիշեր մ'իր վրանին դրան առջե չանցրնեն : Դորդնաւ քաղաքն՝ Բավիոյ անհաշուաթշնամին՝ չուզելով Տնազանդիլ՝ Ֆրէտէ բիկ անոր դէմ քալեց : Դորդնաւ՝ կայսերական բանակին դէմ երկար ատեն զիմաշաւ և վերջապէս սովո՞ն բանազատեալ անձնատոր եղաւ : Լոմպարտացի Հասարակուրդներն՝ տեսնելով որ իրենց ամենէ տկար քաղաքներէն մէկն երկու ամիս սոսկալի պաշարման մը տոկաց՝ աւելի և ո սիրու առին կայսեր դիմադրելու : Միշանցիք սիրով բնդունեցան իրենց քաղքին մէջ Դորդնայի փախտական բնակիչներն՝ իրրե ազատութեան մարտիրոսներ՝ և անոնց պատուարան տուին : Սակայն Կայսրն Իսուլիոյ Շաբանցի պատկը դրաւ դլուխը՝ Բավիոյ մէջ, որ կայսրութեան ամենէ ջերմ կուսակից մէկ քաղաքն էր, և դէպէ ի Հռոմ ճամբար ելաւ : Հռոմի ծերակոյար վախէն Առնոլար յորդորեց որ քաղքին հեռանայ և ուասը կանչեց : Երկու կուսակցու-

թիւներն ալ Ֆրէտէրիկը շահելու ջանացին, սակայն Ֆրէտէրիկ կայսերական թագը ստանալու ժողովը Պափարով՝ Պապին կողմը բռնեց և Առնոլու Պրէշիացին ալ ձեռք ձգելով՝ Պապին յանձնեց։ Այս ալ Փայտակոյա մը կանզնել տալով այս նշանառը ու Խարստանն արիքունն այրել ուռա և ճողովորդն անոր անիւնն անդամ չկրցաւ հաւաքել, վասն զի Տիրեր զեար թափեր էին Յետոյ Պապը Ֆրէտէրիկը գիմառեց և անոր հետ առանձին տեսութիւն ընելէ ետե՛ Քիշ մեաց կոռուով պիտի բաժնուէին։ Աւսն զի Ֆրէտէրիկ չէր ուզեր Պապին ձիուն ասպատանը բռնել որ հեծնելու օդնէ, և Պապն ալ բարկանալով՝ խաղաղութեան համբոյրը անոր տալու կ'մերժէր։ Բաւական տաեն զիմանալէն ետե՛ Ֆրէտէրիկ յանձն առա առաջատանը բռնելու, բայց յայտնեց թէ այս մեծարանը չէ թէ ուզգակի Պապին կ'ընէր այլ Ա. Պետրոսին։ Այս պարագան բաւական է ցոյց տալու որ Գերմանիայ և Հռոմի մէջ բարեկամութիւնն երկար չպիտի տնէր։

Քիշ առենէ ետք՝ Հռոմայեցիք դեսպաններ ուզարկեցին Ֆրէտէրիկի և կայսերական թագն անոր ընծայեցին։ Հռոմ կարծէր թէ հին հասարակայետութեան օրերը դարձան և իր գեսպաններն այնպիսի խրոխտ լեզու մը կ'զործածէին՝ որպէս թէ աշխարհի տիրապետներն էին։ Կայսրը բարեկացաւ տեմնելով որ այս հասարակայետականներն իրեն հետ այսչափ ազատութեամբ կ'վարուին, զառն ու կծու խօսքերով անմաց ընթացքը հեղնեց և յայտնեց որ՝ եթէ

Հռոմ երբեմն զինու զօրութեամբ աշխարհի տիրապետեց . Հիմակ նոյն աւրութիւնն Գերմանիոյ բաժին ընկած է : Հռոմայեցիք Գրետերիկի այս ամբարտուան ազգարարութեան վրոյ զայրացած՝ շողեցին զինք Հռոմի մէջ ընդունիլ : Առաջ քաղքին դոնեցը զացեցին : Բայց Զրետերիկ յաջործաց քաղքին մէկ մասը դրաւել և ուզեց անշատ և առանց հանդեսի Ս. Պետրոսի եկեղեցւոյն մէջ կայսր պատկանիլ : Սակայն երբ ժաղավարքն իմացաւ այս դադանի պատակարութիւնը , զինք առա և զերմանական զօրաց մրայ յարձակեցաւ : Երկու կազմեն սոսկալի կոփ . մը ոկտու և Զրետերիկ արեան հեղեղներ թափելու միջոցին կայսերական թագը դրաւ : Թէե վերջապէս Հռոմայեցւոյ յաղթեց բայց շիրոյան երկար ատեն քաղաքը մնալ , վասն զի ահառուան տառապազին ջերմութենէ զօրքերը Հիւանդութեամբ կ'առանպէին . ուստի արտորնօր Գերմանիա վերադարձաւ Գրետերիկ :

Պարագարապայի ըրած ոյս առաջին արշաւանն յիսուսին՝ մէծ արդինքը մը շոնենալուն՝ խուլացիք սկսած արհամարհէել կայսեր զօրութիւնը և Լոնդոնացի հասարակուրդները անոր զէմ զնելու պատրաստուեցան , Պատրի ալ մասցաւ Զրետերիկի հետ գրան գալիքն և Կարողիի Կորմաններուն հետ միանալով՝ Գրեթենացւոց որահանդութենքրուն զիմնադրեց : Անգրիանու Դր նախարարներուն ովես՝ ամբարտուան ընզու կ'զարծածեր Զրետերիկի գրան նախակներուն մէջ . և կ'ըսէր թէ կայսերական թագն Հռոմի Ամեռուին առառակած հօգն է : Այս խօսքն մնէ զայրացի պատճառեց կայսեր , որ Պատրի նույնականը վանեց և հրամացեց որ անօթիապէս Պերմանիոցն ըեռանան : Թէե Պատր խնաց իր նամակին իմաստը մէզ-

ԹԵՂ, բայց անօդուած եղաւ, և պարզաբառաւ երկրորդ անգամ՝ խոսված արշաւելու պատրաստուեցաւ:

## ԳԼՈՒԽ ԺԿ.

ՄԵՐԵԿ ՀԵՐԵՎԱՆԻ ՏՐԵՎԻՆ ՀԸ — ՃՆՆԸ ՇՊԵԿ ՔԵՐԵՑՈՒՅԻ Բ:

(1162—1212)

ՄԵՐԵԿ ՀԵՐԵՎԱՆԻ. — Երբոք Գրէտէրիկ իմաստու որ Միլահնցիք Դորդոնա քաղքին սկարիստները վերականցներ են՝ միտքը դրաւ զրէժ լուծել և երկրորդ անգամ՝ Խտալիա արշաւեց, 400 հազար հետեւակ և 45 հազար ձիւոր զօրքով. զրեթէ բալօր ապատամբ քաղաքները հնազանգեցան, բաց ՚ի Միլան քաղքէն: Պարսկարուած հին հոռմայեցի կայսրներու իրաւունքը վերահաստատեց, ինքզինքն անոնց յաջորդինեկատելով և հրատարակեց որ իշխանին կամքն է իրաւունք և ինչ որ հաճելի է իշխանին՝ օրէնք է: Ամեն քաղաքներու մէջ նոր քաղաքապետներ (podestat) հաստատեց, որոց պաշտօնի է յանուն կայսեր կառավարել ժողովուրդը: Սակայն շատ շանցաւ այս քաղաքապետներն Խտալացի հասարակուրզներու կողմէ զրուած հիպատոսներու հետ սկսան կռուիլ, վասն զի կ'ուզէին աստից իշխանութիւնը կռարել յօդուակայսեր: Այս բուռն կարգագրութեանց մրայ-

իտալական ազատ քաղաքները կ'զայրանային բայց  
դէմ գնելու անզօր էին :

Միայն Միլանի բնակիչներն զերմանացի քա-  
ղաքապետը վանտելով կայսեր դէմ գնելու ե-  
լան և ուրիշ քաղաքներ այ անոնց օրինակին  
հետեւցան : Այս պատերազմն անհատալի կա-  
տազութեամբ շարունակեցին . զերի ընկած զի-  
նուորներն անդամ կ'ջարդէին : Սակայն կայսեր  
առատական իշխաններն այս մոլեզին պատերազ-  
մէն մեծ կորուստներ ընելով Գերմանիա կ'զառ-  
նային : Առատական զրութեան նայելով՝ կայսեր  
հպատակ իշխաններն՝ իրենց զինուորութեան պայ-  
մանաժամը լրացընելլէն ետե՛ կարող էին ի-  
րենց տեղը գտնալ և վեհապետն իրաւունք  
շունէր զանոնք արգիլլու : Այսպէս Ֆրէտէ-  
րիկ զրկուեցաւ իրեն պէտք եղած զօրքերէն և  
երկու տարի անցուց որպէս զի նոր բանակ մը  
կազմէ և Միլան քաղաքը պաշարէ : Այս պա-  
շարումն ահռելի եղաւ : Մինչև անդամ պաշա-  
րեաներուն ուտելիք տանող դիւդացւոց ձեռ-  
քերը կ'կտրէին : Միլանցիք տարի մը դիմացան,  
բայց վերջապէս սովէն նեղուելով անձնատր  
եղան : Բաւական ժամանակ ահճոգողով սպա-  
սեցին որ Պարսպարոսա իրենց գէմ պատապար-  
տութեան վնչոն արձակէ : Կ'ըսեն թէ գեր-  
մանացիք՝ անոնց թշուառութեան կարելցելով՝  
ներելու միտք ոնէին, բայց Միլանի թշուամի  
քաղաքներ անդ թարար պահանջեցին կայսրէն  
որ այս քաղաքը կործանէ : Աերջապէս աղե-  
տալի վճիռը տուաւ Ֆրէտէրիկ և տպատամբ  
քաղաքն՝ Բավիայի, Լոտիի և այլն քաղաքնե-

բու բնակիչներն կրակի տալով հիմնայատակը  
ըրբն և իրենց ոխը շրագեցաւ մինչև որ կոր-  
ծանած քաղքին վրային արօր անցընելով շհեր-  
կեցին և իրեն անիծից նշան անոր հողին վրայ  
աղ շցանեցին : Խոկ իրենց հայրենեց կործա-  
նումն ազատող թշուառ Միլանցիք մօտակայ  
դիւղերը քաշոեցան և պատուեր արուեցաւ իւ-  
րենց որ երբէք Միլան քաղաքը չվերականգնեն :

Լուսորդուիւն նիւշիւնցունիւնն և Ալեւունդը Գ  
— Փրէտէրիկ բոլոր Խոտալիոյ ափրելու կ'յու-  
սար երբ իր առատական քանակից ցրուեցաւ :  
Սակայն Խոտալացիք այնքան սարսափեր էին Մի-  
լանի կործանումը լսելով՝ որ դիմադրութիւն մը  
շցուցուցին և Փրէտէրիկ նորէն պաշտօնակալ-  
ներ գնել ըով շատ քաղաքներու մէջ Գերմանիա  
քաշուեցաւ : Այս պաշտօնակալներն սաստիկ կը  
նեղէին ժողովուրդն և Լոմզարտացիք շիրնա-  
լով հանդուրժել սպատամիւեցան : Այս առեն  
Լոմզարտիոյ դլխառոր քաղաքները միանալով  
երեւլի Լուսորդուն նիւշիւնցունիւնը հաստատե-  
ցին, որու կայսերական իշխանութեան կողմը  
դանուող քաղաքներն անզամ յարեցան : Այս  
Լոմզարտեան նիւշակակցութիւնը Ալեւունդը Գ  
պապին որաշատամութեան առաջ մօտակայ  
ցաւ : Նիւշակակից քաղաքներն ամենէ առաջ  
Միլան քաղաքը կ'վերաշնեն : Ալեքսանդր՝ Պար-  
ուարուսայի պէտ աշխոյժ և անձանձից մարդ  
մ'էր, որ Գրիգոր Ե պապին քաղաքականու-  
թեան հետեւելով ոչ միայն պապական եկեղեւ-

ցւոյ պաշտպան կ'կանգնի, կայսերական իշխանութեան դէմ, այլ և խոալական աղաստոթեան ախոյեան՝ կայսրներու բռնապետոթեան դէմ։

Երբար Փրէտէ ըիկ այս լուրերն իմացաւ երբորդ անդամ Խտալիս արշաւեց և շիտակ Հռոմի վրայ քալեց օրոյէս զի կուէլֆեանց պարագլուխ՝ Պատրը ձեռք ձցէ։ Սակայն Պատրը ուխտաւորի պէս հազուած՝ Կարողի փախաւ։ Պարապարասա այ երկար առեն շկրցաւ մնալ Խտալիս՝ ուր բանակը ժանաւախտէն կ'ջարգուէր, այլ Գերմանիոյ Ճամբան բռնեց Սահսրայէն անցնելով։ Կ'պատմուի թէ Փրէտէ ըիկ ձիապանի պէս ծպտեալ այն կողմերէն խոյս տալու ստիպուեցաւ, երբոր լսեց թէ բնակիչները զինքը բռնել կ'ու զէին։

Փրէտէրին Պարապառաւ յաշնուաէ . Անոդանէ Խոշոշունիւնը . — (1483) Խտալիս զրեթէ բոլոր Հիսուսային երկիրներն Առմելարտեան նիզակակցոթեան մէջ մասեր էին։ Այս նիզակակցոթիւնը նոր քաղաք մը շիներ էր և 'ի պատիւ Ալեքսանդր Գ' պատրին՝ Ալեքսանդրին անուաներ էր։ Փրէտէ ըիկ այս քանու նախատինք սեպելով իրեն, Սավուայէն անցաւ, և Ալեքսանդրիոյ վրայ քալեց։ Գերմանացիք ծաղրելով շըշտէ տաշտէ կ'անուանէին Ալեքսանդրին, վասն զի պարիսպները կառով ու յարզով շինուած էին։ Բայց Փրէտէ ըիկ շկրցաւ քաղաքն առնուլ զայն պաշտպանէն ետեւ՝ վասն զի ոչ միայն բռնումներու ան եղանակի մը, ողովումներու, հիւանդութեանց և սովոր դէմ պէտք էր զնել այլ և

նիզակակից զօրաց գեմ որ Ալեքսանդրիոյ օգնութեան կ'հասնէին : Ուստի կայսրը պատշարում մը վեցոց :

Սակայն Գերմանացիք այս երկար պատերազմէն ձաւնձրացեր էին . թէև տեղ տեղ նշանաւոր յաղթութիւններ տարեր էին , բայց իրենց թշնամիններն նոր զօրութիւն ստանալով՝ միշտ կուտը կ'սկսէին : Որչափ ատեն որ Կուէլֆեանք և Կիովէլեանք միացած կեցան Գերմանիոյ մէջ՝ գերմանական զօրքը յաղթեց , բայց այս երկու կուսակցութիւններն նորէն սկսան գտնիլ և այն ատենէ 'ի վեր Կուէլֆեանց զլուխը՝ Հենրի Առենց կ'ուզէր կայսեր կողմը ձգել : Ֆրէտէրիկ անոր միաբն հասկրնալով կ'յանար համազել և բարեկամութիւնը պահել , բայց իր բոլոր ջանքն անօդուտ եղաւ : Երբոր Ալոքեան լեռներու կողմը՝ Քիւէնն քաղաքը քաշուած՝ Ֆրէտէրիկ Գերմանիայէն օդնական զօրաց կ'ըսպասէր անհամբեր , Հենրի Առիւծն իրմէ բաժնուելով հեռանալ ուզեց : Պարզաբուա մնոր ոտքն ընկնելով աղաւեց որ զինք չթողու այն միջոցին՝ որ տէրութեան պատիւը վտանգի մէջ էր : Հենրի անհամոզելի մնաց և իր երկիրը քաշուեցաւ զօրքերովը :

Սակայն Ֆրէտէրիկ իտալական նիզակակից բանակին գիտացն ելաւ և Լինենո բերդին մօտ ձակատը կազմեց : Պատերազմն երկար ատեն մնորոշ մնաց , բայց 'ի վերջէ Գերմանացիք յաղթուեցան : Նոյն իսկ կայսրն հազիր կարող եղաւ . կոտորածէն աղատիլ : Եյս Լինենոյի

Հակատամարտն Խտալիոյ բազդը սրոշեց : Ֆրե-  
տէ թիկ Պարսպարսոս հասկըցաւ որ կարելի չպի-  
տի լինի իրեն Խտալիոյ իշխոելու , ուստի իր  
թշնամեաց հետ հաշտուեցաւ և Կանաքանով խա-  
ռա-  
սը-  
սը-  
նի-  
նը կնքեցին : Լումպարտեան համարա-  
կուրդներն իրենց արքայական իրաւոններն (երես  
80) ձեռք ձեւցին այս խաղաղութեան դաշին-  
քով , այս պայմաններ որ Գերմանիոյ կայսեր  
գերագահութիւնն ընդունին և կայսրութեան  
պաշտպանութեան համար պէտք եղած ատեն  
զօրք մատակարարեն : Այս կերպով Խտալիա  
զրեթե իր անկախութեան հասած եղաւ :

ՀԵՆՐԻ ԱՆԴՐԻՆ ԴՐԵՎԻՆ . — Այսուհետեւ վերջացաւ  
Գերմանիոյ և Խոտալիոյ պատմութեան ամենէ կարեւոր մէկ  
լրջանը միջին դարու մէջ : Ֆրետէ թիկ՝ Կանաքանով խա-  
ռա-  
սը-  
սը-  
նի-  
նը համարականութեամբ յարդեց : Հենրի Ա-  
ռախեծը պատժել ուզեց և զանի դատաստանի կոչելով  
իր առանձները ձեռքին տառ և Պավիլոնյի ու Սաքսո-  
նիոյ գքութիւնները բաժնեց : Առաջին Ալեքսանդր  
Ունինին տուաւ , և երկրորդն՝ Պրանդուուրիի տան մէկ իր-  
խանի : Հենրի Առախեծն միայն իր կալուածական տեղերը  
ստահեց , այս և Պրանդուիի և Լաւանիուրի : Իր յաջորդ-  
ներն՝ նոր ժամանակներու մէջ՝ կայսրընտիրներ եղան ,  
ապա Հանովիրի թափառքներ՝ որ վերջապէս Անդրիոյ  
դահնե ելեւելու համար տահմանած էին : — Ֆրետէ թիկ  
Պարսպարսոս խաչակրաց երրորդ արշաւանին հետ Արքեւու-  
զնաց և Հինգոս զետին մէջ լուսացուելուն մասսաւ (1190) :

ՀԵՆՐԻ Զ . Կառէ լիքունց և Կիուլյանց ուշիւորն Խ-  
որակուայ եւլ . — Ֆրետէ թիկ Պարսպարսոս իր որ-  
դին ՀԵՆՐԻ Զ . Սիկիլիոյ Ռուէլը թագաւորին աղ-  
ջկան հետ կարգելը էր . այն յուսով որ օրին

մէկն այս թագաւորութիւնը զերմանական պետութեան միանայ : Սակայն այս ամուսնութիւնն մեծ կոխներու պատճառ պիտի լինէր : Խոկ Կուէլֆեանք և Կիպէլեանք նորէն կոխն սկսան Գերմանիոյ մէջ, վասն զի Պարագարսա՛ Հենրի Առիծն իր գքսութիւններէ զրկելով այս երկու կուսակցութեանց ատելութիւը դրգոեր էր :

Երբոր Հենրի Զ. ուզեց Սիկիլիոյ տիրել, այս կողմոյն մեծ ամենները շուզելով օտար իշխանի մը հնազանդիլ, ոտք ելան և Խոտալիա նորէն մեծ պատերազմներու ասպարէ զը դարձաւ : Աէլֆեան ցեղը, Գերմանիոյ գահին այլ և այլ հակառակորդներն, Պապն, Լոմպարտիոյ հասարակուրդները սոսկալով կ'դիտէին Հոհենշդօֆէնի ցեղին զօրանալն և անոր գէմ գնելու կ'պատրաստուէին : Պապն թէ իրն Սիկիլիոյ թագաւորութեան առաջապետ՝ թէ կայսեր ընտրութիւնը վաերացրնելու իրաւունքովը՝ բոլոր չիզը թափեց որպէս զի իր ամենէ մեծ թշնամին՝ Գերմանիոյ կայսրը : Սիկիլիոյ թագաւոր չինի : Բայց Հոհենշդօֆէնեանց զօրութիւնն այնքան մեծ էր որ կէս դար շարունակ պատերազմնէն ետե՛ Հոռմի աթոռակալը կարող եղաւ Սիկիլիան Գերմանիայէն կորզել : Հենրի Զ. արդէն մեծ դժուարութեամբ իր կնկան թագաւորութիւնը ձեռք ձգեր, բաւոն միջոցներ զործածեր էր այս նպատակին համելու համար, և այնպիսի սոսկալի անդթութեան գործեր ըստեր էր որ իր նոր հպատակները զինք սաստիկ կ'ատէին : Հենրի Զ. Արեւելք պիտի երթար նոր աշխարհակալութիւններ ընելու երբ

յանկարծ մեռու , երեք տարեկան որդի մը թող-  
լով՝ Թրետէրի անուամբ , որ արգէն Սէլիւր բա-  
ժանարի ախտղոսն ունէր :

ԻՆՆԵՐԸ Գ. — (1198—1216) Այս միջն-  
դին Հռոմի աթոռը կ'ելնէր ԻՆՆԵՐԸ Գ. , որ  
ամենէ ճարտար և նշանաւոր պատերէն մին եւ-  
ղար . և Գրիգոր Եպիստավետական խոր-  
հուրդները բալորովին ՚ի զործ դնելով սպառ-  
կան իշխանութիւնն իր բարձրագոյն աստիճանին  
հասուց : Ավագանութեալ որ Եկեղեցւոյն բոլոր  
թշնամիները բնաջինջ ընէ , և այս նպատա-  
կաւ Խաչակիր զօրքեր հանեց ոչ մրայն Մահ-  
մէտականաց դէմ այլ և հերետիկուներու դէմ :  
Բայց ՚ի բաց յայտարարեց որ ամեն Եկեղեցաւ-  
կան և աշխարհական իշխանութեան բացարձակ  
դլուխն և բոլոր տէրութեանց տիրապետն ինքնէ ,  
այնպէս որ թագաւոր ու իշխան իրեն սպա-  
ռառներն են : Ամենէ զօրուոր վեհապետներն ,  
Փիլիպոս Օքոսոս և Յանաչը Անդրէլը իր առ-  
ջնոր զլուխ ծուեցին : Կրաք է որ Խաչելիոյ մէջ  
նորասի Թրէտէրիկը Սիկիլիոյ թագաւոր անուա-  
նեց , բայց այս պայմանը դրաւ որ Սիկիլիոյ թա-  
գաւորութիւնը զերմանական պետութենէ միշտ  
զատուած մնայ : Այս կերպով Պապը կ'յուսար  
Հոհենշտաֆէնեանց շահերը Գերմանիոյ շահե-  
րէն զատել և Թրէտէրիկը բալորովին իտալացի  
և պապական աթոռին հնազանդ ու անձնուէր իշ-  
խան մը ընել : Այս նպատակին հասնելու հա-  
մար Թրէտէրիկին իր խնամակալութեան տակ պ-  
րկար :

Սասարդիոյ Փելքողոս և Պըտանովով Ռին։ — Հենրի Զք մահուանե ետք՝ Ափակէ լեամբ կայսր կարգեցին իր եղբայրը Սասարդիոյ Փելքողոսն, և Առէլ Փետանը՝ Պրանազին Ունան, Հենրի Առին ծին որդին։ Խնավիկենոտ Գ, Հռոմի Աթոռուին առանց ական քաղաքականութեան հետեւով Առէլ Փետանց կողմն բռնեց, սակայն Փիլիպպոս Պապին զէմ յաղթաւթիւնը տարաւ, և Հետզիւակէ կ'զօրանար երբ յանկարծ սպաննաւեցա։ Այն առեն Ափակէ լեամբ ուրիշ թագաւոր շընտրցին, վասն զի զեռ Ֆրէտէրիկ Հոհէնչգօֆէն մանուկ էր, և Պրանավիկցի Ունան ընդունեցան իրեւ իշխան։ Որբան առեն որ Ունան Գ իրեւ զէմ հակառակորդ մ'ունէր այս է Փիլիպպոս Ուռապիացին, սպասական աթոռին հաւատարիմ մնաց, սակայն երբ կայսրութեան ինքնազլու տէր եղաւ, անոր զէմ կեցաւ և Հոհէնչգօֆէնեանց Խոտալիոյ վրայ ունեցած իրաւունքները պահանջեց։ Առաջի Խոտալիա արշաւեց և Սիկիլիոյ թագաւորութեան վրայ քաղեց։ Վճառվիկենու Ունանի անհաւատարմութեան վրայ սրամանելով զանի բանադրեց և կայսերական թագը Խորատի Ֆրէտէրիկին շնորհեց, անոր Երգում առնել տալով որ վերջէն Սիկիլիան իր մէկ որդույն թողու։ Այն առեն այս իշխանը Գերմանիա գնաց և Ափակէ լեամբ մնձու բախտութեամբ ընդունելով Հոհէնչգօֆէնեանց ժառանգորդը՝ կայսր Հրատարակեցին։ Ունան իր կուսակիցները կորոյս և իր կալուածական հոգերը քաշու եցաւ։

ԳԼՈՒԽ ՓԴ.

ՖՐԵՇԵՐԻ Բ. — ԳՅԱ ԱՎԵԼԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ.

(1212—1266)

Խաչերունիւն . Գրիգոր թի պապը . — Ֆրետէ-  
րիկ Բ. Խտալիա ծներ էր՝ խտալացի մօրմէ և Խ-  
տալացւոց ձեռօք կրթութիւնն առնլով՝ զրեթէ-  
խտալական բնաւորութիւն ունեցող իշխանն մը  
դարձեր էր . Եր հայրենակիցներուն պէտ զրա-  
կանութիւն ու արուեստները կ'սիրէր , բարձր  
միտք , վեհանձն հոգի ուներ և Զարտար քա-  
ղաքականութիւնն մը : Սակայն Խտալացւոց պէտ  
ալ խորագէտ , ծաղրաբանն և թերահաւատ էր:  
Այս նորընտիք կայսրն Հռոմի Աթոնին հլու-  
մաց որչափ ատեն որ Խննովկենտ ողջ էր ,  
բայց երբ այս անուանի Պապը մեռաւ՝ Ֆրետէ-  
րիկ իր տուած խոստումները մռացաւ . Սիկի-  
լիան գերմանական կայսրութենէ չդատեց և  
Խաչակրութեան չգնաց : Այս ատեն Գրիգոր թի  
պապն , որ վես ու անողոքելի ծերունի մ'էր ,  
կ'հրամայէ կայսեր որ Երուաղէմերթայ՝ սպառ-  
նալով որ զինք պիտի բանադրէ եթէ իր հրա-  
մանը . չկատարէ : Ֆրետէրիկ սրատրաստութիւն  
տեսնելով նառ կ'մտնէ իր զօրօք և Զամբայ կ'ել-  
նէ , բայց բանակին մէջ հիւանդութիւն Զա-  
րակելուն՝ կայսրը ետ դառնալու կ'ստիպուի :  
Երբ Պապը կ'իմանայ որ Ֆրետէրիկ Խտալիա

վերադարձեր է՝ զանի կ' բանադրէ : Պարապ տեղ  
Ֆրէտէրիկ իր անկեղծութիւնը ցոյց տալու հա-  
մար նորէն ճամբար կ' ելնէ Երուսաղէմ գնա-  
լու , Պապը չուզեր զանի նզավքէն արձակել ,  
մանաւանդ Պաղեստինի քրիստոնէ ից . Հրաման  
կ' դրկէ որ բանադրեալը շընդունին , և Հետեա-  
սիւս Ֆրէտէրիկ ամեն կողմէ հալածանք կ' քա-  
շէ : Այս բաւական չէր . մինչդեռ ինք Մահ-  
մէտականաց դէմ կ' պատերազմէր՝ Գրիգոր Թէ-  
խաչակրութիւն կ' քարազէր իրեն դէմ և զօրք կը  
հանէր որպէս զի Սիկիլիոյ . թագաւորութեան  
վրայ յարձակին : Երբոր Ֆրէտէրիկ իմացաւ  
Պապին այս անօրէն ու նենգաւոր ընթացքը՝  
շտապով Խտալիս վերադառնալով՝ պապական  
բանակին դէմ ելաւ յաղթեց , այնպէս որ Գրի-  
գոր Թէ ստիպուեցաւ իրեն հետ հաշտուիլ և  
խաղաղութիւն ընել :

Լուսուրուան նիւթիւննեան յաշնուիւս . —  
Երբոր Ֆրէտէրիկ՝ Պապը զսպեց և Գերմանիան  
խաղացուց , ուր իր Հենրի որդւոյն զրդուու-  
թեամբ ազստամբութիւն մը ծագեր էր , իր աշ-  
քը Լոմպարտիոյ վրայ գարձուց և միազը դրա-  
զայն բալորավին նուանել : Այս Խորհուրդն՝ ի  
զործ դնելու համար ջերմ կուսակից մ' ունէր  
յիտալիա , այս էր Խէլլին՝ Աէրոնայի քաղա-  
քապեան , որ իր անդթութեանց պատճառաւ՝  
Առուրու կոշուեր էր և միշտ կ' կուտէր Լոմպար-  
տիոյ Կուէլֆեանց դէմ : Եկելին կայսեր օգնու-  
թիւնը խնդրեց . Ֆրէտէրիկ զօրքով վազեց , մի-  
շատ քաղաքներ առաւ և Սիլանցիքը բոլորու-

վին յաղթահարելով մինմաց նույնական կառաջ  
(+աբօւէս\*) ձեռք ձգեց, կառք մը զոր Խառալայի  
Հասարակութզները՝ պատերազմի ժամանակ՝ իւ-  
րենց բանակին մէջ տեղը կ'պաշտէին : Առկային  
կուէ, ֆեան քաղաքներն արիաբար պատերազմը  
շարունակեցին իրենց անկախութեան համար :  
Պատողը աւեսնելով որ Ֆրէտէրիկ իր իշխանու-  
թեան ալ կ'սպառնայ՝ անոր հետ նորէն աւրածե-  
ցաւ և Լոմարատեան նիզակակցութիւնը պաշտ-  
պանելու համար Աննեակի և Շենուայի հա-  
տարակապետութեանց օրնութիւնը ինդրեց : Ա-  
ռոր վրայ Կայսեր ու Պատին մէջ սոսկալի կոխ-  
մը ակառ :

Պատողը նորէն բանազրեց Ֆրէտէրիկն, և Ի-  
տարացիքը դրզուեց որ անոր դէմ ելնեն : Այլ  
և այլ յանցանքներ անոր վրայ կ'կնէր և կ'ը-  
սէր թէ Ֆրէտէրիկ Յիսուս Քրիստոսը խարե-  
բայ անուաներ է : Կայսրն այս ամբաստանու-  
թի ներքո կ'ջրէր և ինըն ալ զՊատին գերաբերուածու,  
Յայտնութեան մէջ վլուզը կ'անուանէր : Պատող  
կառզելով Ֆրէտէրիկը զահէն ձգեց և անոր  
թազը Ֆրանսայի թագուոր Ա. Լուի յանձնեց.  
բայց Լուի մերժեց : Այն առեն Գրիգոր պատն  
ուզեց որ եկեղեցական ժողովով զատապարտէ-  
կայսրն և Հռոմի մէջ այդ ժողովը զումարուե-  
լու հրաման հանեց : Բայց Ֆրէտէրիկ զնայ  
ծեր քահանայազնեալ Հռոմի մէջ պաշարեց և

\* Վայն կայսեր՝ կործիքը ներկաւած և կարմիքը կոչերով  
Ըծուած՝ մէջ անզ երկաթե ծառ մ'աներ, որմ խաչ մը  
կախուած էր, և գրուակ մը : Ա. Ամբոքոսիոս՝ քաղքին  
պարզաբանութեան բառածած :

իր էնցէտ որդին՝ որ նաւատորմին կ'հրամայէր,  
Ֆրանսայի եպիսկոպոսները ժողովին սահմալ ճե-  
նուացի նաւերը բռնեց և կրօնաւորները գերի  
տարաւ : Գրիգոր թա այս ձախորդ լուրն իմա-  
նալուն՝ այնքան վիշտ ու բարկութիւն զգաց որ  
մեռաւ : Այսպէս կայսեր իշխանութիւնն հաս-  
տատուած կ'երեւէր, Խտալիս անոր զօրութեան  
առջև կ'գողար, Գերմանիա բոլորովին հնազան-  
դեր էր և Ֆրէտէրիկի Քոնցատ որդին Հռոմա-  
յեցւոց թագաւոր հրատակեր էր :

Առնելոց որշառան : — «Եղին միջոցին ոչ մի-  
այն Գերմանիա այլ բոլոր Եւրոպա մեծ վտանգ  
մ'անցուց : Ասիոյ խորերէն նոր Ատտիլաս մը,  
Ճէնիս-խան՝ անհամար հրասակներով Զինաց  
պետութիւնը նուածելէն, ուու խարան ու Թարո-  
կաստանն առերելէն եւու՝ Պուստատան մուեր և  
Քիէլ ու Մուկուս հասեր էր : Այս վայրագ  
բարբարոսներն՝ որ ահագին զլուխ ունեին և ի-  
րենց կովերուն կամով ու ձիերուն մասվ կ'ապ-  
րէին, անխոնջ ձիաւորներ և Տարպիկ աղեղ-  
նաձիր էին, զետերու վրայէ կաշիէ նաւակնե-  
րով կ'անցնէին և մի միայն կողոպտելու և ա-  
ռերելու համար կ'արշաւէին : Այս ահարկու  
վտանգին ժամանակ՝ Ֆրէտէրիկ բոլոր Եւրոպա-  
կան իշխանները հրափրեց որ քրիստոնէութեան  
թշնամինները վանելու համար միանան : Սակայն  
Պատին՝ իր անձնական ատելու թենիւ շարժեալ՝ բնաւ  
հոգ շըրաւ և Գերմանիոյ կայսեր դէմ պատերազմի  
կատաղօրէն շարունակեց : Բարեբաղյաբար՝ բար-  
բարոսներն առելի շառաջացան և Եւրոպայի  
արևմտեան կողմը շառպատակեցին :

Խնամիւնու Դ ԵՐԵՐԾ անդամ՝ ԵՐԵՆԻԿՐԵ Փըլքիւ  
ընկը. — Գրիգոր Թ պապը մեռնելով Հռոմի  
աթոռը բաւական ժամանակ թափուր մեաց :  
Նոյն իսկ կարտինայաց ժողովը կամ Հայուանն  
(օնչևան) երկու կուտակցութեանց բաժնու ած  
Եր, Ախովէլեան և Կուէլֆեան : Սակայն Երբոր  
Խորոպայի իշխաններն սկսան զանգատիլ, կար-  
տինալներն ստիպուեցան պապ մ'ընտրել և այս  
պապն էր Ճենուացի մը, Ֆիւռեանց նշանաւոր  
ընտանիքէն, որ Խնամիւնու Դ անունն առ առ : Ա-  
րամիւնուն. այս պապը Գրէտէրիկի հին բարե-  
կամն էր՝ ամեն մարդ կ'յանար որ վերջապէ և  
Գերմանիոյ և Հռոմի մէջ խաղաղութիւն կը  
հաստատուի : Աւտիի ու բախութիւնն ամեն առեղ  
կ'տիրէր և կայսեր շնորհառութիւններ կ'ու զ-  
ղէին այս ընտրութեան վրայ : Բայց Գրէտէրիկ  
լաւ զուշակեր էր . Չիիէսքին, բառ, իմ բա-  
րեկամն էր, բայց պապն իմ թշնամիս պիտի  
լինի : Եւ Երաւի Խնուվկենու Դ Հոհենշգաֆէւ-  
նեանց անհաջա հակառակորդն եղաւ : Ես սկզբան  
խաղաղութիւնը հաստատելու փորձեր եղաւ,  
բայց կայսրը չուզեց ետ տալ կուէլֆեան զե-  
րիներն ու քաղաքներն և ասոր վրայ նորէն կոհին  
սկսաւ : Պապը Ճենուաց փախաւ, և անկից Լիոն  
զնաց, որ իր եպիսկոպոսին հրամանին տակ ան-  
կախ քաղաք մ'էր . մինչև անզամ Գրանտայի ու  
Անկիլոյ թագաւորներն անոր պատսպարան մը  
տալու մերժեցին : Ահա այն քաղքին մէջ Պապը  
կրօնական ժողով մը զումարեց Գրէտէրիկին  
ընթացքը քննելու համար :

Կայսրը ժողովին շներկայացաւ, վասն զի զի-

առէր որ այն ժողովը կուրօքէն Պատին պիտի հնազանդէր : Եր մէկ պաշտօնեայն մը ծ ճարտառանութեամբ պաշտպանեց զինքն, Ս. Լուի բարեխօսեց, բայց Պատի բան մը մնիկ չըրատ և առանց ժողովին կարծիքն անզամ առնլու՝ Ֆրեաէրիկը որրապիրծ և հերետիկոս հրատարակեց և հանգիստիս զանի բանադրեց ու զահէն վար առնելու վճռեց : Ամեն եկեղեցիներուն մէջ Պատին կոնդակը կարդացուելէն ետև՝ Գերմանիոյ մէջ մի քանի եկեղեցական իշխաններ՝ Հերի սահմանապետ՝ Հենրի Ռուբեն թագաւոր ընտրեցին : Այն առեն Ֆրեաէրիկ այնքան զայրացաւ Պատին կոնդակին դէմ, որ կ'ըսեն թէ իր թաղը բերել տալով դլուխը դրաւ ու պառաց, և Այս թաղը չպիտի ընկնի դլիւն մինչեւ որ արեան հեղեղներ շլափին : »

Այսուհետեւ կայսրն և մանաւանդ պատի բուռն և եպերելի միջոցներու դիմեցին : Պատի ոչ միայն Եւրոպայի մէջ կայսեր դէմ նոր թշնամիներ կ'զրէր որ Ֆրեաէրիկի հետ հաշտութեան զաշնկը խզէ և Երուսաղէմը դրաւէ : Կայսրն ալ Մահմէտականաց կ'իմացընէր թէ Ս. Լուի նոր խաչակրութիւն մը հանելու համար պատրաստութիւններ կ'աեւնէ : Պատի զինուորներ զըտնելու համար Եւալիները կ'հաւաքէր և շէր թալուր որ Երուսաղէմ երթան . մինչեւ անզամ ներսղութիւն շնորհեց Հերետիկոններու, որ Հաւաքաբննութեան առեանին կողմէ դատապարտուեր էին, որպէս զի զանոնք իր բանակին մէջ զինուոր ընէ : Միւս կողմէ Ֆրեաէրիկ ալ քր

զօրաց մէջ Սարսկինուներ կ'ընդունեց և այրել  
կ'տար այն ժողովիկ կրօնառորդերն որ Պատվին  
կողմէ՝ իրեն գէմ խաչակրոթիւն կ'քարոշէին :

Ֆրեդերիկ Բէ ՀՀ-պատմիւնը : — Անբաղդ Ֆրե-  
տէրիկ՝ ամեն կողմը գաւաճաններ ու մատնիշ-  
ներ կ'առեւնէր : Սկսաւ կասկածուտ ու անդուժ  
գառնալ նոյն իսկ իր ամենէ եռանդուտ կուսա-  
կիցներու գէմ : Առեն ատեն մեծ վհաստթիւն  
մը կ'զար վրան և ամեն բանէ հրաժարիլ կ'ո-  
ղէր : Աերջին անգամ մ'ալ հաշտոթիւն ա-  
ռաջարկեց և խօսք տուաւ երթալ Սիրիա իր  
կենաց վերջին օրերն անցրնել՝ իր թագն որ-  
դւոյն թողլով : Ֆրանսայի բարեպաշտ թագա-  
ւորը կարեկցելով միջնորդեց և աղաչեց Խնոմվ-  
կենտ Դն որ Ֆրետէրիկի առաջարկութիւններն  
ընդունի յարդորելով որ՝ «Ի զործ գնէ այն  
քրիստոնէական զթասիրութիւնն՝ որ՝ Քրիստո-  
սի խօսքին նայելով՝ ուշու է որ Եւրանասուն Եւրան  
անդամ Աւրէ» : » Բայց անողոքելի սրապը շուզեց  
բան մը մտիկ ընել . միտքը գրեր էր Հոհենշ-  
տաֆէնեանց, այս էժերու շեշը թնջել և Սիրի-  
ւիան գրաւել : Կայսեր վերջին օրերը շատ  
տիսուր եղան : Թէ և Գերմանիոյ մէջ իրեն կու-  
սակից իշխանները՝ Հենրի Ռամսթոնն՝ իր ոսոխը՝  
աթոռէն վար առին, և Պատվին անոր տեղ՝ Հո-  
լշտաույի կոմմունայի Ավետիք ընտրել տուաւ՝ բատ հա-  
ջոյս, բայց Խտալիոյ մէջ պատերազմն աւելի  
ծանր ու կրօնական կերպարանք մ'առնլով մեծ  
շարեաց պատճառ եղաւ : Եկելին՝ կայսեր ա-  
նուամբ սորիալի անդմոթիւններ կ'զործէր և

Դատավացւոց առելութիւնը կ'շարժէր Գերմանիոյ գէմ։ Կայսեր որդին՝ Էնցիս քեղեցին թշնամնաց ձեռքն ընկաւ և քամ տարի բանտը մնաց։ Ֆրէտէրիկ՝ որու սպառնալիքն ու աղաչանքը շկրցան ազատել իր սիրական որդին գերտթենէ, այս աղէտից շկրնալով դիմանալ՝ մնուա։

Քոնքու Դ և Մանքու . — Ֆրէտէրիկ Ռ Երկու որդի կ'մազուր Քոնքու Դ, որ Գերմանիոյ կայսր եղաւ և Մանքու : Բայց Խննովկենտ պասին որ Ֆրէտէրիկի մահուան վրայ մեծ ու բախութիւն զգացեր էր, անմիջապէս Քոնքատին գէմ խաչակրութիւն քարոզեց և յաղթանակաւ Լիոն քաղքէն Խոտալիա գառնալով միտքը գրաւ Նարուին ու Սիկիլիան Հռոմի վիճակներուն միացրնել։ Այսպիսի պազական մեծ տէրութիւն մը կազմելով՝ Պապը կ'յուսաբ որ բոլոր Խոտալիոյ մանը իշխանութեանց վրայ կ'իշխէ և Գերմանիոյ իշխանները բռլորովին կ'վանէ։ Ուստի անմիջապէս մի շատ զործակատարներ զրկեց Սիկիլիա և Նարուի որպէս զի ազնուական ու քաղաքացի զերմանական իշխանութեան գէմ ուոք հանեն։ Սակայն Քոնքատի եղբայրը Մանֆրէտ՝ որ արդէն Սիկիլիոյ խնամակալ եղեր էր, ապստամբութիւնները զսպեց։ Թէ և տասն և ութ տարեկան էր, բայց բնտիր գաստիարակութիւն, կրակոտ բնութիւն և անվեհեր հոգի մ'ունէր։ իր հօրը կենդանի պատկերն էր և Խոտալիան շափէն առելի կ'սիրէր։ Երբոք Քոնքատ Խոտալիա հասաւ ամեն բան խաղաղցած գտաւ, բայց իր խրախաւ և անզութ ընթացքով

Խտալացոց առելութիւնը դրզուց իրեն զէմ:  
Սակայն քանրաստ յանկարծ մեանելով, Սիկի-  
լիացիք Մանֆրէտը թաղաւոր ըրին :

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Ըստ ԱԿՀԵ-ՅԻՆ — ԱՌԱՋԵ ԵՐԵՎԱՆԻՆ :

(1706—1705)

Ըստ ԱՆԴՐԵՅՆ Բ-Ք-Մ-Ր ՍԵՒԵԼԵՎ : — Խննով-  
կենտ Դ շատ ու բախացաւ Քոնրատի մահուան  
վրայ և Կուէլֆեանց բանակով մը Նաբոլի զնաց  
և զայն պաշարեց : Բայց Մանֆրէտ՝ որ խոյս  
տռեր էր, բառական ժամանակ թափառելէն  
ետեւ յաջողեցաւ Լ-Ն-Ն-Ք-Ք քաղաքը հասնիլ և  
բանակ մը կազմելով Նաբոլիի վրայ քալել :  
Խննովկենտ վշտէն արգելն մնուեր էր :

Մանֆրէտ ժամանակ մը կառավարեց երկու  
Աիկիւեայց տէրութիւնը . Խտալացոց համա-  
կրութիւնն այնքան զրաւեց որ Ֆլորանս և Լոռ-  
քա քաղաքներէն Կուէլֆեանքը վնատեց և Հռո-  
մայեցիքը Պապին զէմ զրգուեց : Այն առեն  
Ուշունչ Դ պապը տեսնելով որ Մանֆրէտ  
քիչ քիչ բոլոր Խտալիոյ վրայ պիտի տիրէ :  
Էթ Նախարարութեան տիրուր քաղաքականութիւնը  
բանեցաւ, օտարական իշխանի մը զիմեց օտա-

բականի մ'իշխանութիւնը կարծանելու համար՝  
Աւստի Սիկիյիոյ թագը Անդրեյի Շահը լիծայեց,  
որ Ս. Լուիի եղբայրն էր, ոյս պայմանու որ  
իրեն տարեկան տուրք մը վճարէ և Բէնէլլենուի  
վիճակն Հոռոմի Աթոռին թողու։

Այս Անժոհի իշխանն՝ որ որքան քաջափրատ և  
դղրեղ, նոյնքան փառանէր էր ու զուռղ և միան-  
կամային Հռոմի պատպական աթօնին անձնուէր,  
յօժարակամ ընդունեց Պապին առաջարկութիւ-  
նը և զօրք ժող վելով Խաչարիա անցաւ։ Հռոմ  
հանելուն՝ Պապը զինք թագառոր օծեց և Կա-  
րողիի վրայ ուղարկեց։ Մանֆրէտ ուղեց իր  
թշնամին Հեռացընել բանակցելով։ Ըարլ այս  
արհամարհուտ պատասխանը տուաւ գետպանին։  
«Գնաւ Լուչերոյի ուղղանին ըստ որ մեր մէջ  
ոչ հաշտութիւն և ոչ զինադաւլ կրնայ լինիլ,  
քիչ ատենէն զիս արքայութիւնը պիտի մազընէ-  
կամ ես զինք զժոհարը պիտի զրկեմ» Պալուէ  
եզերքին մօտ ՚ի Կը-Նորէլլ պատերազմն սկսաւ։  
Այն միջոցին որ Մանֆրէտ իր պահեստի զօր-  
քով յարձակելու կ'սպատրաստուէր, իր սաղա-  
ւարախն կատարն, որ արծաթէ արծիւ մ'էր  
զար ընկառ։ «Այս Աստուծոյ մէկ նշանն է ո  
ըստ և կոտրն մէջ նետուեցաւ։ Երեք օր ետք՝  
զիակներու մէջ զտան Մանֆրէտի մարտինը։  
Ըարլ կ'մերժէր որ անոր պատուառոր շիրիմ  
մը կանգնեն. այն ատեն վրանսացի առայեանն ըն-  
մել մէկ քար առին և անոր զամբան մը շինե-  
ցին. սակային Պապին նորիրակն դժբաղդ իշխա-  
նին զիակը հանել և անոր ուկորներն առհմա-  
նագլուէն զուրս նետել առաւ։ Այսպէս վեր-

ջացաւ Հոհենշդօֆենեանց տիրապետութիւնն Խ-  
տալիոյ մէջ, Կուէլֆեան կուսակցութիւնն՝ որ  
Փրանսական կուսակցութիւնն մը դարձաւ. յաղ-  
թանակը տարեր էր. սակայն քիչ առենէն այն  
ալ ատելի եղաւ Խտալացւոց :

Քննութէն. Եթ ճանչ. — Ըարդ իրքեւ յաղթա-  
կան մտաւ. Նաբոլի, որու ընակիշներն զինք ե-  
ռանդագին ընդունեցան : Բայց քիչ ատենէն  
այնքան կեղեքեց ժաղավորդն՝ որպէս զի իր զի-  
նակից Փրանսացիները վարձատրէ, որ ընդհա-  
նուր գժղոհութիւն պատճառեց : Մանվրէտի  
որբեարին Ֆրանսայի Բրովանս գաւառը զրկուեր  
և զնդան գրուեր էր, որ իր որդիներն երե-  
սուն տարի մնացին : Ախալ լեանց և բոլոր գժղոհ-  
ներուն յոյսը Քննութէնի վրայ էր :

Այս Քննութատէն՝ Քննութատ Դի որդին էր որ՝  
իր հօրու մահուան մահանակ՝ զեռ օրորոցի ման-  
կիկ մ'էր. իր հօրեղբօր՝ Պավիեթայի կայսրըն-  
տրին պարագալ մեծցեր և արդէն տաօնվեց տա-  
րու եղեր էր : Իր ցեղին ձիրքն ոնէր Քննութ-  
ատէն, բարձր խելք և ազնիւ ու հրապուրելի  
կերպարան : Իր շիկացին մազերն ոլորին ու-  
վեղը առատօրէն կ'ծածկէին : Պատենցի Ֆրեդէ-  
րիկ հետ սերտ բարեկամութեամբ կապուած  
էր, և այս ալ իրեն պէս՝ իր ժառանցական ի-  
րաւունքն : Աւստրիոյ երկիրներէն՝ զրկուած էր  
Պապին ձեռօր : Քննութատէն աղքատիկ և թա-  
փառական կեանք մը կ'վարէր՝ երբոր Ախալ-  
լեանց կողմէ պատզամուռներ եկան իրեն և  
ստակ բերելով խնդրեցին որ Խտալիա իշնէ և

իր նախնեաց թաղաւորութիւնը ձեռք ձգէ : Քոն-  
րատէն անոնց խնդիրը կատարելու յանձն ա-  
ռաւ , թէ և մայրն արտաստելով կ'աղաջէր որ  
այդ վտանգուոր արշաւանէն եւտ կենց : Ի սկզբան  
ամեն բան նպաստաւոր կ'երևէր Քոնրատէնին ,  
Գերմանիոյ նշանաւոր ազնաւկաններն անոր միա-  
ցան . Սիկիլիա ուոք ելտ . իր նուատորմիուր  
Հարլինը ջնջեց : Այլ և այլ քաղաքներու ընա-  
կիշներն , Հռոմայեցիք անզ ամ՝ զինք յաղթա-  
նակաւ ընդունեցան : Պապը Հռոմէն վոնտուեր  
էր նորէն : Քոնրատէն ուզեց որ իր զօրքը՝ ծաղ-  
կեայ պասկիներ գրած՝ իրեն աչս՝ փողոցներէն  
անցընէ : Երբոր Ալեքսանդրի բերդին առջեն ե-  
կան , ուր Պապը քաշուեր էր Քոնրատէնը բա-  
նագրելէն ետե , առջակէզ ընելու համար  
կ'տանին այս զոհն , բսաւ այն տանն Կլեմեն Դ-  
պապը ներկայ դանաւղներուն : Ութ օրէն այս  
բանակը ընաջինջ պիտի լինի : Քոնրատէն ար-  
դէն նարուիի կ'մօտենար երբ Ակոմիլոյի մօտ՝  
Ալլու դաշտին վրայ Հարլի զօրաց հանդիպե-  
լով՝ զանոնք ՚ի վախտաւ դարձուց , սակայն  
յանկարծ թշնամոյն պահեստի հեծելազօրը  
հանելով այն մի ջոցին որ Գերմանացիք փա-  
խըստականները կ'հալածէին , մեծ ջարդ մը  
տու առ անոնց :

Քոնրատէն իր Թրէտէրիկի բարեկառին հետ  
խոյս տալով մինչեւ ծովեզը հասաւ և Բիզոս  
զնալու համար նուակ մը բռնեց : Բոլց այն  
կողմի իշխան մը զանի ճանշելով ծովու վրայ  
ետեն ընկաւ , զանի բռնեց և Հարլ իշխանին  
ծախեց : Հարլ Հռոմ տարաւ իր դժբաղգ դե-

թին լնկերներուն հետ՝ շղթայակասդ և հետիունն է Ո՛ մայր իմ, մայր իմ, կ'զուէր թշուառ պատանին, արտօնոք թափելով, դու արդէն դուշակեր էիր. խեղճ մայր, որչափ ցու սիհաբ զգաս արդեաք: Սակայն այս ողբն երկար չտեսեց և Քոնրատէն դիւցաղնական արիութեամբ այդ աշետից համրերեց: Պատզը Ծարլէն սպահանջեց Քոնրատէնը, բայց նա չէր ողեր այսպիսի վասնուուոր հետամուտ մը Հռոմի քահանայապետին յանձնել, ուստի վութաց մահու մահը վճռել տալ: Եւ որպէս զի արդարութեան զայն մը տայ այս վճռոյն՝ զատաւորեար ատեան մը կազմեց իրը թէ Քոնրատէնը զատեն: Թէ և ամենոք զիտէին Ծարլի կամքը, բայց այնքան կ'կարեկցէին Քոնրատէնի թշուառ թեան, որ զատաւոր մը միայն մահուան արժանի զատեց զանի: Ծարլ հրամայեց որ Քոնրատէնը զիտաւուն: Եր Գրէտէրիկ բարեկամին հետ Տատրակ կ'խաղար բանտին մէջ Քոնրատէն յուտպով որ ներում պիտի զանէ: Երբ եկան իրեն խմաց տուին մահամիջուր: Երկու բարեկամներն անվրդով լսեցին զայն և մահուան ուատրատաւելու համար երեք օր խորրիցին: Երե՞ց կտակին ըրբին: Պատզէն արձակում առին, հալորդուեցան և միասին զիտաւութեան բերելուան: Այս ընթին վրայ՝ զոր՝ ի պատիւ արքայական տահմին՝ կարմիր կերպասավ պատեր էին: զահիճը կեցեր էր՝ ուղերեն ու թեերը մերի և տառարր ձեռքը: Բայց մողովուրով հրապարակի իջեր էր, ինչպէս նաև Ծարլ: Ա Ո՛ մայր իմ, մոն աղետայի լու ու սիհաբ ըերեւ

քեզ ։ Գուշեց պատահնին, և սակա բռլոքեց այս  
անիրաւ վճռոյն զէմ։ Ֆրանոայի սապետներ  
արատոք կ'թափէին, և երբ դահիճը տապարը  
վերցուց ամենը ծունդը դրին և ազօթք ըրին։

Երբոր Ֆրէտէրիկ տեսաւ իր բարեկամին  
զլուխը զետինն ընկած, մոլեղին յուսոհատու-  
թեամբ սկսաւ պուալ. սակայն ինքն ալ բոնու-  
լով զլատատեցաւ։ Ըարլ թագաւորին փեսան՝  
Ֆրանտրայի Ռոպէրգը՝ սաստիկ գայրանալով՝ մա-  
հավճիռն արձակող դատաւորին վրայ վազեց և  
առ իր հարուած մը տալով կիսամեռ իր ամեռ-  
ուն վար նետեց։ Բոլոր սապետները զովեցին  
այս վեհանձնական զործը, վասն զի իրենք ալ  
սրամուած էին Քոնրատէնի և իր բարեկամին  
անիրաւ մահուան վրայ։ Աւանդութեամբ կ'ր-  
ատի թէ՝ Քոնրատէն մահարեր հարուածը ըն-  
դունելու միջոցին՝ իր թամբառնն ամբոխին մէ չ  
նետեց՝ վրէժինդիր մը կոչելու մաօք։ Այս  
թամբառնը հանդիսականներէն մին առնլով՝ տա-  
րեր Արակնի թագաւոր՝ Պետրու Գիտուեր է,   
որ Մանֆրէտի աղջկան ամուսինն էր և որ Հո-  
հենցգօվիէնեանց վերջին շատախղին, այս է  
Քոնրատէնի մահուամբ՝ այս անուանի ցեղին  
ժառանգորդը կ'սեպուէր։

Անժուցէ Ըարլին կուսանելը ի՞որհո՞րդակերը։ —  
Ալպայի Հակատամարտէն եռեւ։ Ըարլ իր իշ-  
խանութիւնն ամրացած կարծելով՝ միծ միծ  
խորհուրդներ երկնեց։ Եր որդին Ըարլ Կ-ը,   
Հունդարիոյ թագաւորին քրոջ հետ կարգեր էր,  
և իր աղջիկն Փէլլուու Ք-որդակիլ, որ Կ. Պոլ-

ող լատինական մէրսթեան անուանական և ու-  
ռանգորդն էր։ Արդէն Քորֆու կղզոյն և Ալ-  
պանիոյ ախրելէն եաւ՝ մեծ նաւատորմով մը  
Կ. Պօլսոյ վրայ կ'երթար՝ երբար իր եղբայրը  
Ս. Լոմի զինք հրաւիրեց որ իրեն հետ Խոչա-  
կրաց պատերազմին մասնակից լինի։ Շարլ Ժ. ր  
կրիար անսատուել իր մեծ եղբօր, ուստի յանձն  
առան Խաչակրութիւնը՝ խեղբելով միայն որ  
զօրքը Թունուզի վրայէն տանի Խրուսաղէմ, որ-  
պէս զի Թունուզի իշխանէն, որ հարկատու էր,  
հարկը պահանջէ։ Սակայն երբ Ափրիկէ հա-  
ստ. Շարլ իր եղբայրը Լոմին մանախաւէն մ-  
ռած զտու և այն տաեն իր նաւատորմն առ-  
նելով Կ. Պօլիս պիտի զիմէր երբ յանկարծ  
ստակալի գեղգ մը ստիոցեց զինք իր խորհրդէն  
ետ կենալու։

Հռոմի պատվն ակսեր էր վախնալ Շարլէն ո-  
րու իշխանութիւնն օր ըստ օրէ կ'առենար,  
ուստի անոր զէմ զնելու պատրաստուեցաւ։  
Դախի Պապը Գերմանիոյ մէջ ամբաժ անիշխա-  
նութիւնը վերջացաց և Հառուուրի Ուուուչը  
կայսր անուանել տառան, որպէս զի 'ի հարկին  
զերմանական զօրութեամբ Խարովիի թագաւո-  
րին զէմ զնէ։ Ապա Կուէլֆեան և Կիպրէլան  
կոսակցութիւններն իրարու հետ հաշտեցաց և  
ջանաց Արևելեան եկեղեցին Արևմտեանին հետ  
միացրնել։ Սակայն Շարլ պատական աթոռին  
այս թշնամական ընթացքէն շախորժելով ամեն  
չանք 'ի զործ զրաւ որ անոր խորհրդներն ՚ի  
զերե հանե, և երբ Պապը (Պափդոր թ) մ-  
ռան, Շարլ բռնի ուրիշ պատմ'ընարել տառա-  
որ իրեն նպաստու որ էր։

ՍԻՇԵՐ ԵՐԵՎԵՐՆ . — Երբ մի անգամ Ըստլ  
Հռոմի Աթոռն իր կամաց հնագանգեցոյ՝ սկսու-  
թոնանալ Խոտալացոց վրայ . Մանաւանդ Սիկի-  
լիոյ բնակիչները ստուտիկ կ'ատէին զինք . վասն  
զի իր զործակալները զանոնք կ'կեղեքէին ու  
կ'նախառաւէին : Սիկիլիացիք վրէժ լուծելու հա-  
մար առ թի մը կ'ապատէին : Արդէն սիկիլիացի  
ազնուական մը՝ Յովեաննէս Փարեւու անոն , որ  
Ֆրեւերէի Բին բժիշկն եղած էր , ծպտեալ Եւ-  
րոպա կ'պարտէր Անժոյի Ըստլին զէմ թշնա-  
միներ զրգուելու : Արականի թաղաւոր՝ Պետրոս Գ՝ որ զժրաղդ Քոնրատէնի վրէժը լուծե-  
լու մտադիր էր : Կ'ներկայանար իբրև ժառանց  
Հոհենշդօֆէնեանց և նառատորմիու պատրաս-  
տելով կ'ապատէր որ Սիկիլիացիք ոտք ելնեն :

Յանկարծ Զատկի օր մը (1282) սոսկալի  
յեղափախութիւն մը ծագեցաւ : Աղջիկ մ'իր  
նշանածին հետ եկեղեցի կ'երթար պատկուելու :  
Ֆրանսացի զործակալ մը՝ արդիւեալ զէնք մը  
փնտուելու պատրուակաւ՝ կ'ուզէ նոյն աղջկան վը-  
րայ նայիլ : Այս բանիս վրայ նորաաի օրիորդը  
կ'մարի . Սիկիլիացի մը Ֆրանսացի զործակալը  
կ'սպաննէ և այս՝ ընդհանուր կոտորածի մը նշա-  
նը կ'զառնայ : Բաւերմի բնակիչներն իսկոյն ոտք  
կ'ելնեն և քանի մը ժամուան մէջ երկու երեք  
հազար ֆրանսացիք , տղայ , կին , ծեր՝ անխնայ  
կ'շարդեն : Միւնայի բնակիչներն ալ այս օրի-  
նակին հետեւլով՝ կ'շարունակեն կոտորածն որ  
բոլոր կղզոյն մէջ ամբողջ ամիս մը կ'անե .  
այնպէս որ զրեթէ ամեն Ֆրանսացիք կ'սպան-  
նուին :

Ահա այս կոստրածն է որ Սէկւլու Երեխոբն  
ի կոչուի : Բալերմօի մէջ Հասարակապետութիւն  
հաստատեցաւ և միու քաղաքներն ալ զօրք  
սրատրաստեցին որպէս զի իրենց ազատութիւնը  
պաշտպանեն : Այս լուրն իմանալուն՝ Անժոյի  
Ըարլ սաստիկ կատղեցաւ և մեծ բանակով մը  
զնաց Սիկիլիա քաղաքը պաշարեց , որ անձնա-  
տոր լինելու կ պատրաստուէր՝ երբ Արակմանի  
թագառորին նաւասարձն հանելով բոլորովին  
յաղթեց ։ Նարոլիի թագառորին նաւասարձն :  
Կ պատմն թէ Ըարլ Անժուցին ծովեզրէն իր  
տորմջին սպարառութիւնը դիտելով՝ իր դաւազանը  
կ'իրծէր կատաղութենէ : Սակայն Ըարլ նորէն  
պատերազմի սրատրաստեցաւ առանց վհանե-  
լու : Պապն (Մարտին Դ) իրեն ձեռնատու էր և  
Պետրոս Գր բանագրելով՝ անոր դէմ խաչա-  
կրութիւն մը կ'քարոզէր : Սակայն երբ Ըարլ  
Քրիստոնի նաւահանգիստը մեծ նաւասարձնով մը  
կ'սպատրաստէր՝ իր որդին Ըարլ Կաղն , անոր  
սպատելու աեղ՝ Նարոլիի մօս Պետրոս թագա-  
ռորին՝ Ռուէ Լորի անուն ծովակալին հետ կուխն  
սկսաւ և անոր ձեռքը զերի մնաց : Սիկիլիացիք  
Ռուէն մահուան գատապարտեցին՝ Ք. ոնրատէնի  
վրէմը հանելու համար . բայց Արակմանի թա-  
գառորն ու թագուհին թոյլ շառւին որ այդ մահ-  
համբիուը զործադրուի և Ռուէն Սահնիա փա-  
խադրեցին : Ըարլ Անժոյին այսքան աղետից  
չկընալով դիմանալ մեռաւ (1285) : Այս կղզին  
զատ թագառորութիւն մը կազմեց Արակմանի ցե-  
ղին տակ մինչև Ժէ գար , որմէ եաք նորէն Ա-  
րակմանի տէրութեան մրացաւ : Անժոյի ցեղին մի-  
այն Նարոլիի տէրութեան վրայ տիրեց :

գույքանիոյ վեհակ . — Գույքանիոյ կոյսերական իշխանութիւնն իստալիոյ և առաջական իշխանութերու զիմ շարունակ կռուելով ակարացեր էր : Իրաւ և որ առաջին մեծ զիմակիներն աւ կործաներ էին : Բնակառակին մահուանէ եղաք : Առաջին և գրաւանդան , որ իր իշխանութիւն կալուածքն էին , այլ և այլ մաս բաժնուեցան , ինչպէս որ Գրիգորիկ Պարագարապոսի ձեռաք Սուսաննի բաժնուեր : Այս առևն բաժանուածքներն յառաջ եկած բազմաթիւ գյուղեթիւններ , կամոթիւններ , եպիսկոպոսութիւններ , քաղաքները կերպով մասնկան իշխանութիւն մը ստացեր էին և կայսերական իշխանութիւնն ակար կ'մնար : Դերմանիոյ մատակայ իշխաններն , ինչպէս Տանիմարբայի , Լեհաստանի , Հունգարիոյ թագաւորներն , որ երկար առևն կայսրութեան մասունքը կ'կառան ին , առ նորմէ բաժնուածքն , նոյնպէս և Պուրկոյնի թագաւորութեան չին հարաւակ իշխաններն եւ կայսերական իշխանութեան լուծը թագաւորութեան :

Հետեւայէս Դերմանիոյ՝ Փակ գարուն՝ բալորութիւն անիշխանութեան մը կ'զանուէր , Մինչդեռ Գրանապի մը զ Ո . Լուսութիկ՝ առ ստացին իշխաններներն բրարու զիմ կռուելու . իրաւանները կ'առներ , որ ժամանակին բոլոր առ ազակութեանց պատճառն էր , այդ մասնաւոր հարիւներն եւ կայսրութեան ստակալի վասներ կ'բերէին : Առևն բարձր աեզեր անթիւ ամրոցներ լինուած էին , որ իրոք զաղ ու առարտ պատճառներու որինքը դարձեր էին : Այս առևն սրազհեան այս անկարգութիւնները զապոդ իշխանութիւն մը չկար , հասարակաց պաշտպանութեան համար այլ և այլ զանակցութիւններ կազմուածքն , ամսնը ազնուական զառու և ունակը քաղաքացւոց կողմէ . այս վերջիններուն զիմաստը նպաստակն էր հազարդակցութեան և զանազականութեան միջնորդներն ապահովէւ : Ինչպէս էին Հայունների գույքանիոյ կ'ըստ կանոնակարգութիւնների որ Հայուններ քաղաքներն կ'բազ կանոնակարգութիւնն էր համար Հայուններ , և Հայունների գույքանիոյ կամ Հայուն , որոց մը էին մի շատ հիմնախույն քաղաքներ , ինչպէս Հայունների : Պէտքաւ , Լասողէն : Պէտքէն : Պէտքէն : Պէտքէն :

Արդէն Ֆրեմերիկ թի որով ծագեր էր այս անիշխառ նուժին, որ մահաւանե եռակ՝ ընդհանուր կ'զանցայ: Ահա այն ժամանակը կ'սկսի: Հետ անդըն առաջ ըստածը (1250—1273), չե թէ անոր համար որ Գերմանիա կայոր չուներ այն միջոցին, այլ անոր համար որ կայսերական զօրութիւնը չառ կոտրեր էր:

Խորակու ձեւուլ: — Խոսալիոյ հարաւային կողմը քիչ չառ միութիւն մը կ'ափրէր. առիոյն երբ պատերուն վասառի ըստեամբ Փրանսացի և արակենացի իշխանները եւ կան ամբուցին, այս միութիւնը խանգարեցաւ և Աթիելիոյ ու Կարոլիի մէջ հակառակութիւնն սկսու: Խակ Խառալիոյ միու մասը՝ Ժ.Գ. զարուն՝ մէկ անկարգութեան մէջ կ'ինոյ կուել վեճուց և Աթիելիոյ մզան արինահեղ պատերազմիներուն պատճառաւ: Ըստ անզամ նոյն քաղքին մէջ այս երկու կոտակցութեան մարդիկ զանուելով՝ կատաղի կուի մը կ'անուին, և երբեմ մէկ երբեմ միու կողմը կ'յաղին էր. չառ անզամ ալ բնչովու հին հասարակացեաւութեանց մէջ կ'պատահէր, յաղթեալ կողմն արտորուելու կ'պարտաւորէր, և եթէ արտաքին ոգնութիւն գտներ կամ յեղափախութիւն մը պատահէր իր հայրենեաց մէջ՝ կ'վերադառնար և իր հակառակորդները կ'վաճառէր:

Տասը մանաւանդ ազնուականաց նեռոյ ծագած և ըկուռակութիւնները հասարակացեաւութեանց չառ աղետարեր եղան: Երբեմն կոտակցութիւններն առելի միութիւն և զյու սահմալու համար՝ Շառաւոր պարապլաններ կ'ընտրէին, երբեմ նոյն թու մոզավորով՝ ազնուականաց կութերէն ճանձրանալով՝ սամար ազնուական մ'իբրեւ տէրութեան զլու խ կ'կարգէր: Այս պետերն, որ սովորաբար քաղաքապետ կ'կոչուեին և պայմաննեալ ժամանակուն մը համար ընարուած էին՝ համբավարական կարգու կանան զնիվելու կ'յաջողէին որպէս զի թժագաւորական իշխանութեան համեմատ իրենց իշխանութեան ներքեւ մի չառ քաղաքներ միացուցին: Ժ.Գ. զարուն սկիզբն Ունիւնիւն ընտանիլը

(Անրին Խոալիոյ Ախողելեանց պարագլուխը) ամեակ մը  
ողեառ թիհն հաստատեց Պարէվէլը : Ալեքսանդր : Ալեքսա-  
նդր Բարուն քաղաքները միացընելով : Բայց Եվլունի ան-  
գիտութիւններն Արեւուրիկ Բի մահուան վրայ՝ բարոր  
ժաշավարդն իրեն զեմ գրգռեցին : Ինք սպանեացաւ և  
ընտանիքն ալ բնաջինը եղաւ : Այս առեն երեկոյի հան-  
դիսացան Տեւլը Աւաշները Ալեքսանդրի մէջ, Լուսիւնի-  
արքարարոյի մէջ, Ալեքսանդրիներն Արէւանի մէջ, և Ժա-  
դարեն ակնեալ՝ այս քաղաքները այն ընտանեաց ձեռոք  
կառավարուեցան : ——

ՀԱՅԱՍՏԱՆ

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԿԱԴԵՄԻ

Ժ. Վարդեն Հենրի Ժուլ Պատրի

Վարդեն Պատրի

Վարդեն Պատրի

Խաղաղութեան պատմութեան գործականութեան աշխատանքնեւն,

(450—1087)

Բարեկառնութեան . — Անկարայ առաջին բնակիչ -  
ները Պարտակաները՝ կամ Բարեկառնութեան եղան , որ  
Կեղատական ցեղեն կ'իջնէին . ուստի այս երկիրն  
երբեմն Բարեկառնութեան կ'կոչուէր : Խոկ Ակավախու ,  
որ այն առեն Գալերանութեան կ'ըստուէր . Բարեկառն  
և Ակավախու երկիրն էր , որ անդադար կողուայն  
հարաւային կողմերը կ'արշաւուէին : Համաձայն պատմութեան  
նուաճնեցին Մրետուներն եւ որպէս զի Բիկսերն  
և Ակավախու զոտեն՝ Անդանութեան և Առբանութեան  
երկու երկայն սպարիսապները կանգնեցին , որ առ  
օրեւլքէն արեւմուտք , մէկ ծովէն միւսը կ'հաս  
նէր : Ասիս Բարեկառնութեանը Բրիտանիան հաս  
տառուեցաւ , ապա՝ Խրլանտա (Հիբրանիա) : Խրլ  
անտայի եկեղեցին , զոր Ա. Պատրի հիմնեց , ե-  
րեւլի եղան . վասն զի շատ մնաստաններ հաս  
տառեց և բարբարոս ժաղավարութները քրիստո-  
նէտ վեան զարձրնելու համար այն առեն կը-

բռուա քարոզիչներ ուղարկեց : Այսպէս և զարուն սկիզբը՝ Բրիտանիա՝ Եւրոպայի ուրիշ երկիրներուն պէտք չունի քաղաքակրթութեան և քրիստոնէութեան ազգեցութիւնը կրեց : Քիչ առենքնէն՝ բարբարոսաց արշաւանն ալ պիտի կրէր :

Ս-մ-ժ-ն-է-ը Բրիտանի- Շ-ր-լ-ո-ւ-ն- . — (450)  
 Հումայյեցիք իրենց բալոր զօրքերը հաւաքելու  
 ստիպուեր էին որպէտ զի արշաւող Գերմանա-  
 ցոց դէմ զնեն . ուստի Բրիտանիայէն ալ ի-  
 րենց լէզէռները կանչեր և այս կղզին ազատ  
 թագեր էին : Այն ատեն՝ Բիկուերն և Սկովա-  
 ներն սկսան աւելի համարձակութեամբ Բրիտա-  
 նացոց երկիրն արշաւել և մեծ աւերտմեներ  
 պատճառել : Բրիտանացիք, որ անկարող էին  
 իրենց հոգերն ու ազատութիւնը պաշտպանել,  
 զրուն օգնութիւն խնդրելու ելան : Եւ որովհե-  
 տե այն առենքներն սորսօն ծովահեններ՝ Գեր-  
 մանիոյ ծովեզերքէն մեխելով հիսոխային ծով-  
 եզրը կ'ասպատակէին՝ Բրիտանացիք անոնց զլիա-  
 ռոր զօրավարներուն զիմեցին և հրափրեցին որ  
 զան իրենց օդնեն : Սաքսոններն սիրով ընդու-  
 նեցին այս հրաներն ու իրենց Հենիկու և Հոդ-  
 ու զօրավարներուն առաջնորդութեամբը Բրի-  
 տանիա մուտք, Բիկուեանց յաղթեցին և այս ծառ-  
 այս թեան փոխարէն՝ Թանէդ կղզին առին,  
 Դանէդ զետին բերանը, Քենէդ զատուին ծովե-  
 զրին մօտ : Բայց այս յանդուզն բաղդախնդիր-  
 ներն այս կղզիաց զոհ չեղան : Հենկիստ բանի  
 զրասեց բոլոր Քենդիին և ինքզինք Քենդի

թագառոր անուանեց : Այսպէս հիմնեցու Բրիտանիոյ մէջ սաքսոնեան առաջին թագառորութիւնը : Հենկիսափ յաջողութիւնը առևանձլով ուրիշ Սաքսոններ ալ Բրիտանիա արշաւեցին և ուրիշ երեք թագառորութիւն հաստատեցին : Ըստ չանցու՝ Եսաունադ կղզին բնակող Անդ ներն ալ , որ Սաքսոններուն պէս ահարկու դարձեր էին իրենց ասպատակութեամբ , Բրիտանիոյ եզերքը կուսացին և երեք նոր աէրութիւններ կազմեցին : Այսպէս եօթն զերմանական թագառորութիւնն հատածներ (546) :

Եշտիութեամբ . Աշտիութեամբ . — Եշտիութեամբ թիւններն ի սկզբունք իրարու հետակառութեամբ չեին . ընդ հանդապես , երրենն ալ իրարու գէմ կ'կուռեին : Անզայի երրոր ուրիշ ժաղավորդներ սկսան դրահն զալ և Անդին արշաւել՝ եօթն ի շխաններն իրենց ջահերը պաշտպանելու . համար միացան : Ընդհանուր ժողով մ'առնելին Աշտիութեամբ : Կամ իմաստոց ժողով , որ եօթն պետութեան այլ և այլ զորեներու զրոյ խորհրդակցութաւ . համար կ'զումարուեր : — Այսպէս Անդին մէջ հաստատուեցան զերմանական իշխանութիւնը : Այսուհետեւ Սաքսոններն երկրին բոլորովին ափրեցին , և անոր ժաղավորդեան գլխաւոր մասը մինչև այսօր սաքսոնեան ցեղեց կ'համարուի : Խակ Պէտքաններն մէծ մասամբ չելքուեցան , մէկ մասն ալ երկրին գէտ ՚ի արքանեան լեռները քառեցան , որոնց լուել կամ կուի նահանգը կուռեցան , մաս մ'ալ Պալլիու Արևոքի գաւառը զնաց բնակեցան , և այս գաւառը Բրիտանիա (Պրեզայն) մասնն առան : մինչդեռ հին Բրիտանիան Անգլիա կ'կուռելը : Բրիտանիութիւնն ալ Պրեզայնը հետ անհետ եղաւ , բոլց քիշ առենքն ԱՌ ՕՌ Ռ Անգլո-Սաքսոնները սրբառնեալ թեան դարձուց :

Դամիսիոն արշակուն . Մէջն Ալֆրէտ . — Եօթն-  
պետոթեան մէջ ներքին կոիններն անսպակառ  
էին : Աւեր ջապէ ո Վեհակուսի թագաւորը Մէջն  
Կէղերտ Ընկլիոյ բոլոր ժողովորդներն իր իշ-  
խանոթեան ներքե միացոց և մէկ թագաւո-  
րութիւն կազմեց : Սակայն ներքին անկարգու-  
թիւնները բաւական չէին , օտարականներ ար-  
շարունակ կ'արշաւէին Ընկլիա : Ասոնք էին Նոր-  
ման կամ Գունդէլ ծովասպատակներ որ՝ ինչպէս  
Եւրոպայի ուրիշ երկիրներու , նոյնպէ ո Ընկլիոյ  
տիրեցին : Աւստրիա և Շվեյցեր թագաւորն ա-  
նոնց զէմ պատերազմելով մոռաւ (872) :

Եթելլրէտի յաջորդեց իր եղբայրը Ալֆրէտ ,  
որ քիչ մ'ատեն ասպատակութեանց դէմ դրաւ :  
Ալֆրէտ քաջասիրտ , մեծանձն ու բարեկիրթ  
իշխան մ'էր . Հռոմ առած էր իր կրթոթիւնն  
և ժամանակին ամենէն դիտուն զրադէտներէն  
մին կ'սեպուէր : Աւստի իր ժողովրդեան վերա-  
նորոգիչն ուզեց լինիլ և ամոր կոշտ բարքն ու  
սավորութիւններն ուզել : Աւստի սկսաւ նոր  
կարդ կանոն հաստատել , և քիշ քիշ միապե-  
տական իշխանութիւն վարել : Ժողովորդն , որ  
չէր ուզեր իր հին վարքն ու բարքը փոխել ,  
թագաւորին զէմ բարկացաւ , այնպէս որ՝ երբ  
որ Դանեցիք եկան նորէն Ընկլիա արշաւեցին  
Սաքսոնները չուզեցին Ալֆրէտին միանալ թշնա-  
միները վանելու համար : Դանեցիք բոլոր եօթն-  
պետոթիւնը նուանեցին և Ալֆրէտ երկրագոր-  
ծի մը պէս ծագուեալ Սաքսոնի վախտ և  
հոգուի մը տնակին մէջ ապաւէն մինտեց : Ալ-  
ֆրէտ վեց տափու այս առանձին տեղը մնաց ան-

յայտ ու անծանօթ՝ մինչեւ որ պատեհ տոիթ գտնելով նորէն իր ժողովրդեան զլուխն անցաւ։ Խմանալով որ Սարսոնները Դանեցւոց բանութենէ կ'առաւապին և ազատելու հնար մը կը փնտուեն։ իր տնակէն ելու և բոլոր սարսօն քաջերն ՚ի զէն հրաւիրեց։ Յետոյ ասպատակներոն զէմ քալեց և զանոնք վռնտեց։ Ալֆրէտ փառաւոր իշխանութիւն մը վարեց։ կառավարութիւնը բարեկարգեց, քաղաքներն ամրացոց։ Լոնտօն տէրութեան մայրաքաղաքն ըրտ և նաւատորմիզ մը պատրաստեց որ Անկլիա ծովահէններէն ազատ մնայ։ Խնքն արդէն տևել և զրադէտ լինելով՝ օտար զիտուններ իր արրունիքը կ'հրաւիրէր, գայրոցներ կ'հաստատէր որպէս զի նոյն խոկ կղեցն, որ յետին ծայր տղէտէր, կրթոի և ժողովուրդը լուսաւորուի։ Այսպիսի նշանաւոր զործերով տէրութիւնը վերականգնեց Ալֆրէտ և Անկլիայ Շարլզը կոչուեցաւ (900)։

Ալֆրէտին յաջորդեց իր սրդին Երանեալ Երեշ, որ Անկլիայ Երանեալի տիտղոսն առաւ, ինչպէս նաև բոլոր իր յաջորդները։ Սակայն Ժ.Ա. զարոն սկիզբը գանեցի ծովահէններ նորէն Անկլիոյ ծովեզերքն երկան և ժամանակին տկարու դանդաղ թագաւորը ելլեւլէր ։ որ, ինչպէս կ'զրէ տարեղիր մը, «Մինակ վանքի մը մէջ քնանալու համար ծնած էր քան թէ պատերազմելու և կառավարելու հարկ մը» վճարութիւնը կառավարին և վերստին Անկլիա եկան։ Ժողովուրդը

թագաւորին վատութեան դէմ զայրանալով բռ-  
լոր Դանեցիքը ջարգելու զաղանի գաւագրեց և  
հանգեսի օր մ'իր խորհուրդն ՚ի զործ դրաւ :  
Այս կոտորածն իմանալով Սվէն (Սուենոն) Տա-  
նիմարքայի թագաւորն և Օլ-ֆ' Նորվէկիոյ թա-  
գաւորը՝ զրէժ լուծելու համար Անկլիա եկան  
մեծ բանակով մը և բալոր երկիրն աւերելով  
նուաճեցին : Սվէն թագաւորի պնունն առաւ, և  
էթելրէտ՝ Նորմանութիւն Ուչշր (Ուիգարտոս) Բին  
քովը փախաւ, որ իր աներն էր :

Երբ Սվէն մնաւ, իրեն յաջորդեց իր որ-  
դին Մէշն Գանձութ, որ նախ Անկլիացիքն ան-  
խայ նեղեց, սակայն վերջէն սկսու անուշու-  
թեամբ վարուելու : Արդարութեամբ կառավա-  
րեց, Ալֆրէտի դրած օրենքը վերահաստատեց  
և իր հպատակաց բարօրութեան հոգ տարաւ :  
Անկլիայ կղերին սիրար շահելու համար վանկե-  
զաւորին բանակը զային բոկուն , իրենց վկն-  
շուան մը կախուած : որպէս զի շնորհ խոզրեն :  
Ամեն առպեաներուն սիրուր շարժելով կ' լային :  
Բայց թագառորն անողոքելի կ' երեւէր և արդէն  
զահիճը բերել տուեր էր որ զանոնք զլիստել  
տայ : Դայն մի ջոցին թագուհին Անկիլային զա-  
լով ազաշեց որ այս թշուառ զերիներուն ներէ :  
Եղտարդ Ս. Բիելըն արձակեց իր ընկերներուն  
հետ , բայց Քալէւն վանտեց բոլոր այն Փրան-

ասցիքն որ չէին կամեր հաւատարմութեան երգում ընել Անկլիացւոց :

Քը եւովէ մայստերուն եռու զինուառուն . Այս իշխանութ .  
— Քը եւոիի արիւնահեղ պատերազմն որով Եղուարդ  
զրեթէ Օքանասցի պիտի ախրանար . մեծ արդիւնք մը  
չունեցաւ , և մայն Քաջէ քաղաքն Անկլիացւոց մեաց :  
Եղուարդ իր թշնամի Փիլիպպոս Ալառույի շափ նեղի  
մէջ եր և անօրրան : Աւասի մէկ տարուան զինադաւ բբին,  
որ երեք տարի ևս երկարեցաւ . մեծ ձախարդութեան մը  
պատճառաւ : Այս իշխանութը սուկուլն կուտարած ըրաւ .  
Ժազզավորդն այս ազեւոց պատճառ . Հրեայէցը սուկուլն  
զանձնք ամրատանեց որպէս թէ ազբիւթերը թաւանա-  
ւարեր են , և զայտ զանձնք ջարդեց : Ասունեց բար-  
կութիւնն իջեցնելու համար մարդիկ ու կանուք թափու-  
րով կ'երևնին : բոլոր քաղաքները կ'ըրինին և սցերան ան-  
կարգութիւններ կ'պատճառէին որ ազնուականներն ա-  
նոնց պայ յարձակեցան և ջարդեցին :

Այս միջոցին Փիլիպպոս մասու : Իր իշխանութեան  
ժամանակ Օքանասցի շատ ազեւներ համան : Անասակար  
պատերազմ , ծանր առարկեր և գրամք յարանե փոխու-  
թիւնն արյունեաց զեզիութեան ծախուց համելու  
համար : Ահա առանք են այն գերազանցութիւններն որով  
Ալառույի ցեղն իր զահակալութիւնը կ'ակնէր : Սակայն  
Փիլիպպոս Զ Տէփէնէն առաւ և այսուհետեւ Օքան-  
ասցի թագաւորներն այս կալուածքն իրենց անդրանիկ զա-  
ւակաց կ'առյին Տէփէն անուամբ :

Յունանեւ Ռաբուուրն և Աւ իշխանը . Բառապէն .  
— Իր հօրը Փիլիպպոսին կ'նմաներ Յունանեւ  
թագաւորն : Քաջասիրտ և սերծասէր եր ա-  
նոր պէս , նոյնպէս շռայլ , զոռող և կոշտ :  
Իր աւրութիւնը կառավարելու կերպը չգիտէր,  
ժողովրդեան զրայ ծանր հարկեր կ'զնէր և

գրամմերը նենցելով վարկը բոլորովին կ'կտրէր  
թէ և Ֆրանսայի և Անգլիայ մէջ զինադուլը կը  
շարունակուէր, բայց շատ անդամ անոր գէմ  
կ'վարուէ ին երկու կողմէ կռուելով։ Շատ մը  
ազնու ականներ Յովհաննէս թագաւորին անդ թու-  
մեանց չդիմանալով ապստամբեր էին։ Ան-  
լիացիք այս ներքին խոսվութիւններէ օգտա-  
քաղելով՝ կոխը կ'սկսին, մանաւանդ որ այս  
կոխներուն մէջ մեծ շահ ունեին, վասն զի  
Ֆրանսայի գաւառները կ'կողոպտէն և այսպէս  
անբար հարստութիւն գիզեր էին։ Ընդ հակա-  
ռակին Ֆրանսացիք պատերազմելու փափաք շու-  
նէին, հետեապէս յայտնի էր որ իրենց թշնա-  
մքները յաղթական պիտի ելնէին այս կոխնե-  
րէն։ Աւստի եղբարդ Դին որդին, որ ՍԼ իշ-  
խան մականունն ունէր, իր զէնքին դոյնին հա-  
մար, պորտօն Ճամբայ ելու 40 հազար զօրաց  
զնդով մը և կույլնայի մօտակայ գաւառներն  
առարտակեց։ Յովհաննէս թագաւորին 50 հազար  
զօրքով անոր գէմ քալեց և բառովիեր մօտ ա-  
նոր հանգիստով՝ պաշարեց ոյնպէս որ Սև իշ-  
խանն նեղն ընկած կ'երեւէր և խոյս տալու յոյս  
շունէր։ Բայց Անգլիացիք գարձեալ ամրացան  
բրանկի մը մըսոյ որ անմատչելի էր հեծելա-  
զօրին։ Թէ և դիբըն ամուր էր և աղեղնաձիգ  
զօրքն մացաներու և այդիներու ետին թաղած  
առաջին կարգը կ'կազմէին և կազմ ու պատ-  
րաստ էին թշնամին ընդունելու։ Բայց Սև իշ-  
խանը տեսնելով որ իր զօրքը շատ քիչ է և  
պիտի չկրնայ Ֆրանսացւոց բանակին գէմ զնել,  
իսպազութիւն առաջարկեց և խօսր առան իր

բոլոր նուածած երկիրներին եստ տալ և Գրան-  
սայի զէմ եօթը տարի պատերազմ չընել : Բայց  
Յովհաննէս՝ որ իր հօրը կրած նախատինքը  
կ'ուզեր սրբել՝ պահանջեց որ Սե իշխանը 100  
տապեաներով իրեն անձնատուր լինի : Անկլիա-  
ցիք այս առաջարկը մերժեցին :

Այն առեն թաղառորդն հրամայեց իր զօրաց որ  
Անկլիացւոց վրայ յարձակին : Ասմաք կարկուտի  
պէս նետեր կ'թափէին Գրանսացւոց զլիսուն,  
որոց ձիւներն խրաշելով՝ մեծ շփոթութիւն ձգեա-  
ցին բանակին մէջ : Խոկոյն Անկլիացիք իրենց  
պատոնէ շներէն երան և թշնամեաց վրայ յարձա-  
կելով մէկ մասն՝ ի փախուստ գարձուցին : Յով-  
հաննէս թագառորդ վասնոր տեսնելով՝ խոկոյն  
հրաման տուաւ որ ձիւուր զօրքը հետիւնան պա-  
տերազմի , վասն զի յիշեց որ Քրէսի պար-  
տութեան պատճառն հեծելազօրն էր . բայց ա-  
սով աւելի մեծ եղան ձախորդութիւնն , վասն  
զի Գրանսացի ձիւագրներն իրենց ծանր զրահ-  
ներով անկարող լինելով մարտոիլ՝ զրեթէ ա-  
մենքն Անկլիացւոց սրին տակ ընկան կամ զերի  
բռնուեցան : Յովհաննէս թագառորդն իր տա-  
պարով արիարար զիմազրելէն ետև՝ ստիպուե-  
ցաւ անձնատուր լինի : Սե իշխանն իր զերին  
շատ մեծ մարդավարութեամբ ընդունեց : Անոր  
տո ջեն ելնելու առեն ձտնը դրաւ և ինք ան-  
ձամբ սեղանին վրայ անոր սորտառորեց : Գրան-  
սայի թագառորդն Լոնդոն տարին ուր միշտ նոյն  
յարդական ընդունելու թիւնը տեսաւ : Այսպէս  
մեր ջայաւ թուազիէի ճակատամարտն , որու մէջ  
Գրանսամար 10 հազար հողի կորսնցոց և զերի-

ներն աւելի բազմաթիւ եղան քան թէ յաղթող-  
ները :

Կարդաժողմն գումարումը . — Երրոր ժողո-  
վուրդն իմացաւ որ Բուաղիէի մէջ թագաւորն  
յաղթուելով գերի ընկեր . և ազնուակաները  
փախուստ տուեր են , սաստիկ զայրացյալ և պա-  
տերազմէն դարձող իշխանները նախատանօք ըն-  
դունեց , մանաւանդ տեսնելով որ ազնուակե-  
տական դասը վատթարացեր և թագաւորական  
իշխանութիւնն անփորձ մարդոց ձեռքը մնացեր  
է , միտքը դրաւ ամեն քան բարեկարգել : Ուս-  
տի Կարդաժողմն գումարուեցաւ — որ թէ ե  
թագաւորը պաշտպանեց բայց փոխարէն կա-  
րեար զիջումներ պահանջեց : Ուզեց որ տարին  
անզամ մը դումարուի , հարկն ընկերութեան  
ամեն կարգի մարդոց վրայ դրուի , մասնախոր-  
հորդ մը կազմուի որ քննէ թէ տուրքերն ինչ-  
ովէս կ'հաւաքուին ու կ'զործածուին և թագաւ-  
որն առանց ժողովին հաւանութեան պատերազմ  
շհրատարակի . և խաղաղութեան դաշինք չհաս-  
տատէ :

Հարլ թագաւորին՝ որդին՝ Բուաղիէի պատե-  
րազմէն խոյս տալուն՝ ժողովրդեան աչքէն ե-  
լեր էր : Եր հօրը զերութեան ժամանակ՝ տէ-  
րութեան փոխանորդ եղաւ և անոր կողմէ Ֆրան-  
սան կառավարեց : Բարեկիրթ և զիտուն երիւ-  
տասարդ մ'էր Հարլ (և ասոր համար վերջեն  
իշխանունը մականունը ստացաւ) բայց նենդաւոր ,  
վատ ընտորութիւն մ'ունէր : Տեսնելով Ֆրան-  
սայի թշուառ պիճակից կարգաժողով դումարեց

որ զարման մը դանէ և ստակ պահանջէ : Ասելայն աէ բռնթիւնը վերանորոգման կարօւ էր և հետեւ ապէս կարգամողովը պահանջնեց որ Աւշանաբան-Ռէան նշանաբանէլ հաստատէ : Այս հրովարտակն Անկլիոյ Մեծ Սահմանադրին (երես 474) կ'նմանէր որով թաղաւորը յանձն կ'առնուր տէրութեան դործերը կարգաւորել և ամեն զեղծ մոնք ջնջել : Կարդամողովը խնդրեց որ իր խորհրդական պաշտօնեաները համբէ , որոնք ժողովրդեան ատելի էին և ինք մասնախորհուրդ մը կազմեց որպէս զի կառավարութեան դործերը տնօրինէ ու այլ և այլ շարեաց դարման բերէ : Բայց նոյն մի ջոցին ժողովրդեան մէջ միասակար երկպառակութիւնն մը ծագեցաւ Բարիզի հասարակութիւնն , որու զլուխն էր Սույն Մուշել քաղաքապետը , ուղեց որ իր կամքն յառաջ տանի կարգամողովին մէջ : Այս ալ բարկանալով այս նոր բռնութեան դէմ կեցաւ , և նոյն խոկ Բարիզի ժողովուրդն սկսաւ թշնամանալ Մարսէլի դէմ և անոր զօրութիւնէ ու զուռզութիւնէ դանշատիլ : Թագաւորին կուսակիցներն այս անմիաբանութիւնէ օգտագ քաղեցին : Ըարլ Բարիզէն փախառ . ազնուականները տեսնելով որ ժողովուրդն օրէ օր կ'զօրանայ և նոր նոր պահանջումներ կ'ընէ , թագաւորին կողմին անցան և անոր արտօնութիւնները պաշտպանել ուղեցին : Ըարլ բանակ մը կազմեց ու եկաւ Բարիզը պաշարեց : Բայց յանկարծ անակնեալ յարձակում մը բռլորովին թագաւորը շփոթեց : Գիւղերու ժողովուրդը տեսնելով որ Բարիզիք ըստ հանոյս ամեն բան կարգադրել կ'ուղեն պատերազմի ելու :

Ժամկետը . — Եւ ի՞նչ էր զբողացոց ազգամամբ թոթեան պատճեառը : Այս խեղճերը մեծ թշուառութեան մէջ էին : Մէկ կողմէ աղքառայի պատերազմներ , միւս կողմէ առատական իշխաններուն հարստահարութիւններն զիրենք յուսահատութեան տարեր էին : Գերի ընկած իշխաններուն փրկանքը վճարելու համար զիւղացիք իրենց ամեն ինչքը կ'ձախէին ու կ'կեղեքու էին : Ուստի քաղաքներուն ընակիչներուն պէս սուբելան 100 հազար հոդի : Ասոնք Ժամ (Յակոր) կ'կոչու էին Ժամ Պօն (միամիտ Յակոր) անուանք , վասն զի իշխաններն այս անունը կ'առյին զիւղացիներուն : Սակայն այս ազգատամբներն սոսկալի անդթութիւններ զարծեցին . ասկից ելաւ Ժամքէ անունն՝ վայրենի պատերազմն շահակերու համար : Այս ժամքն՝ աղնուական զամբն զէմ սաստիկ ատելութեամբ վառուած՝ ամեն բան կործանել կ'ողէին : Իշխաններն սպահնեցին և զղեակներն այրեցին : Այն առեն աղնուականները միացան և զիւղացիներուն վրայ յարձակելով վայրի կենդանիներուն պէս հալածեցին , ջարդեցին և ամեն բան կրակի ու որի տուին :

Գիւղացիներուն այս մեծ ազգատամբութիւնն շատ վեասակար եղաւ քաղաքներուն ընակիչներուն որոց ընթացքն ու պահանջմանքը Ժամք ըաքերուն վարմանքին հետ շփոթեցին : Ըարլ Շարիզ հասաւ , զայն պաշարեց և անոր մէջ սովորութեան զզուեր էին : Մարտէլ սպահնութեցուն մայրաքաղաքը մտաւ և քաղաքապետին Պլիառու Ընկերները զիւղատել տուաւ : Ամեն

վերահսրոգման հրավարտակները յն դաշտան և  
թաղաւորական իշխանութիւնը հաստատելով  
առաջինէն առելի շատ զօրացան :

## ԴԱՅԱՐԻ.

ՊԵՏՐԻ ՀԱՅԻ ՊԵՏՐՈՎԻ ՊԵՏՐՈՎԻ ՀԱՅԻ ՊԵՏՐՈՎԻ  
ՀԱՅԻ ՊԵՏՐՈՎԻ ՀԱՅԻ ՊԵՏՐՈՎԻ

(1360—1399)

ՊԵՏՐԻ ՀԱՅԻ ՊԵՏՐՈՎԻ ՊԵՏՐՈՎԻ ՀԱՅԻ ՊԵՏՐՈՎԻ . — Երբոք այս  
գեղագեցք Բարիղի մէջ կ'անցնէն , Յավհաննէն և  
թաղաւորն , որ զեռ Անկլիա զերի կ'մնար , և  
զուարոր Գի հետ ամօթալի գաշխոք մը կ'կնքիր ,  
որով Քաղէ , Պուլոյնը և Քլանդաժնի ից ըուլոր  
Հին երիբները , Նորմանիայէն մինչև Պիրէ-  
նեան լեռներն Անկլիացւոց կ'անձննէր , խոստա-  
նալով նաև չորս միլիոն սոկի սկուտ վճարել  
իր անձնական աշխատթեան համար : Այս ան-  
պատիւ գաշխագրութիւնը կարդալով թաղաւո-  
րին որպին Ըստ սասաիի վիշտ զուաց և միարը  
գրաւ անոր զործադրութիւնն արգիլել : Աւսաի  
թէ և թաղաւորն ընդհանուր Ասրդաժողովը կ'ա-  
տէր , այս ծանր սպարագայիս մէջ նորէն դա-  
մարեց և անոր ձեռօք խաղաղութեան գաշխոքը  
մերժեց :

Եղուարդ այս լուրն առնլոն՝ սաստիկ բարկացաւ, բանակ մը կազմեց և Ֆրանսաւ արշակուլով մինչև Բարիզի շրջակայքը հասաւ: Իր նպատակը Ֆրանսայի թագաւոր օծուիլ էր: Բայց Ըարլ Քրէսիի ու Բուադիէի պարտութիւնները յիշելով կ'զգուշանար պատերազմ մղել, այլ կ'թողուր որ Եղուարդի բանակին ինքնին մաշի ու քայլայի: Այս հնարքը յաջողեցաւ: Անկլիացիք ինչ որ ըրին, չկրցան Ըարլ արքայորդին զրդուելով որ իրենց հետ կուտի բռնուի և ամիս մ'անօգուտ տեղ այլ և այլ դատառներ արշաւելէն ետև: Ըարդի մօտ՝ Պրէտիչնէ քաղաքը կանկ առին սովէն ու հիւանդութենէ տկարացած: Եղուարդ Գ տեսնելով որ զործերն անյաջող կ'երթան՝ հաւանեցաւ հաշտուիլ և Պրէզիյնիի դաշնադրութիւնը կնկեց: Այս զաշնադրով Անկլիայ թագաւորն Ֆրանսայի թագէն կ'հրաժարէր և կ'ընդունէր միայն Լուար զետին հարաւակողմը զանուած զաւառներն, որ երբեմն իր նախնեաց կալուածքն էին (Բուադու, Օնիս, Սէնդոնժ, Լիմուզէն, Կիոյէն) ինչպէս նաև Յովհաննէս թագաւորին փրկանքը: Այնքան թշուառ զիճակի մէջ էր Ֆրանսաւ որ այս անպատճի խաղաղութիւնը մեծ ուրախութիւն պատճառեց:

Այն ատեն Յովհաննէս թագաւորն իր երկիրը վերադարձաւ, բայց շատ շնաց այն տեղ: Իր մէկ որդին՝ որ Անկլիացոց մօտ պատանդ էր, Լանտօննի փախաւ: Ասոր վրայ թագաւորն Անկլիա զնաց և ինքզինք որդոյն տեղ իրեւ զերի ներկայացուց, այս խօսքն ըսելով: «Եթէ չա-

ատարմովինն աշխարհէս վերնար պէտք էր  
որ թագաւորաց սրբին մէջ զանուէր : Քիչ  
ատենէն մեռաւ. Յովհաննէս թագաւորը Լոն-  
տօնի մէջ : Եր իշխանութեան վերջերը Պուր-  
կօյնի դքսութիւնն իր ամենէ պղայիկ որգուցն  
Յանդաշն Փէտուղոսի պարզեց , որ՝ Գլանարայի  
իշխանուհի Մարդարաբին հետ կարգություն՝ ուսու-  
րինակ ցեղը հիմնեց : Այս ցեղը մեծ կարեռ-  
ութիւն պիտի առնէր ժեւ զարուն մէջ :

Ըստ Եր բնագրութեանը . — Յովհաննէս թագաւորին յաջորդեց իր որդին Ըստ (Կարո-  
լոս) Եր բնագրութեանը : Այս իշխանն մարմնով տկար  
ու յաւագար էր . սիրելի չէր ժողովրդեան իր  
վաստութեան համար և հօրը պէտ ասպետ ու  
պատերազմանէր շեզու : Բայց հօրը դերութեան  
ժամանակ՝ ուժը տարի Գրանտայի իշխանութիւնը  
վարելուն՝ կառավարելու արտեսար քիչ շատ  
սորվեր էր՝ թէն նենգամիտ ու խորամանկ քա-  
ղաքազէտ մը գարձաւ : Փիլիպպոս Գեղեցկին  
ընթացքը բռնեց և իր կեանքն օրէնողէաներու ,  
զիտուններու ու աստղազէաներու մէջ անցոց ց  
քան թէ զօրաց մէջ : Աղետալի էր նոյն միջո-  
յին Գրանտայի վիճակը . ներքին ու արտաքին  
պատերազմներէ կործ աներ , ծանր գաշնազրու-  
թեամբ մ'իր երկրին կէսը կորուսէր էր : Վարձ-  
կան զօրադնդեր Անկլիաց ոց դրդմամբ ու ստա-  
կով Գրանտական դատաները կ'ասպատակէին  
և կերպով մը պատերազմը կ'շարունակէին իւ-  
րենց շահուն կամ Կաֆարայի թագաւորին կող-  
մէ : Այս զօրաց խումբերն Մեծ ընկերութեաններ

կ'կոչուելին : Աւստի Շարլ Խմատառն երկու մեծ  
սղաշտօն անէր կատարելու . իր տէրութեան  
մէջ կարդ կանոն վերահաստատել և որեզիյնի  
դաշնագրութեամբ կորուսած նահանջները ձեռք  
ձղել :

Դրանոյի մեջ բացելաբեռնենը է հաստատուել .  
— Ֆրանսա դրեթե անիշխանութեան մէջ էր .  
բարեկարդութիւնն հաստատելու համար պէտք  
էր նախ ներքին թշնամիները զսպել : Այս նպա-  
տակաւ ուրբարուն Տելիւլէն ազնուականը զօրա-  
պետ կարդեցաւ : Որրուայն նահանջէն ազտանի  
մ'էր Տիկերըն , քաջասիրաւ , ուժեղ և ան-  
վեհեր , որ քաղաքային պատերազմը դադրեցոց  
որրուայնի մէջ : Աերջապէս ելուզակներու զուն-  
դերէն տէրութիւնն ազաւեց՝ զանոնը Սպանիա  
տանելով , և այն տեղ պատերազմներու մէջ  
չնշուեցան :

Այս յազթոթիւններէ սիրու առնլով՝ Շարլ  
Ետափի մը կ'փնտուէր որպէս զի Ֆրանսայի  
մէջ Ընկի իացուց ունեցած նահանջները դրաւէ :  
Երդէն Ֆրանսացիք դժողով էին և ակամայ կր  
հնազանդէին Անկլիացուց , որ սկսան նոր տուրք  
զնել անոնց վրայ : Այս ատեն մի քանի առաս-  
տառներ Սև Խիսանին սրահանջած տուրքը չվճա-  
րեցին և Շարլ Ետին բռուգեցին անոնց հարստա-  
հարութեան գէմ : Շարլ՝ իրեւ առաստապետ՝  
հրամայեց Եղուարդին որ Շարիդ զայ և բարլ-  
մենդին ներկայանայ իր ընթացքն արդորացը-  
նելու համար : Սև Խիսանն այս յանդոցն հրա-  
ւերին վրայ սրամաւելով պատասխանեց զուռ-

զարար . Հղիափ երթանք Փրահետ սալսաւրու  
մեր դլոխը գրած և 66 հաղար զօրքով : » Ա-  
սոր վրայ բարձրնդը՝ Թագաւորին հրամանին  
համեմատ՝ Ակուխտանիսն զրուեց և Տիկէքլէն  
զնայ այն նահանգն արշաւելու :

Անկիացիք նորէն Փրահետ կոխեցին : Շարլ  
Ե առաջուան պէս անսնց զէմ չքալեց այլ թո-  
վուց որ Փրահետիան զաւաներն արշաւեն ու  
կողոպտեն : Թագաւորը շատ անգամ իր զղեա-  
կէն կ'աեսնէր Անկիացը ձգած հրզեցն որ  
առաններ ու զիսդեր կ'այրենի . Օթող այրեն ,  
քանդեն , իրենց բոլոր միներով պիափ չկրնան  
զիս աւրութենէ ու վանտել : » Այսպէս մեծ բա-  
նակ մը շելաւ թշնամոյն զէմ , բայց անկիա-  
կան զօրքերն մանր կոխեներու մէջ մաշելով ,  
պաշարէ զուրկ մնայով . հիւ ազութիւններէ ջար-  
դուելով հետզետէ կ'ակարանային առանց  
վճռական յաղթութիւն մը ապնելու : Եղուարդ  
Գ և իր որդին վհասեցան . մին արդէն ծերա-  
ցեր , միւսը հիւ անդոս էր , ուստի անկարով էին  
պտաերազմը շարունակել : Իրենց ձեռքը միայն  
Քալէ , Պայօն , ու Պարտօ քաղաքները մնացել  
էին , երբոր զննադուլ մ'ընելու սախառւեցան ,  
որով երկար առեն կրխը ետ մնաց : Աև Խշանն  
և սովա իր հայրը քիչ մ'ետք մեռան : Շարլ  
Ե աղ առելի երկար շապրեցաւ :

Վ.՝ Դայլը սուրբաժնութեաւ . — Եղուարդ  
Գ շատ զաւակներ թողուց : Կալի իշխանն , որ  
Աւ մականունը ստացաւ , Քլորէնաէ , Լենքոստրէ  
և Եւրէ զուքսերը : Որովհետեւ Աև Խշանն իր

Հօրեն առաջ մեռեր էր, իր որդին Ռիշտը Բյաջորգեց Եղուարդ Գին: Բայց Ռիշար զեռ տրայ էր. իր հօրեղբարքն խնամապետ եղան: Այս իշխաններն այնքան ծանր տուրքեր դրին ժողովրդեան վրայ որ ամեն կողմէ դանդաներ լուսեցան: Բարլմէնդը վճռեր էր որ տասնհինգ տարեկան եղողն Քլիահարի մը վճարէ: Հարկաչան մը՝ Ա-դ-Դայլէր անուն մարդուն աղջիկը նախատեց պղղելով որ հարկ տալու տարիքն ունէր: Հայրը նոյն տեղը ուղաննեց հարկահանն և բոլոր զիւղացիներն զէնքի կոչեց: Այն միջոցին էր որ Ա-իւլէֆ\* պապականութեան զէմքարովներ կ'տար և Եկեղեցւոյ մէջ վերանորոգում կ'պահանջէր: Եր զազափարները ժողովրդեան միտքը բացին և իշխաններու զէմդորդուցին: Քէնդ զաւառին զիւղացիներն ուրելան, Ա-ադ-Դայլէր և Ժան-Պաւ անուն քահանայ մ'անոնց զլուխն անցան և Լանտոն մանելով վանք, մնասատան կործանեցին, հարկա-

\* Ա-իւլէֆ՝ Օքսֆօրտի ուսուցիչ էր և Ասքր Գրոց շնուռ, զոր անկլիարէնի թարգմանեց: Այս յանդուզն ուսուցիչն մուրացիկ վանականաց, կղերին մնալու թեանց ու հարաւոթեան, և Պապին պահանջմանց զէմ սկսականի, նոյնպէս կամելլիկ կրօնին մէկ քանի վարդապետաթեանց զէմ: Կ'ուզէր որ քահանաներն մբրիստուի և իր տռարելոց պէս աղքատութեան մէջ առդրին, տառանորդ չպահանջնեն, և երրոր յանցանց գործեն աշխարհական իշխանութիւնն իրաւունք ունենայ զանանը պատմելու: Ա-իրլիֆի քարոզները մէծ ներզորեաթիւն ըրբին ժողովրդեան վրայ: Խնդր շատ աշակերտներ ունեցաւ ուրուց: Ա-իւլէֆ անուամբ կ'յիշուին:

Հանները սպաննեցին, բայց չէին կողոպտեր, որմէ կ'իմացուի որ իրենց ապստամբութեան միակ նպատակն էր նոր ազատութիւն ու իրաւունք ստանալ: Կ'ըսեն թէ զեղացի մը կրակը նետեցին վասն զի քանի մը բան զողցեր էր: Որիշար Բ ուղեց ապստամբաց հետ աեմնուիլ և անոնց դանգատներն իմանալ. Վադ-Դայլէր ժողովրդեան խնդիրներն առաջարկեց թագաւորին մօտենալով և խօսելու առեն սուրբ կ'շարժէր: Լոնտօնի քաղաքապետը կարծելով թէ Վադ-Դայլէր թագաւորը սպաննելու միտք տնի, զանի սրի հարուածով մը սպաննեց: Ապստամբները զայրանալով իրենց զլխաւորին վրէմն առնելու կ'պատրաստուէին երբ Որիշար իր ձին անոնց մէջ քշելով պոռաց. Քարեկամներս, Վադ-Դայլէր մնուաւ. այսուհետեւ մեր սպարազլուխն ես սպիտի լինիմ: Եայց քիչ ատենէն քաղաքապետին հրամանաւ զօրաց զունիք մը զեղացիներուն վրայ յարձակելով մեծ ջարդ մը տուաւ անոնց:

Ուշար Բ ա՛ռաւէն կ'ընէն. Լենդարէ ցեղին քահայուշ-բէնը. — Որիշար Բ իր ընթացքով բալոր ժողովուրդն իրեն գէմ զայրացուց, մանաւանդ երբոր Պրէսդ և Ծէրպուր քաղաքները ֆրանսայի թալուց: Իր հօրեղբայրներն ազնուապետական դաստին զլուխն անցնելով սուք ելան: Իր հօրեղբօրորդին Հենրի Լենդարդը՝ որ Ֆրանսա քաշուեր էր, սպաթիկ զօրադունդով մ'Անկլիա արշաւեց, Լոնտօն քաղաքն առաւ և Որիշարը զերի բռնեց: Այս ատեն բարլմէնդը զա-

նի աթոռէն զար ձգեց և տպա դաղմնի սպան-  
նել առառ բանտին մէջ։ Հենրի Աէնդասդր,  
Հենրի Զ. անուամբը զահն ելաւ և Աէնդասդրի  
շրջն զլուխն եղաւ։

ՈՒԷՐ Բ. Ե. Ֆոք՝ թագաւորելու իրաւունքն Անդա-  
տրէ ցեղին չէր պատկաներ այլ Խզուորդ Գի երկրորդ  
որդուն, Շլեքանսի դուրսին, Խրու է որ այս վերջինն  
աղջիկ զաւակ մը թողեր էր միայն, բայց Անկլիա կո-  
չուցը ալ կրնոցին աթառն եղել։ Այսպէս Շլեքանսի  
ժամանակուն իշխանութիւն Խօսքի զուքսի մը հետ կար-  
գուեցու, Խօսքի հիւ զի, թէև կրուեր, իրքի որինառ  
ժամանակուն. Անկլիայի թագը պահանջելու ելաւ։ Այս  
զահն անդմանը զերէնին Երկու Աւարդերու պատերազմին  
ազատնառն եղաւ։

## ԳԼՈՒԽ ԻՆ.

ՏԵՐԵՆԵՐԻ ԴՐԱ ԽՈՎ ՀԱՅԻ ՀԱՅԻ ՀԱՅԻ — ԺԱՆ Դ'ԱՐՏ,

(1380—1428)

ԾԵՐ Զ. Գրանոյի Ռ-Դ-Ռ-Ռ-Ռ, — Տան երկու  
տարու էր ԾԵՐ Զ. երրոր իր համանուն հօրը  
յախորդեց։ ատկային անշափահաս լինելուն՝ կա-  
ռավարութեան սահման իր հօրեղբայրները ձեռք  
առին, այս է, Անժարի, ուլորին և Պաւրիոյինի  
դքսերն, որ Գրանոսան աւելի լաւ կառավարե-

լու մատօք՝ զայն իրենց մէջ բաժնեցին, սակայն  
իրօք կողոպտեցին և մեծ չարեաց պատճառ ե-  
ղան։ Այն առեն սկսան Թրանտայի ամենէն ա-  
զետալի ժամանակները։ Ազնու ականաց և մաղո-  
վորդեան մէջ սոսկալի պայքար մը ծագեցաւ։  
մէկ կողմէ Հախութիւն, Հարստահարութիւն,  
կոտորած, միւն կողմէ ապատամբութիւն ու ան-  
տանելի տառապանք կ'երեւէին։

Թամիւնուց ապատամբութիւնը։ — Խնամանովեա  
զ քսերը նոր նոր հարկեր զնելով մազովորեան  
վրայ, զայն չարաշար կ'կեղեքէ ին։ Այս բատ-  
կան շնեպելով ամեն արծանաց վրայ նոր տուրը  
մը հաստատեցին։ Բարիցի ժաղամարդն որ ան-  
օդուա տեղը բոլորեր էր, ուսք ենելու համար  
զրդիւ մը կ'ազէր։ Երբ օր մը հարկահան մը  
նոր տուրը պահանջեց սպառաէ մ'որ քիչ մը  
ջրկուահմ զներ էր, խուժանը հարկահանին վր-  
այ վազեց և կտոր կտոր րուա։ Այս կոտորածն  
ընդհանուր ապատամբութիւնն մը նշանն եղաւ։  
Ժողովու բոն աշխատանքն ուներով վազեց բան-  
տերը պարզեց։ Զինարանին գոները կոտրեց  
և որիշ զներ շշանելով այն տեղէն կապահեայ  
լուինը տուաւ, որմէ ապատամբութիւնը նոյնուրուց  
կոչուեցան։ Այս ապատամբական շարժու մն  
սկսաւ տարած ու իր որիշ քաղաքներու մէջ։  
ԱՄբուշն անգամ Ռուսան քաղքին բանկիշները թա-  
զաւ որ ընարեցին առանեցործ մը ։ Ըսրլ Զ՝ որ  
նոյն միջնորդն ԱՌ քաղաքը կ'ունեն էր, իր խնա-  
մանակներուն հետ ապատամբութիւնը քաղքին վրայ  
քաղեց, առաւ զայն և հարկերը հաստատեց։

Յետոյ Բարիկ դարձաւ որսդէս զի թակառոր-  
ներն աղ պատճէ : Ասոնք խոհեմութիւն համա-  
րեցին 100 հազար ֆրանք տալ թագաւորին,  
այն պայմանաւ որ նոր գրած տաւ բերը ջնջէ :  
Հարլ Զ. յանձն առաւ, բայց իր ոխը պահեց  
և շատ նշանաւոր քաղաքացիներ դաղտնի Սէն  
դետը նետել տուաւ :

Այս ժամանակին էր որ Ընմաի դոքսն իտա-  
լիա գնաց պատերազմիլու, մինչդեռ գործիցնի  
դքսին զրդմամբ թագաւորն իր զէնքը Փլան-  
տրայի զէմ դարձաց, որու քաջ ժողովուրդը  
կ'պատերազմէր իր ազատութեան համար :

Առաջին չորրորդ առաջականաց. — Սակայն ապօտամ-  
բութեան ոգին առերի բուռն էր Փլանտրայի մէջ,  
որու կոմսը (Լուի) անդ թարար կ'կառավարէր  
Ժողովուրդը : Կանու քաղքին բնակիչները մանա-  
ւանդ ազնուականաց բռնութեան շկրնալով գի-  
մանալ, գլուխ քաշեցին և իրենց զօրապետ  
կարգեցին Փիլիպոս Արքանցուք, որ մեծ անուն  
ունէր իր քաջութեան ու հայրենասիրութեան  
համար : Արդիւ լու Փլանտրայի կոմսին զէմ քա-  
լեց իր արի բանակով և Պրումի մօտ սոսկայի  
ջարդ մը տուաւ անոր զօրաց : Կամոր հազիւ-  
կրցաւ խօյս տալ Լիլ քաղաքն և անկից Ֆրան-  
սայի թագաւորին օգնութիւնը խեղթեց : Այս  
յաղթաթիւնը մեծ հաշակ հանեց և Փրանսա-  
ցիք չափէն առելի ու բախացան : Արդէն Բա-  
րիկ, Հալոն, Օրլէան՝ Փլանտրացւոց յաջո-  
ղութեան կ'սպառէին որ ազնուականները ջարդեն  
Ահա այս ժի՞ջոցին էր որ Պլուրկոյնի դուքսը

յորդորեց թագաւորն որ ապատամբութեան բուն  
կեդրոնը, Ասնա քաղաքը կործանէ և Թլան-  
տրայի կումսին խնդիրը կատարէ: Ուստի Շարլ  
Զ իր ազնուականները ժողվեց ու Թլանտրա  
մուռ: Արդվելու իր բանակը Ռողացէքի մօտ  
(Քորդուէյի հիւստային կողմը) յարդարեց՝ սպա-  
սելով որ Աշնամին իր վրայ յարձակի: Բայց  
երբ աեւսաւ որ ասոնք կ'գանդադին, ինքն իր ա-  
րիական գոնզավ վազեց անոնց զէմ, սակայն  
յաղթուեցաւ և ինքն ալ ընկաւ: Թագաւորը  
վատարար հրամայեց որ այս քաջ մարդուն  
դիակը կախաղանէ մը կախեն:

Բոլոր Թլանտրայի ժողովուրդն ահարեկ՝ ստի-  
պուեցաւ. Հազարնցին: Ազնուականները Քորդու-  
քաղաքը հիմնայատակ ըրին, մարդիկը ջարդե-  
ցին և կիներն ու աղջոյը ծախեցին:

Քրոնոյի աղոտամբութեանը կ'ըստու: — Ռոզ-  
ալէքի Ճակատամարտն ոչ միայն Թլանտրայի,   
այլ բոլոր Ֆրանսայի աղետարեր եղաւ: Շարլ  
Զ իր բանակով Բարիզ գարձաւ: Բարիզցիք  
այս յաղթական ազնուականներուն զալուսան ի-  
մանալով շաւարեցան: Ժողովուրդը սպասերազ-  
միլ կ'ուզէր, բայց գաս մը մարդիկ առաջար-  
կեցին որ Թագաւորին ներոզամատ թիւնը հայ-  
ցեն: Ուստի բարիզցիք, ՅՈ Հազարի շափ,   
քաղըէն գուրս ելան զինուած, որսէս զի Թա-  
գաւորը զիմաս որեն և իրենց զօրու թիւնը ցցոց  
առան: Ազնուականներն այս բանակը տեսնելով  
վախցան և հրաման առնեն որ ամենքն իրենց  
զնորը թոշուն և առն դաշնան: Քաղաքացիք

Հնազանդեցան : Բայց այս հնազանդութեան մը-  
բայց իմաստ առին բարկութիւնը շահցան : Իր մայ-  
րաբաշտքը մտաւ՝ նիղակը ձեռքին, իբրև յազ-  
մուր, և հրամայից սր խոսվարաբները սպան-  
նեն : Ըստ մը թակառուներ պարկերու մէջ գնե-  
լով կարեցին ու Աէն զետր նետեցին : Աեր-  
ջապէս թագաւորը քաղաքացինական իրաւունք-  
ները ջրջեց և հարկերը վերահսկուածեց : Ու-  
րիշ քաւաքներու մէջ ալ մի և նոյն բուռն մի-  
ջոցներն ի զործ զբին և այսպէս Յքրանսայի  
մէջ ազատութեան ողին ատեն մը մարեցան :

Ըստ Զ. կ' ի թէն թէն : — Խրբոր թագաւորն  
քան և մէկ տարեկան եղան՝ իր խնամանունիւն-  
ները ճամբեց որպէս զի թէք կաւազարեւ : Ընկ-  
լիոյ հետ երեք տարուան զինազուլ կնքեց, իր  
հօրը հին պաշտօնեաները զործոց զլու ին ան-  
ցոց և ժաշումուրդը յուսաց որ իր տառապանքը  
պլափի թեթևայ : Սակայն այս յոյն երկար  
շանեց : Թէե Ծարլ Զ սիրելի էր իր ժողո-  
վը բերգեան՝ իր զեղեցիութեան և մարդասիրու-  
թեան համար, տակայն տեկարամբաւ, զրօսառք  
և շապալ լինելուն՝ իր պաշտօնեանները կարող  
չեղան ովէ ուր եղած բարեկարդութիւնն ու անտե-  
սութիւնը հաստատել :

Նոյն միջոցին՝ Պրը այնի դուքսը կ' ու զէր թա-  
գաւորեն անկախ լինիլ և այս մաօք կ' պատերազ-  
մուր : Անդամ մ' այս զքունի մէկ արքանեալու  
փորձ փորձեց Օլելիւ Քլիստիք թագաւորին զօրու-  
ութ : սպաննել : և սպա իր պաշտպանին մօտ  
փախան : Ծարլ Զ պահանջնց որ յանցաւորն

իրեն յանձնուի . բայց Պրրդայնի դոքոր մերժեց :  
Ասոր վրայ՝ Ըարլ վրեժ լուծելու համար՝ զօր-  
քավ անոր գէմ պնաց : Եթրոր Մանս քաղքին  
անտառէն կ'անցնէ , ու ամառուան խիստ տաք օր  
մը , ցնցոտի հաղոսաներով մարդ մը յանկարծ  
անոր առ ջեն ընկաւ և ձիոն սանձէն բռնելով՝  
պառաց . «Թագաւոր , յառաջ մի երթար , վասն  
զի մատնուած ես : » Ըարլ՝ որ արդէն իր վա-  
րած ցոփ կեանքով խելազարտ թեան նշաններ  
ցոյց առած էր , այս երեսին սաստիկ շուա-  
րեցաւ : Քիչ մ'եւար ձիապան մ'իր նիզակն ըն-  
կերին սարգաւարափն վրայ ձգելուն՝ թաղաւորը  
գող ելաւ , և կատղելով սուրբ քաշեց : իր մար-  
դոց վրայ վարկեց և զուշեց . «Յարձակինք մատ-  
նիշներուն վրայ , զիս թշնամիաց յանձնել կ'ու-  
զեն : » Արդէն իր բոլորտիքը զանուող չորս զօ-  
րականներ սպաններ էր , երբոր զինք բռնեցին :  
Թաղաւորն իր խելքու կորուսեր էր և բժիշկ-  
ներու խորհրդով զանի սփռիելու ջանացին այլ  
և այլ զուարձութիւններով : Բայց թազուորն  
մնիզինքն այնքան մոլեգնութեամբ պրօսաների  
տռւաւ , որ իր վիճակին երթալով վատթարացաւ :

ՕՐԵՆԻ ՎՐԱ Լ. Ա. Հ. ԸՆԿՐԱՆԵ. —  
— Այս ատեն թագաւորին եղբայրը՝ ՕՐԵՆԻ  
ՎՐԱ Լ. Ա. Հ. և իր հօրեղբայրներն իշխանութիւ-  
նը վարելու համար սկսան իրարու գէմ կռուիլ :  
Օրի անի դոքոր սիրուն , ու շիմ երկտասարդ  
մ'էր , բայց մեծամիտ , անխիղք ու վաստարա-  
բոյ , այնպէս որ ժաղովուրդը կ'արհամարէլ ը ու  
կ'կեղեգէր , և յամանակին անկարդ ազնուակա-

նաց Զշմարիտ տիտարն էր։ Սա կ'ուղելը որ ինք միայն կառավարէ։ Թագուհին իր կողմն էր։ Բայց ահարկու հակառակորդ մ'ունէր, Պուրկոյնի դուքսն, Յանուառնէն Փիլիպոսը, որ միանդամանն Օբանարայի զրայ կ'ափիրէր։ Երբոր Փիլիպոս մեռաւ (1404), իր որդին Յանուառնէն որ Անդրէնու կոչուեցաւ, Բարիզի ժաղավրդեան շահերը, հարստահարեալները պաշտպանեց և ազնուականաց ու քաղաքացւոց մէջ կոխու նորոգեց։ Սակայն Յովհաննէն և Յանուառն, նենզամբաւ ու վատ էր և գտաձանութեամբ կ'ուղելը իշխանութեան համար։ Արդէն քաղաքային պատերազմ սկսի սկսէր ոյս երկու աղդականներու մէջ՝ երբոր իրենց հօրեղբայրը՝ Պէրիի դուքսը հաշտեցոց զանոնք։ Միասին սեղանակից եղան, հալորդ առին, սակայն Յովհաննէն, որ անհաշու առելութիւն մը կ'ատածէր, իր հակառակորդը՝ Օրլէանի դուքսը սպաննել տուաւ։ Պուրկոյնի դուքսն բացէ ՚ի բաց խոստավանեցաւ իր յանդանքը և Բարիզի բնակիչները զահ եղան։ Պարապ տեղը, Օրլէանի դքսին կինը, Առանդին Ալեքսանդր արդարութիւն խնդրեց։ Յովհաննէն և Ռուբեկիու, Ըսրլ Զ թագաւորին իր ձեռքին տակ տանը լուի կառավարութիւնն ալ ձեռք ձղեց։ Օրլէանի նորատի իշխաններն անզամ ստիպուեցան իրենց հօրը սպաննողին հետ հաշտուիլ։

Սրբակաւ և Պատրիարքնեւ։ — Այս հաշտութիւնը չէր կրնար անկեղծ լինիլ։ Օրլէանի նորատի դուքսն հարաւային Փրանսայի զօրաւոր իշ-

խանի մ'աղջկան հետ կարգուեր էր : Այս իշխանն էր Աբանեած իսկա՞ն՝ որ օրվեանեան կռասակցութեան զլու ին եղաւ : Խոկ միուս կողմին էր պարկինցն կու սակցութիւնն , որու պարագլու ին էր Յովհաննէս Աներկիւդ : Այն ատեն սկսու սոսկալի կոփու մը չէ թէ միայն աղնուական և ժաղովրդեան գամերուն մէջ , այլ Յորանապի հարապին և Հիւնիսային դառառաց մէջ : Արմանեաք կոմոր Բարիզի վրայ քարեց , զունդ մը բաղդախնդիր առազակներ առնուաց և զիւղեր կրակի տուա , զեղացիները ջարդեց : Պորկինցներն այ անդ թարար վարուեցան : Արդէն Բարիզի առ բն էին և բոլոր մասվաճառաց զան անմնց կողմին անցեր էր : Ասոնց մէջ նշանառու էր Գաղու մարթիչն , որմէ բոլոր ապաստամբները Պատուշան+ կոչտ եցան : Բոլոր անոնք որ Արմանեաք կուսակցութեան մարդիկ էին ջարդուեցան : Աեր ջապէս Բարիզի բնակիչներն այս վայրագ մարդոց իշխանութենէ զղուելով՝ Բարիզէն վանաւցին , բայց ուրիշ բոնառուներու ձեւ անցան : Արմանեաքները մայրաքաղքին տիրեցին և իրենց Եշիամուե ը կոստրեցին : Սակայն ժաղովրդեան հետ այնքան զառ պատճեամբ և արհանարհանոր վարուեցան՝ որ Բարիզցիք սաստիկ զայրացան անմնց զէմ և նորին ոսք ելնելու պատրաստուեցան :

Անկարացի Բարիչը է առնան . — Անկինյ թագաւոր՝ Լենդապարի Հենրիին յաջորդեց իր որդին Հենրի Եր , որ փառամեր ու Զարտար թագաւոր մ'եղաւ . և իր իշխանութիւնն ամրացընե-

լու համար՝ միտքը դրան ժաղավարին արտաքին զործերով պատկեցրել : Հենրի և Ֆրանսացի գէմ պատերազմ՝ հրատարակեց և Բարիզի մէջ տիրած անիշխանութենել օդու առ քաղել ու զեց : Առաջ Նորմանիա իջաւ իր զօրքով և պահանջեց որ Պրէզիյնիի դաշնադրութեան պայմանները զործադրութեան Բարիզի մէջ երկու կռւսակցութիւնները չմրացան որ թշնամին վանեն : Յափհաննես Անկրիիւզ, Ֆլանսարա զնաց և շողեց Անկրիաց ոց գէմ պատերազմիր : Այն առանձն Արմաննեաբներն որ կառավարութեան զլու ին էին, Ֆրանսան պաշտպանելու ելան : Իրենց բանակն 80 հազար հոզիէ կ'բազիանար : մինչդեռ Անկրիոյ թագաւորը միայն 20 հազար հոզի ուներ : Ռիզարտիոյ մէջ՝ Աղինուրք մօս երկու բանակներն իրարու հանդիպեցան : Այս հակառամարտին մէջ Ֆրանսացին մի և նոյն սխալմանցն ըրբն՝ ինչ որ ըրեր էին Քրէսիի և Բուտուպիէի մէջ : Աղնուականներն՝ ամբարտուան և անկարող, կարծէ ին թէ իրենց ձիսոր զօրքով պիտի կարենան Անկրիաց յաղթել : Անկրիպութիւնը կ'աբրէ ը իրենց մէջ աղմուտ զաշտի մը մէջ կորին սկսու : Անկրիացի աղեղնառորներ հորէն սուկալի ջարդ մը տան ին ֆրանսական հեծելազօրին, որ ցեխի մէջ միտ ած էին : Առակալի իսաւնակութիւն մ'ընկառ զօրաց մէջ : Այս Ազինքուրի հակառամարտին մէջ 10 հազար Ֆրանսացի սպաննեւ եցան, որոցմէ 8 հազարն աղմուտական էին, և շատեր զերի ընկան, ինչու նաև Օրլէանի դոքար :

Արմանեաները կ' ծորդուին . — Այս աղետալի պատերազմը բալոր Ֆրանսացի մէջ սարսափ ձգեց և Արմանեար կուսակցութեան գէմատելութիւնը տառակացուց : Պուրկոյնի զոքսն այս ձախորդութիւնն առիթ բանելով՝ Բարիդ մտաւ զօրքով ու Արմանեարները կոսորեց կամ բանարիեց : Աքսորուած մասվաճառները վերադարձան և սասկալի ջարդ մը նորէն սկսաւ : Խումանը նորէն զրգուելով՝ բանաերը վազեց և բալոր կալանաւոր Արմանեարները սպանեց ոչ կին և ոչ աղջ խնայելով : Աներկիւղ Ըսլհաննէս վերատին կատավարութիւնը ձեռք ձղեց՝ Շարլ Զ Բագանորն իր քովը պահելով : Թաղումին, որ անկարոց կին մ'էր, անոր կողմը բաներ էր և իր որդին՝ նորատի Շարլը կ'ամեւր : Այս աշխարիզն ելնելով՝ Արմանեար կուսակցութեան միացեր էր : Բագանորի ուելակալ անուամբ : Այսպէս երկու հակառակ կառավարութիւն կար Ֆրանսացի մէջ, մինչդեռ Հենրի Ե՛ Անկլիայ Ազգուորը Ռուսն քաշաբն առնելն ենք : Բարիզի վրայ կ'քալէր (1419) :

Յանձնելու Աներինու առանձնութ : Դըստոյի դաշնադրութիւն . — Երբոր Արմանեար ու Պուրկոյն կուսակցութիւններն իմացան որ թշնամին՝ Հենրի Ե՛ կ'յառաջանար գէող ի՛ Բարիդ, իրարու հետ միացան : Կովհաննէս Աներկիւղ և արքայուրդին Շարլ երկու անուած սեսակցութիւնը ըրին, բայց երկրորդ սեսակցութեան մէջ՝ երբ զոքսն արքայուրդոյն առ թէ ծունը կ'գներ՝ մի քանի Արմանեարներ զինքը սպանեցին, վասն

զի՝ ոչ միայն Օրէւանի դքսին մահուան վրէմը լուծել կ'ուզէին այլ և կ'վախնային որ խաղաղութիւն հաստատուելով՝ արքայորդին Պուրկոնեանց ազգեցութեան ներքե չմայ։ Արքայորդին ալ այս վատ դառանանութեան հաւանութիւն առեր Եր ինքնազլուի կառավարելու յուսով։ Փէլուու Բարձն, Աներկիւղ Յովշաննեսին որդին ու յաջորդը, երդում ըրաւ իր հօրը վրէմը լուծել և Բարիղցիք իրեն կողմը բռնեցին։ Այս նպատակին հանելու համար Անկլիացւոց հետ գաշն դրաւ, և այս դաշտի, որ Դրույյի բաշխն կաշուեցաւ, արքայորդին իր աթոռեն կ'զրկուեր, և Անկլիայ թագաւոր Հենրի Ե., Շարլ Ջի ազնիկն իրեն կին առնլով Ֆրանսայի գահին իրրե ժառանգորդ կ'համարուեր։ Կարզաժողովն այս Դրույյի գաշնիը հաստատեց, և բոլոր Ֆրանսայիք զայն խնդութեամբ ընդունեցան։

Հենրի Ե. և Շարլ Ջի ժահը։ — Հենրի Ե անմիջապէս Բարիղ մտաւ Շարլ Ջի հետ և մինչեւ առար մահը ինամասպետի պաշտօն պիտի վարէր։ Բայց օտար թագաւորն այնքան խստութեամբ վարուեցաւ իր նոր հպատակաց հետ որ ամեն կողմէ դանդանեներ սկսան, և աղնուականներն թագաղուրկ իշխանին միացան Անկլիացւոց դէմ։ Սակայն Հենրի Ե երկար առեն շվայելեց իր յաղթամասկը, վասն զի մեռաւ ու իրեն յաջորդ թողուց ու թամամսեայ տղայ մը։ Քիչ առենէն տարաբաղդ Շարլ Ջ ալ, որ իր կենաց վերջին օրերն յետին թշուառութեան մէջ ընկեր էր, զերեզման ի ջաւ։

Ը-ՔԼ Եւ ՀԵՂԵՔ Զ. — Այս տաեն Գրանցա  
երկու թաղաւոր ունեցաւ, մին' ՀԵՂԵՔ Զ. Բարի-  
զի մէջ, միւսը՝ Ը-ՔԼ Եւ Պուրծի մէջ։ Երկու  
կողմէ կռիւն սկսաւ։ Ըարլ Եւ զօրք չուներ,  
դանդաղ, զրօսատէր ու շապիլ էր և չէր յու-  
սար բնաւ որ Անկլիացւոց յաղթէ։ Իրաւ է որ  
քանի մը զօրապետներ իրեն համար կ'պատե-  
րազմէին, Գրանցայի հարաւային ժողովուրդ-  
ներն իր կողմն էին, բայց որովհետեւ թշնամին  
աւելի զօրաւոր էր հետզհետէ կ'յառաջանար,  
Օրլէան քաղաքը պաշարելու մաօք, որպէս զի  
Ըարլ Եփ ձեռքը դանուած զառաները նուածէ  
և բոլոր Գրանցայի տիրանայ։

---

## Գ-Լ. Ա-Խ Եւ ԻԶ.

Ժ-Ն Վ-Ա-Յ- Ա-Կ-Ե-Շ-Ե-Շ, Կ-Կ-Ե-Շ-Ե-Շ Հ-Ե-Ց-Ե-Շ,

(1428—1453)

ՕՐԼԵԱՆ Վ-Ե-Շ Կ-Կ-Ե-Շ-Ե-Շ. — Անկլիացիք Գրան-  
ցայի հիւսիսային զառառները նուածելէն ետեւ  
հարաւային զաւառներուն ալ տիրել ուղեցին և  
այս նպատակաւ Օրլէան քաղաքը պաշարելու  
զացին։ Եթէ Ըարլ Եւ այս քաղաքը տար, բո-  
լոր թաղաւորութիւնը ձեռքէ պիտի հանէր։  
Գրանցայիք տեսան վտանգը, ամեն հին ոխեր

մուցան, և պաշարուած քաղաքը պաշտպանելու համար ընտիր ասպետներ զինեցան։ Սակայն Անկլիացիք պաշարուած է՝ առանձիւ աշխատ չի ենթակացնելին և քաղքին բոլորակիքը տասն շորս մարտկոց շիներ էին։ Երբ անգամ մը, շորս հինգ հարիւր սոյը՝ պաշարով և աշած տառեխով լի՛ բարիզեն Անկլիացւոց բանակը է՛ղար 2,500 աղեղնառ որներու պաշտպանութեամբ, Փրանտացի առողեաները յարձակում մ' ըրբն որպէս զի այն պաշարը դրաւեն, ուսկայն յաղթուեցան և այս պարտութիւնն, որ Տառելիներու տը կոչտեցաւ, բոլոր Փրանտան սարսափի մէջ ձգեց։ Արդէն ամեն բան կորսուած է՛երեւը երբոր յանկարծ պարզ աղջիկ մը հայրենասիրութեամբ վառած Ֆրանտան մէծ վտանգէ ազատեց։

Ժան ո՛Արժ. — Այս ազատարարն էր Ժան ո՛Արժ (Յովհաննա Արքեսին) որ Տէֆէն զիւղէն (Լորէնի և Ըստրայնի մէջ) քան ապրու աղջիկ մ' էր, աղքատիկ, պարկեցաւ ընտանիք։ Դեղանի, անուշ, բարեպաշտ, մեղամողձիկ էր Ժանն ո՛Արժ, և շատ անգամ՝ իր հօրը փորբիկ հօտն արածելու տան է՛խորհէր ու է՛աղօթէր։ Իր հայրենեաց տառապանը տեսնելով սիրու կ' մարմոքէր և ատեն անեն մաքու է՛վերնար և այնպէս կարծէր ինք հրեշտակներ իրեն է՛երեւէին, Երիսոյն յայներ զինք է՛յորդորէին որ երթայ արրայսրդին զան։ Առնա քաղաքը տանի թագաւոր օծէ և Ֆրանտան ազատ։ Այս համարմանը Ժան ո՛Արժ իր ննողացը կամքին հակառակ եղաւ դառսաբն կառավարչին զնաց

և աղաշեց որ զինք թագաւորին ներկայացրնէ : Այս պաշտօնակալը նախ կարծեց թէ աղջիկը յիմարէ : բայց վերջապէս անոր հաստատամատման թիւնն ու զարգութիւնը տեսնելով՝ թաղոց որ համբայ ենէ : Իր խարսեաշ մազերը կտրեց և մարդու հազուստ հազու . զէնք , ձի մը տուին անոր և մի քանի ընկերակիցներով տաժանելի համբորդութիւն մ'ըրաւ , Ըարլ Եփ տոջեն ելու և գունդ մը զօրք ինոգրեց : Կախ սկսան ծիթաղիղ այս աղջկան ընթացքին վրայ , բայց վերջապէս անոր համեստ վարժմնքը , հայրենասիրութիւնը տեսնելով՝ ամենքը զինք յարդեցին : Իր համբաւը բոլոր ֆրանսա տարածուեցաւ և ճաղավարդն սկսաւ յուսալ : Աննուն կարծիքն այս էր որ Ըստուած Ֆրանսայի վրայ զթայով Փան ո'Յըրը դրէեր էր որ զայն աղատէ : Անկիացիք այս հայրենասիրական կարթումը տեսնելով վախցան և իրենց մէջ վհատութիւն մ'ընկաւ :

Օրէանի աղադաւճը : Ըարլ Եփ թափառոր է օշունք : — Այսպէս ժամն ա'Յըրը Օրէանի աղատելու կնայ գունդ մը զօրքով : Ճերմակ զէնք ոնէր , պզսիկ , տապար մը ձեռքը , և ու նժոյզի մը վըրայ հեծեր էր : Իր դրօշակն ալ սպիտակ էր , սովորյն շոշաններով , որու վրայ Քրիստոսի պատկերը կար և այս բառերը . «Յիսուս , Մարիամ» : Անկիացիք առ ահի թոցլ տուին որ անցյնի ու Օրէան մանէ : Բոլոր բնակիչները զինք յաղթանական ընդունեցին . անոր տորու կ'ըսկնէին , զդեստները կ'համբորէին և իրըև

երինառաք հրեշտակ մը կ'համարէ ին : Ժան  
ա՛ւրբ Անկլիացւոց զէմ քալեց իր զօրքով :  
Միշտ անոնց զլուխն էր և ամենեւ վերջը կ'բա-  
շուէր կոտէն : Դրօշակը ձեռքն յառաջ կ'ներ-  
տուէր և միայն ծանր վտանգի ժամանակ զէնք  
կ'զործածէր . վերջապէս քանի մ'օր պատերազ-  
մելէն ետե՝ Անկլիացիք քաղքին պաշարումը  
վերցոցին : Եետոյ Ժան ա՛ւրբ ովեց որ Ռէն-  
սի մէջ Շարլ Ե: Թագաւոր օծոի : Ասոր Հա-  
մար պէտք էր շատ զատաներէ անցնիլ ուր  
թշնամիներ կային , և Շարլ Եի զօրականները  
վտանգաւոր կ'զտնեն այս խորհուրդը : Սա-  
կայն Ժան ա՛ւրբ բոլոր ֆրանսական զօրքը յոր-  
դորեց որ իրեն հետեի , և Անկլիացիք կարծե-  
լով թէ կախարդ մ'է այս աղջիկը՝ քանի մօ-  
տենար՝ իրենք կ'հեռանային : Անրֆապէս Շարլ  
Ռէնս քաղաքը մտաւ և այն աեղ զինք թագա-  
ւոր օծեցին : Այս արարողութեան ժամանակ՝  
Ժան սեղանին մօս՝ որ շը ձեռքը կեցեր էր . իր  
ծնողքն այս յաղթանակին ներկայ էին :

Ժան ա՛ւրբէ դերութեան ու ժահը . — Երբոր  
թաղաւորն օծուեցա . Ժան ա՛ւրբ յայտնեց որ  
իր պաշտօնը լքացած է և կ'ուզէ իր զիոզ  
դառնալ և ոչխարիներն արածել : Բայց Շարլ  
և իր զօրականները խորդեցին որ մնայ . վասն  
զի իր ներկայութեամբ բանակին եռանդը կ'վա-  
ռուէր և զեռ որիշ ծանր զործեր ունէր կա-  
տարելու . Բայց Ժան Ռէն միշտ անվեհեր էր ,  
սկսեր էր անհանդիստ լինիլ , կարծես թէ իր  
աղետալի վախճանը կ'զգար : Թագաւորական բա-

նակը Բարիզի վրայ քալեց, զոր այն ատեն Պուրկոնեանց կուսակցութիւնը կ'պաշտպանէր, բայց այս յարձակումն անյաջող չ'նայ. Ժան ա՛նը վիրաւորուեցաւ, և զինուորները զինք բանակեն դուրս տարին: Աերթապէս Ք.Հ.Է.Ե.Հ.Հ. քաղաքը մատ, երրոր Պուրկոյնի գոքսը զայն կ'պաշարէր: Անդամ մը յարձակում ընելով չկրցաւ քաղաքը վերադառնալ ժամանակին՝ և Պուրկոնեանց ձեռքը զերի ընկառ, որոնք զինք Անկլիացոց յանձնեցին: Ապերախտ Ծարլ Ե՛ զուարձութեանց մը չ ընկդմած՝ զիւցազնուհին աղօստելու հետո մը շմտածեց:

Ի հարկէ Անկլիացիք Ժան ա՛նըփի դէմ սաստիկ ատելութիւն ունէին, վասն զի իրենց ձախորդութեան պատճառ այս դիւցազնուհին էր: Ուստի մեծ եղան իրենց ուրախութիւնն երբոր զանի զերի բռնեցին: բայց ուղեցին որ եկեղեցական ժողովի մը մը զ գտատի և դատապարտի իրոն վհանկ: Ուշագործ՝ որ Ֆրանսայի անկլիական զօրաց կ'հրամայէր, Ժան ա՛նըփը ձախցի ԱՅ հազար Փրանքի Գլուխի եպիսկոպոսին, որ իր կազմէ կ'զարծէր: Առ շուտ մը կրօնական ժողով մը կազմեց, որպէս զի Ժանն ա՛նըփի դատութեան: Եւյս արիստուրուտ աղջիկը մեղադարս հանելու: Համեսր ամեն անուրդ մի ջացներ ի զործ դրին, սատթիւն, զուպարտութիւն և նենդութիւն: Զինք շղթայի զարնելով երկաթէ վանդակի, մը մը չ կ'առհէին Ռուան քաղաքը: Ժաղավան այլ և այլ երկար, նուրբ և նենդամիտ հարցումներ բրատ, որպէս զի շփաթէ զանի, բայց Ժան ա՛նըփ միշտ անվրդով, հանդարտ

ու համեստ գելքով մը պատասխանեց և իր հագույն ուղղութեամբը թշնամի գատառորաց որոշայթին մէջ չընկաւ, որոնք կ'ջանային անոր հաւատքին մէջ մնալորութիւն մը դանել : Քաջ զիտեք եղիկելի դեղացի, աղջիկն որ զինք պիտի գատապարտեն եթէ յամափի իր անկեղծ խոստովանութեան մէջ, բայց մահն աչք առեր էր և միշտ պարզ, խոհական ու վում պատասխաններ կ'տար : Կ'հարցընելին անոր թէ արդեօք ինքնինք Աստուծոյ շնորհաց մէջ կ'կարծէր, որպէս զի իրքեւ հերեւտիկոս գատապարտեն եթէ ըսէր թէ վասահ է իր փրկութեան վրայ .— «Ըստ գժուար է, բայտ նա, ոյզ հարցման պատասխան տալ : Եթէ Աստուծոյ շնորհը չեմ վայելեր, երանին թէ պարզեէր ինձ, եթէ կ'վայելեմ, կ'փափարիմ որ զիս անոր մէջ պահէ : — «Միթէ Աստուծ կ'առէ» Անկլիացիքը : — «Զդիտեմ թէ Աստուծ կ'սիրէ թէ ոչ կ'առէ Անկլիացիքը, բայց քաջ զիտեմ որ Գրանտայէն պիտի վռնառին : »

Դատառորները չերցան հաստատել որ Ժան ա՛նը վհանկ մ'էր, այլ միայն ամբաստանութեան երկու կէտ դասն, այսինքն թէ Ժան ա՛նը մարդու հազուար կ'առգէր պահել և թէ կ'մերժէր Եկեղեցւոյ գատաստանն որով կը յայնառէր թէ իր տեսիլքը ուտաւ էին : Այն առեն խեղճ օրիսրդն՝ որ քահանայից հառտալու, և զանոնք յարգելու սովոր էր, պահ մը վհատութիւն զգաց . չուզեց ովնդել որ Երկնային պաշտօն մ'ունէր և մարդու զգեստը հանելու խոստացաւ : Բայց Ժան կարդալ շզիսէր, և

ինիսանակ այս խոսքութերը պարունակող թուշ-  
թը ներկայելու . որիշ թուզի մի խաչով անոր  
ստորագույն տառին , որու մէջ ինք կ'խոստացնելու  
թէ հերետիկոս . վհանկ և շուայս էր : և կ'առ-  
ժից ինչպէս ի'խոստացնի իր մեղքը զոչեց  
դաստիանն և զինքը մշտակա բանապարկութեան  
դաստապարանց : Բայց Ժան ա՛Ծըրի շարա-  
րանքը շեն լանցուծ չէր : Եթ բաւաթն մէջ զի-  
նու որները շարանակ կ'նախուալ ին զինք : Ասոր  
նորեն մարդու զ եամբ հազար՝ զըր զիանամբ  
ձ եր է ին իր քովք : Եսար զրայ զնոք երեւ և խ-  
տագրուծ և հերետիկոս ամբաստանեցով՝ զտա-  
ւորները վհճու տուին որ ողջ ողջ ուրբանի : Եղր  
որ եղիելի օրինրդն այս մահամինները լուս սկսան  
լայ ու զոչեց . ԱԾփառն , ինչպէս սկսան սյրեն  
այս իմ մարդուն որ այնպահ մայուսը է : Վա-  
ստածոյ կ'թաղում՝ որ այս մաս իմ թեատրոյ զտա-  
ստանանն ինեւ . զ Ա երդառալ և Ժան ա՛Ծըր ա-  
րիսթեամբ միայնակայտն զբաց երան և միայն  
հային առանձինք : Վաստածոյ անեանձ այսուստ-  
նեց : Բոլոր ներկայ ժառանգ բոք կ'հեծեծ էր և  
կ'զայրանար այս անօրենութեան մրայ : Բայց ան-  
կարուզ էր շարժում մ'ընկեր , վասն զի միայ-  
նակային շորտ կողմի զորքեր կեցեր էին : Վա-  
կայի նոյն խոհ Անկի խայեր այլայլեցան , և զի-  
նուոր մը զոչեց . և կորստ եցանք , վասն զի առ ըր  
մ'այրեցինք խարոյէն մրայ :

ԱՆԴԻ ԱՐԴԵՐ ՊԱՏՐԵՐԱԳՅԻՆ ՀԱՅԻ ՀԱՅԱ : — Այս սի-  
նուորը մշտակա խոքք մը կ'ըստի , վասն զի Ան-  
կայի խայեր Ժան ա՛Ծըրի մահամին անելի առանձին  
33

եղան Թրանսայի ժողովրդեան և ամեն տեղ ձախորդութիւն կրեցին : Թէև Հենրի Զն հանդիսաւոր կերպով թագաւոր օծել առին Բարիզի մ.ջ. բայց շատ տիսուր եղաւ այս արարողութիւնը , վասն զի Թրանսայիք օտարին լուծէն զզուեր էին : Աերջապէս Պարկոյնի զոքսն ալ Շարլ Եփ հետ հաշտուելով , այս թագաւորը Բարիզ մտաւ և կարծես թէ իր դանդաղ ու թոյլ բնութիւնը փոխեց և Անլիխացիքը վանելու համար ամեն ձիոցը թափեց : Աերջապէս ասոնց ձեռքորդը միայն Քաղաք :

Ըստ Եփ Արքանութեածուը . — Բառական չէր սուսր թշնամին զանել , այսուր եր նաև զնդել այն աւարտանորանակներն որ առ առ թիւնը կ'առ երին : Առաջի թագաւորը շատ մը Ժարքերն զունդեր Հելվետիա ուզարկեց ուր մեծ մասը ջարգուեցաւ , և առ թութիւնը պաշտպանելու համար հայտնա բանաւութեած էր կազմեց : Այսպէս թագաւորն ու միայն աւատական զօրքե պէտք պիտի շահնենար , այլ և աւատառութուն ապատամբական ջարժութեները պիտի դապէր : Երբ ազնուականներն ուոր եւան թագաւորին ըրբած այս բարեկարգութիւնները տեսնելով՝ որ իրենց շահուց դէմ էին , բայց շիշբան բան մ'ընել , թէև թագաւորանդ արրայուրդին լուսի իրենց զլուխն անցեր եր : Այսպէս առատականներն առ առ հարիւր տարածան պատճերազմը պարագայի մէջ աղջային զզացումը զրոյաներ եր , աշխալէս որ առ առ թութիւնն այլ և այլ զաւաները պիտի օտար թիւն շնուռաւթիւնը կործանելու համար :

Ըստ Եփ կերպով մ'արդի միավուական իշխանութեան հիմնական եղաւ : Աւ միայն Առայսն բանակ կազմեց այլ և հազարան պարուց հաստակեց : Կյունզէս Պլուրի իշխանութեան հիմնական եղաւ , որ Թրանսայի եկեղեցւոյ ա-

զատութեան հիմունքը կ'սեպուին, թէեւ Պատրի կ'բազուցեր այս առնեանց ամ ով, հանրական ժողովներն ոպապերէն զեր էին. կունակիուներն իրենց ևախառապահները, և զատկաներն իրենց զանահայրներն ընտրելու իրաւուց անեին, և Հռոմի յառկացան ամեն կրօնական տուրը կը ջնջէին. զերդառքու կառավարութեան հայութեան թէամբ միայն Հռոմէն եկած կանգալիները պիտի կարդացուեն:

Ջրանայի Երշային ձիման Ըարլ կը ճահուան արեն. — Երր Ըարլ կը մասւ. Հազի ներկայ Ջրանայի կեար թագուարներու մեռին էր, Արքունական զաւաներն էին, Ջրանայի կղզին, Վարձանախան, Ըանրացին, Պիերի, Բառագու, Ախոյն, Լանեար, Տաֆին և ուրիշ մի քանի զաւաներ: Ջրանայի մասն մասն իշխանական ցեղերու մեռին էին, որոց ամենէ զօրաւորները թագաւորական զերգաւուանին կ'առաջանանին իրաւ, բայց զարձաւու թագուարնեն զէմ անդապար կառի մէջ էին: Այս իշխանական առներուն մէջ զլիաւորներն էին, Շլչտ-նի — Լուկանի — Անդուն — Օլժ-նի — Պասորունի — Շերլաուն Թիուրիունի, որ ամենէ զօրաւորն էր և ուներ Պլուրզին, Ջրանը — Կանգէ, Ասորին՝ Կասիան (Հռանու, Ջրանայրա, Արքուաւ և այլն):

## ԳԼՈՒԽ Ի՛:

Առաջանային թիւն անուհւ — Ըարլ Ը.

(1453—1483)

Լուկ Ժ. և Ըարլ Յանդուն: — Որովհեան  
Լուկ Ժ. իր հօրը կենդանութեան ամեն առա-

առական իշխանաց կողմը բռներ էր, ատար կարծիքն որ անոր ձեռաք իրենց զօրութիւնը պիտի առելին էնուոյ : Առելին շատ շանցան հանկոցան որ սիստեր են . մասն զի՞ երբ Լուի Փ. զահն եւս, իր զիհաւոր զործն եղաւ կործանել առաջականութիւնը . որ Պատրիարքի ահարկո դրսին ժորժին այնքան զօրոցցեր էր այն միջացին որ թագաւորական իշխանութիւնը Չնջելու կուրաննոր : Լուի Փ. և Շարլ Գանդոցն երկու առաջարկութիւն ականարդ զարձան . առաջինն ըստուրութեան պաշտպան, երկրորդն առաջարկութեան :

Այս երեսու համապատճենոց քննուածիւնն առ գոյացութեանը . — Այս երեսու ուսումներուն յանուառութեան գիւղին եր զուշակել թէ ինչ վախճան պիտի առնենար իրենց մէջ ենցած մէջ կախը : Լուի Փ. Վ. Հարդիս բազարութեան մէկը, զարմանալի զործանելութիւն, խաչեան թիւն և Շարուագիւնութիւն ունեն . բայց ոյս թշնամու շատ շարամիւն ու խորանակի էր, անորութեան բարտութիւն, կրթուու ու կառավագուու, մասնաւ ու կազմ, Անիկ զատ՝ որ առ ինքնաներ ու անզութ նոյնամաս բարեկացն ու առելորդական եր : — Լուի Փ. Վ. Շարլ Ե. Բազարութեան նորանակի հետեւցու : Ազգաւորութեան ուստամի կ'առեւր, ճարգութը կ'ազուր, մասնաւ այլ պիտին զատը և երթուու մանեց զամակաց կնքաւ, այլրը լինելու յանձն կ'առեւր : Այսպէս է որ Լուի Փ. Վ. Բազարութեան թիւն բրեն ունա համարութեան բայց անորդ պիտի լիներ, որուակը այլ անդրու : — Ո՞վ որ կեզդեւ շահուն, շիքուր իշխան կ'առեւր նա, և խառնութեր, երդուութեր կ'ընեւր այլ շեր ուստիւր և անձի կ'ամսութեր, նոյն քայլ անուարութեր յանձնու մէջ նույ զան թէ շինուած Շամբաւարութեւու :

Բայորոսին ուրիշ բնաւարութիւնն աներ Ըստ, Ըստ  
քայլի և աճած, որ, Բայրէ Փիլիպոս՝ հորը մահացած եղաւ:  
Պատուայնի պատե եղաւ: Անոր ահարիս, իովիչն, յառ  
պատահ մահանանքը տառին, և բայց այս մահզի բներուն  
արթանի եր: Բայց վերջին մահզին իր զրոյ մաս, իր  
քայլարտիսն նախառակի եր Թրանասոյի ու Գ.երմանիոյ մէջ  
զորաւոր անցութիւն մը հաստատել, որպէս զի անոր  
միջոցաւ: Եթէ հնար եր, այս երկու երկիրներու զրոյ  
անրապեսն: Այս մասը կ'ուզեր իր անքութիւնն ընդ-  
արձակել, և Աստրին “Կահանզը Պարկայի մասընել,  
և առոր համար Ըստրացնը կամ” լորեն ու Արդաս գա-  
ւառները պատել: Այս փառամիրութեան համելու  
համար պետք եր զառ անելի հարաբիկ, խոչեմ և յա-  
րանեազ լինիլ: Խրաւ և որ Ըստր աներ տապանաց,  
բայց անելի պատերազմի մարդ եր յան թէ քազարա-  
զեա: Կ'ուզեր զառ բան հաստապել, խրախու եր ու փա-  
ռամիր, կամակար ու փափախամիր, Ըստր ահարկու եր  
իր թշնամիներուն, և առելի իր հոգատակներուն: որոց  
զրոյ համար հարկեր պրեր եր, որպէս զի իր արքունեաց  
և պատերազմերու ծախը հոգաց:

Կամի Ըստր Յանկուզն իր բոլոր Շեղը կ'թափէ որ  
Թրանասն պատական (1465—1472): — Ամերան կ'ուբ-  
րեմ Թրանասոյի թագաւորութիւնը, կ'ըսէր նա, որ մէկ  
թագաւորի անզ կ'փափաքէի տառ համ անենել: Ալոք  
Փալի գլմ հետո հետ գաւագրութիւններ կ'կազմէ,  
մինչդեռ թագաւորն է համարձակիր յարհանիլ անոր զրոյ  
և պայմանար երկիրներուն մէջ խոնզութիւններ կ'չա-  
նել: — Ալերկապէս Ըստր Յարմաս ըրտծ իր անօգուտ  
արշաւանձներէն կ'առաջանայ և իր զենքը Գ.երմանիոյ,  
Լորէնի և Զամիցերիոյ զէմ կ'զարձընէ: Այս առեն  
Լոքի Ժալ առասական թշնամութեան զէմ կ'զինի, և  
առանձին զէմ գավանայիցներ կ'հանե այնչափ որ Պատրիոյ-  
նի գործար կործանման կ'հասցընէ:

Հայոց Եպիսկոպոսութեր դաշնակցութեան . — Ի սկզբուն  
Լուի Ժ.Ա. մեծ սիսալներ զործեց և իրեն զէմ  
թշնամիները շատցոց : Մինչեւ անգամ ազնուա-  
կաններն որսորդութեան իրաւունքն զրկեց :  
Անդ թարար վարուեցաւ նաև քաղաքացոց զէմ,  
հարկերն առելցոց և երբ ոյս տրոց ծանրու-  
թեան ստատուատ ժողովուրդն ոտք ելաւ , ա-  
պատամբները խստիւ պատժեց : Հային չորս  
տարի կար որ Լուի Ժ.Ա. զահն ելեր էր և ար-  
դեն ամեն մարդ իրեն զէմ էր : Հինգ հարիւր  
իշխաններ կամ մեծ ամեններ Հայոց Եպիսկոպութեր  
նուն դաշնակցութեան մը կազմեցին : Թագառորին  
եղբայրն (ուէ բիի գուքուը) անգամ , անձարակ  
ու սնափառ երիտասարդ մը , այս դաշնակցու-  
թեան զլուխն եղաւ , թէ և իրօք ամեն կուտա-  
կցութեանց խաղալիկը պիտի զառնար . բոն  
պարագլուխն Շաբակչէ կոման էր : Երրոր Լուի  
Ժ.Ա. այս ապատամբութիւնը աեւառ զգաց իր ը-  
րած սիսալմունքն և իր բոլոր ձիզը թափեց այս  
փոթորկին առաջն առնլու : Իր եղբայրն յայ-  
տարարութիւն մը հաներ էր որով աղջուակա-  
նաց ու ժողովրդեան դանդասները կ' բացատրէր:  
Կախ Լուի Ժ.Ա. անոր պատասխանեց մեծ ամեն-  
ներուն ինքնասիրութիւնն երեան հանելով . և Ե-  
թէ յանձն առնեի , կ' ըսէր , իրենց թռչակին ա-  
ւելցընել և ճոյլ տալ որ առաջուան պէս ի-  
րենց հպատակներն ուստակոխ ընեն , երբէք հա-  
տարակաց բարույն վրայ շսդիտի մասմէին : Ճ  
Բայց Լուի Ժ.Ա. բոլորուին մինակ միալով և  
շորս կողմը զառաճաններ աեւսնելով՝ խոհեմո-  
լիիւն համարեց կոիր զաղբեցընել և Քաջալուէ

դաշտում կնքել , որու մէջ շատ ծանր պայմաններ կային : Այս դաշինքով Նորմանախան եղբօրը կ'առար և միւս իշխաններուն կ'պարզեցը քաղաքներ , պաշտօններ ու սահե : Այսպէս Ֆրանսայի թագառորոշինն այլ և այլ մասերու բաժնուեցաւ : Լուի Փ.Ը. միուրը գրու մրէ մը լուծել չէ թէ զէնքով այլ վարպետ քաղաքացիութեամբ մը :

Բէրէնի մէջ ուսուկացանքն . — Ազնուականները կարծեին թէ յաղթանակը տարած են , բայց գեռ Լուի Փ.Ը. չէ ին ճանչեր : Խստութիւնը թողոց և ժողովրդեան սիրու շահելու համար հարկերը թեթեցուց : Նենդութեամբ , սահեկով ձեռք ձգեց իր տուած բոլոր երկիրներն ու իր թշնամի իշխանուց մէջ երկարաւակութիւնն ցանց , և որպէս զի բոլորավին քակէ անոնց մրարանութիւնը Պուրկոյնի կորու շահէ ու զից և առաջարկեց անոր որ Բէրէն քաղթին մէջ ահանուին : Շարլ յանձն առաւ , և երբ Ք.Ն.Յ.յանի դաշնակցութեան պայմանները չպահանջնելուն ըբարայ կ'իսուակցէին . պատղամառներ եկան իւմաց առաջ որ Լիեէի ժողովուրդն ուոր ելեր էր Լուի Փ.Ը. գործակալներուն զրդութեամբը , թէ թաճէր քաղաքն առեր և բոլոր բնակիշները ֆարդեր են : Երբ Շարլ այս զոմ մկանն առաւ սաստիկ զայրացաւ՝ թաղաւորին այս նենդու պատիր ընթացքն երեսին տուաւ և քիչ մեաց պիտի սպաններ , ըսելով . Պուրկ մէ այս զաստին թագառներն եկաւ զիս տեսնելու որպէս զի խարէ : » Բայց առելի յարմար զատեց Բէրէնի զգե-

